




ԶՄԻԱԾԻՆ



ՀՊԱԿ 146



ԼԲ
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յուլիս — Օգոստոս


1975



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՎԵՆԱՓԱՌԸ



**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ ԼԱՄԲԵԹ
ՊԱԼԱՏՈՒՄ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈՆԱԼԴ ՖՐԵԴԵՐԻԿ ԿՈԳԱՆԻՆ**

(1975 թ. յափսի 21-ին)

Խաչիկ 11, 57

Ձերդ Գերաշնորհություն,

Բարին Աստուած Մեր քայլերը վերստին ուղղեց դեպի ձեր մեծ երկիրը, դեպի ձեր պատմական եկեղեցու կեդրոնը, ուր դուք այս տարեկազմին կոչուեցաք բարձրանալու Քենտրբերիի արքեպիսկոպոսության եւ համայն Անգլիոյ հոգեւոր առաջնորդության գահին վրայ:

Այս պահին յոյժ երջանիկ ենք Մենք նաեւ անձամբ բերելու ձեզի Մեր եւ Հայաստանեայց եկեղեցւոյ յարգալիր ողջոյնը եւ շնորհատրանքները, սրտաբուխ աղօթքով, որ Տէրը Ձեզի շնորհէ երկար տարիներ խաղաղ ու լուսաւոստ հովուապետութեամբ:

Սիրեցեալ եղբայր Մեր ի Քրիստոս, Ձեզի կու գանք քրիստոնէական հնագոյն կեդրոններէն մին հանդիսացող ու գրական Արարատի հայոց աշխարհէն, ուր առաջին իսկ դարուն ու Թադէոս եւ ու Բարթողիմէոս անուանեալները Քրիստոսի Աւետարանին լոյսը բերին եւ ուր Ռ դարու սկիզբը, ու Գրիգոր Լուսաւորչի օրով կազմակերպուեցաւ Հայաստանեայց եկեղեցին եւ հիմնուեցաւ Մայր Աթոռ ու Էջմիածինը:

Հայերը, աշխարհի առաջին քրիստոնէայ ժողովուրդներէն մին, այդ երանելի օրերէն սկսեալ նոր կեանքի կոչուեցան: Աւետարանի լոյսով արգասաւորուեցան անոնց հոգիները, Աւետարանի լոյսով ծաղկեցաւ անոնց մշակոյթը, Աւետարանի լոյսով լեցուեցաւ անոնց մօտ երկհազարամեայ պատմութիւնը:

Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին ոչ իբրեւ արտաքին հանդերձանք, այլ զայն դասուեցան իբրեւ իրենց գոյութեան իմաստ եւ կեանքի

նպատակ, զայն ստեղծագործորեն ապրելով ու արժեքներով իրենց պատմության ընթացքին: Արեւելքի դռներուն առջեւ, բարբարոսության և խաւարի դէմ, հայերը յաճախ իրենց արեւան գնով իսկ պաշտպանեցին քրիստոնէութեան և քաղաքակրթութեան սահմանները, միշտ հաւատալով Պօղոս առաքելի վկայութեան, «զի ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ»:

Այսպէս է որ հայերը և հայ եկեղեցին ռեզնեցին մահը և յաղթեցին իսկ մահուան:

Քրիստոսի յարութեան խորհուրդը միշտ ներշնչող և առաջնորդող ոգի հանդիսացաւ հայ եկեղեցւոյ ու ժողովուրդի համար: Եւ ամէն մահատակութիւն ի վերջոյ պատկուեցաւ վերածնունդով:

Այդպէս պատահեցաւ նաեւ հայ ժողովուրդի մեծագոյն ողբերգութենէն յետոյ, երբ 1915-ին զոհը դարձեր էր Օսմանեան Կայսրութեան ցեղասպանութեան ծրագրին:

Աստուածային արդարութեամբ, մեր ժողովուրդի գերեզմանը դատարկ մնաց և ան նոր կեանքի կոչուեցաւ, դարեր առաջ կործանուած իր ազգային պետութեան վերականգնումով, իր հայրենի վերաշինութեամբ, իր նոր մշակոյթի ծաղկումով և իր մայր եկեղեցւոյ վերակազմակերպմամբ, պատմական կեդրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխաւորութեամբ:

Վաթսուն տարիներ յետոյ, այսօր մեր եկեղեցին և մեր ամբողջ ժողովուրդը, որ ի Սովետական Հայաստան և որ ի ափիոս աշխարհի, երկիւղածութեամբ կը յիշեն իրենց մահատակները և կ'աղօթեն անոնց արդար հոգիներու խաղաղութեան և լուսաւորութեան համար և կը տպասեն որ մեր օրերու քրիստոնէայ թէ ոչ քրիստոնէայ մարդիկ իրենց աղօթքներուն մէջ յիշեն 1915-ին մահատակուած երկու միլիոն հայերը և գործեն այնպէս, որ աշխարհի վրայ երբեք ու ոչ մէկ տեղ նման ողբերգութիւններ չկրկնուին այլեւս:

Կը խորհինք թէ. մանասանդ զՔրիստոս որպէս Աստուած և Փրկիչ դաւանող եկեղեցիները, համաշխարհային Խորհրդի եղբայրութեան մէջ, իրենց նուիրական պարտականութիւնը պիտի նկատեն անձանձրոյթ աղօթելու և աշխատանք տանելու, ի խնդիր մարդկային աշխարհի մէջ արդարութեան և խաղաղութեան պահպանման և ամրապնդման, որով առանել պիտի իմաստաւորուի Էկումենիկ շարժման գոյութիւնը:

Մենք այն համոզումը ունինք, թէ Էկումենիկ շարժումը եկեղեցիներու միութեան իրականացումը հետապնդելու իր ճանապարհին, անհրաժեշտ է որ գործօն կերպով նպաստէ իր բոլոր ուժերով, ազգամիջեան յարաբերություններու մէջ արդար ու խաղաղ գոյակցութեան մթնոլորտի ստեղծման, որը վճռական պայման կը նկատենք նաեւ եկեղեցիներու միութեան գաղափարը կենսագործելու տեսակէտէն:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը լաւատեսութեամբ կը մասնակցի Էկումենիկ շարժումին և կը փափաքի հետզհետէ ստելի ջերմացնել ու սերտացնել իր եղբայրական կապը բոլոր եկեղեցիներու և անոնց հովուապետներուն հետ:

Յոյս ունինք, որ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի այս տարուան Նայրոպիի ընդհանուր համագումարը կ'արեւոր հանգրուան մը պիտի հանդիսանայ Էկումենիկ շարժման զարգացման ճանապարհին:

«Քրիստոս կ'ազատագրէ և կը միացնէ» դատողութիւնը, որ համագումարի հիմնական նիւթն է, Մեզ կը թոյլ շատ իմաստալից, յատկապէս Էկումենիկ տեսակէտէ:

Եթէ փորձենք ողիղ և առարկայական պատասխան մը գտնել այն հարցին, թէ անցեալի մէջ Քրիստոսի եկեղեցին ինչո՞ւ համար բաժան-բա-

ժան եղաւ եւ երբեմն նոյնիսկ բաժանուած եկեղեցիները հակամարտ դիրքերու մէջ գտնուեցան մէկը միւսին հանդէպ, պիտի հաստատենք թէ պատճառներու արմատները կը գտնուին մարդկային տկարութիւններու եւ սխալներու խառնարանին մէջ: Մենք հակուած ենք խորհելու, թէ եկեղեցիները իրարմէ բաժնող աստուածաբանական դիրքաւորումներուն ետեւ թաքնուած մղիչ ուժերը եղած են մարդկային բնութեան յատուկ եասկեղորոն ձգտումները, փառասիրութեան, իշխանամոլութեան, անխանձի եւ սխալ հասկցում ազգային-քաղաքական շահերու:

Մեր օրերուն, երբ տակաւ կը զարգանայ Էկումենիկ ոգին, դէպի իրաւ միութիւն տանող ուղիղ ճանապարհը պիտի ըլլայ ձերբազատումը անցեալի այդ տկարութիւններէն:

Քրիստոսով պէտք է արմատական ազատագրումի գործ կատարուի մեր օրերուն եկեղեցիներու կեանքէն ներս: Ազատագրում հին տկարութիւններէն եւ սխալներէն, որպէսզի ճանապարհը բացուի ճշմարիտ աւետարանական եղբայրութեան եւ համաքրիստոնէական միութեան, Քրիստոսի սիրոյն մէջ: Մենք կը կամենալինք որ նաեւ այս իմաստով մեկնաբանուէր «Քրիստոս կ'ազատագրէ եւ կը միացնէ» դատողութիւնը:

Էկումենիկ ոգոյ բարի օրինակ կը հանդիսանան եղբայրական յարաբերութիւնները, որոնք հետզհետէ զարգացած են մեր երկու եկեղեցիներու միջեւ, անգլիկան եւ հայ եկեղեցիներու միջեւ, ի մասնաւորի մեր դարու առաջին իսկ տարիներէն սկսեալ, ս. Էջմիածինը եւ Երուսաղեմի հայոց պատրիարքութիւնը հանդիսանալով այդ յարաբերութեանց կեդրոնները:

Մօտ մէկ դարեայ այս փորձառութեան վէմին վրայ ամուր կանգնած, մեր եկեղեցին եւ Մայր Աթոռս, ջերմապէս կը փափաքին առաւել ամրապնդել սիրոյ եւ գործակցութեան յարաբերութիւնները մեր եկեղեցիներու միջեւ:

Մեր ներկայութիւնը այստեղ, Ձեր Տանը մէջ, կը խնդրենք որ նկատէք մէկ նոր ապացոյցը Մեր այս մտածումներուն եւ զգացումներուն: Եւ թոյլ տուէք այս պահուն յայտնել նաեւ Մեր գնորհակալութիւնը ուղղեալ Ձերոյ Գերաշնորհութեան եւ Լոնտոնի՝ գերաշնորհ եպիսկոպոսին, այն բացառիկ բարեացական վերաբերմունքի եւ հոգատարութեան համար, զոր կը ցուցաբերէք Լոնտոնի հայ համայնքի եւ մեր ներկայացուցիչ Ներսէս եպիսկոպոսի հանդէպ, որոնք խորապէս երախտապարտ են Ձեզի:

Եւ ինչքան երջանիկ պիտի ըլլանք Մենք, ինչքան երջանիկ պիտի ըլլայ Սովետական Հայաստանի մեր հաւատացեալ ժողովուրդը, եթէ Տիրոջ ողորմութեամբ եւ Ձեր հաճութեամբ, այցի գալիք ս. Էջմիածին, ուր անգամ մը եւս Մեզի առիթը պիտի ընծայուէր Մեր և մեր Աթոռի սէրն ու յարգանքը մատուցելու Ձեզի եւ ձեր մեծ եկեղեցիին:

Թող միշտ անասան մնայ ձեր պատմական մեծ եկեղեցին եւ միշտ լուսաւոր Ձերոյ Գերաշնորհութեան առաքելութեան ճանապարհը:

Եւ «Ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ուղղեսցէ զճանապարհն մեր առ ձեզ» (Թեա. Գ 11): Ամէն:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը սույն թվականի մայիսի 1-ից ձեռնարկեց արտասահման իր տասներորդ հովվապետական ուղևորությանը:

Հայոց Հայրապետը մայիսի 1—28 օրերին ուսմին օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքի և ապա բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքի հրավերներով այցելեց Ռումինիա և Բուլղարիա:

Բուխարեստի և Պլովդիվի հայկական եկեղեցիներում սուրբ պատարագ մատուցեց, իր ողջույնը և օրհնությունը տվեց հայ հավատացյալներին, նախագահեց թեմակալ առաջնորդ տ. Տիրաչը եպս. Մարտիկյանի գլխավորությամբ իր պատվին կազմակերպված ընդունելություններին և պետական մակարդակի հանդիպումներ և տեսակցություններ ունցավ:

Հայոց Հայրապետը հունիսի 5—20 օրերին Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպս. Պոզապալյանի և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի հրավերներով եղավ Լոնդոնում և Փարիզում:

Հունիսի 8-ին Հայոց Հայրապետը ս. պատարագ մատուցեց և կատարեց Լոնդոնի հայոց ս. Պետրոս համայնքային նոր եկեղեցու օծումը:

Հունիսի 15-ին Հայոց Հայրապետը կատարեց Փարիզի արվարձաններից Իսի Լե Մուլինոյի հայոց ա. Աստվածածին նորակառույց եկեղեցու օծումը:

Լոնդոնում և Փարիզում Հայոց Հայրապետի պատվին կազմակերպվեցին համայնքային ընդունելություններ և ճաշկերույթներ:

Լոնդոնում Հայոց Հայրապետը նախագահեց միջեկեղեցական Էկումենիկ հանդիսավոր արարողությունների և հյուրը եղավ Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի, իսկ Փարիզում եղբայրական ջերմ հանդիպումներ ունեցավ Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանսուա Մարտիի ու պապական նվիրակ կարդինալ Ռիկի Լամպրիթիի հետ:

Փարիզում Հայոց Հայրապետը նախագահեց Հայկական բարեգործական ընդհանուր միության երիտասարդաց ընկերակցության «Ալեքս Մանուկյան» նորակառույց մշակութային նոր կենտրոնի բացման հանդիսությանը:

Հունիսի 20—22 օրերին Հայոց Հայրապետն այցելեց Ամման: Հունիսի 22-ին քարոզեց Ամմանի հայոց ա. Թադեոս եկեղեցում և նախագահեց Իր պատվին տրված համայնքային ճաշկերույթին:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի հրավերով հունիսի 22-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը ժամանեց Երուսաղեմ ու կատարեց ա. Հարության տաճարի հայկական մասի նորակերտ սուրբ խորանների օծումը և նախագահեց Ալեքս Մանուկյան նորակառույց Ժառանգավորաց վարժարանի բացման հանդիսությանը:

Հունիսի 29-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը ա. պատարագ մատուցեց Քրիստոսի լույս գերեզմանի վրա և քարոզեց:

Երուսաղեմում գտնված օրերին Հայոց Հայրապետը Էկումենիկ ոգով հանդիպումներ և տեսակցություններ ունեցավ ա. քաղաքի հոգևոր բոլոր պետերի և հարանվանությունների ներկայացուցիչների հետ:


Ամմանում Հայոց Հայրապետն այցելեց Հորդանանի Նորին Վեհափառություն Հուսեյն Բ թագավորին:


Երուսաղեմում Հայոց Հայրապետն այցելեց նաև հանրապետության նախագահ տիար Էֆրայիմ Գաջիրին:

Հայոց Հայրապետն արտասահման կատարած Իր տասներորդ ուղևորությունից Մայր Աթոռ վերադարձավ հուլիսի 8-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

Մայր Աթոռ ա. Էջմիածին,
19-ը հուլիսի 1975 թ.





**Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՏԱՍՆԵՐՈՐԴ ՌԻԼԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր արտասահմանյան տասնև-
որոդ ուղևորության ընթացքին ա/թ. հունիսի 5-ից 20-ը հովվապետական այ-
ցելությամբ եղավ Անգլիայում և Ֆրանսիայում, Մալթա Աթոռ ա. Էջմիածնի և
Իր Սրբության օրհնությունները տանելով անգլիահայ և ֆրանսահայ հավա-
տացյալ ժողովրդին:

Սույն ուղևորության ընթացքին Վեհափառ Հայրապետին ողեկցում էր,
որպես գավազանակիր, «Էջմիածին» ամսագրի խմբագրության քարտուղար
տ. Եզնիկ աբղ. Պետրոսյանը:

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ Լ Ո Ն Դ Ո Ն

Հունիսի 5-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայ-
րապետը Մոսկվայից մեկնում է Լոնդոն:

Շերեմետևոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում
են Մոսկվայում գտնվող հայ հոգևորականներ՝ գլխավորությամբ Մալթա Աթո-
ռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավա-
կայան էին եկել նաև ուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ տ. Պի-
տիրիմ արքեպիսկոպոսը, Մոսկվայում Անտիոքի և Բուլղարիայի օրթոդոքս
եկեղեցիների ներկայացուցիչ հոգևորականները:



ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՎՏ. ԴՈՆԱԼԴ ՖՐԵՂԵՐԻԿ ԿՈԳԱՆԸ

Շերեմետևոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու աշխատողները:

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը**:

Նույն օրը, Լոնդոնի ժամանակով ժամը 12.30-ին, ինքնաթիռը վայրէջք է կատարում Լոնդոնի Հիլթոն օդանավակայանում:

Հայոց Հայրապետին այստեղ ողջունում և բարի գալուստ են մաղթում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպս. Պողապալյանը**, **տ. Պսակ արքեպ. Թումայանը**, Լոնդոնի և Սարգիս եկեղեցու խնամակալության պատվո նախագահ **Սարգիս Քյուրքչյանը**, եկեղեցական և համայնքային խորհրդի նախագահ **Հայկ Աբաջյանը**, եկեղեցական ու համայնքային խորհրդի և ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամները և այլ պաշտոնական անձինք:

Հանուն **Քենտրբերիի արքեպիսկոպոսի**, Վեհափառ Հայրապետի գալուստը Լոնդոն ողջունում է Քենտրբերիի արքեպիսկոպոսարանի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ կանոնիկոս հայր **Մայքլ Մուրը**:

Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու մուտքի առջև անգլիաբնակ հայ հավատացյալները Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում ծափողջույններով:

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի և ս. սեղանի առջև Իր աղոթքը մատուցում Աստծուն, որ Իրեն շնորհեց այդ թանկագին առիթը՝ կրկին անգամ այցելելու Մեծ Բրիտանիա և լոնդոնահայությանը բերելու ս. Էջմիածնի օրհնությունը և Մայր հայրենիքի շունչն ու բույրը:

Հանուն լոնդոնահայության, Վեհափառ Հայրապետին բարի գալուստ է մաղթում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ **տ. Ներսես եպս. Պողապալյանը**՝ խորին շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին լոնդոնահայությանը տված Իր օրհնաբեր այցելության համար:

Այնուհետև ներկաներին Իր անդրանիկ օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ նրանց բաշխելով ս. Էջմիածնի և Իր ողջույնը:

Վերջում բոլոր ներկաները առանձին-առանձին ողջունում են Վեհափառ Հայրապետի գալուստը Լոնդոն՝ համբուրելով Նորին Սուրբ Օծության մեռնաբույր Աջը:

ԲԱՐԻԳԱԼՍՑՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՆՎԱՐԴ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ»
ՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, ժամը 15-ին, Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցուն առընթեր «Նվարդ Կյուլպենկյան» սրահում տրվում է ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ընդունելության ընթացքում կրկին անգամ Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում տ. Ներսես եպս. Պողապալյանը:

Հանուն լոնդոնահայության, Վեհափառ Հայրապետին բարի գալուստ է

մաղթում եկեղեցական և համայնքային խորհրդի նախագահ **Հայկ Աբաջյանը**՝ ասելով.

«Վեհափա՛ն Տեր,

Չերդ Սրբության Լոնդոն այցելությունը մեզ բոլորս կրկին անգամ խրատաւանքով կէցնեն հատկապէս այս կարևոր օրերուն, երբ մեր գաղութի պատմությունը նոր նվաճումով կճոխանա:

Անցած 20 տարիներու ընթացքին մեր գաղութի թիվը ավելի քան տասն անգամ բազմապատկւած է: Կանդրատունանք, որ այս նոր պայմաններուն մեջ առավել աշարքություն և աշխատանքի անհրաժեշտություն պետք է: Այժմ մենք վկաներն ենք մեր գաղութի վերանորոգման՝ դառնալու համար հատաշապահ գաղութ մը մոտ ապագային, և մեր բոլորի ուշադրությունը ուղղված է այս նպատակին:

Կհավատանք, որ հայ եկեղեցին մեծագույն ազդակն է միության, որովհետև ան կբովանդակէ մեր ազգությունը և մեր պատմությունը: Վստահ եղեք, Վեհափառ, որ **Չերդ Սրբության** այս այցելությունը ս. Պետրոս եկեղեցիի օծումով պիտի դառնա խարիսխը մեր գաղութի միության և բարգաւաճման:

Վեհափա՛ն Տեր, Չեր ներկայությամբ մեծապէս պիտի զորացնէք մեր գաղութը և ի մասնավորի լոնդոնահայ համայնքային և եկեղեցական խորհուրդի և տիկնանց օժանդակ մարմինները:

Մեր գաղութի կողմէ, թույլ տվեք, Վեհափառ Տեր, բարի գալուստ մատթել **Չերդ Սրբությանը** և համբուրել **Չեր** սուրբ Աջը ու ստանալ **Չեր** շնորհաբեր օրհնությունը»:

Ի պատասխան ողջույնի և բարիգալուտյան սույն խոսքերի, հայրական ջերմ խոսք է ասում **Վեհափառ Հայրապետը**՝ գոհունակություն հայտնելով բոլոր ներկաներին սրտագին ընդունելության համար, բաշխելով նրանց իր օրհնությունը և մաղթանքները:

«ԼՈՆՏՈՆ» ԱՄՍԱԹԵՐԹԸ

Վեհափառ Հայրապետի Լոնդոն այցելության նախօրյակին լույս ընծայվեց «Լոնտոն» հայկական ամսաթերթի հունիսի համարը՝ ամբողջությամբ նվիրված հայրապետական այցելությանը:

Թերթի ստաջին էջում գլխատառերով գրված է. «ԲՐԻՏԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԿՄԱՂԹԵ ԱԶԳԻՍ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ»:

Թերթում տպագրվել են մի շարք հոդվածներ՝ կապված Վեհափառ Հայրապետի անձի և սույն այցելության հետ՝ ստորագրությամբ Անգլիայի կաթողիկոսական պատվիրակ և Լոնդոնի հոգևոր տեսուչ տ. **Ներսէս եպս. Պոգապալանի**, «Լոնտոն» թերթի խմբագիր **Ասատուր Կյուզեղյանի** և ուրիշների:

Ամսաթերթի խմբագրականում ասված է. «Հայոց մեծագործ Հայրապետը հովվապետական ցուպը ձեռին, մեր մեծ հայրապետներու արյունը երակներուն մեջ, աչքերը հայ ժողովրդի պայծառ ապագայի լույսով աուցուն, կու գայ այցելելու անգլիաբնակ իր հոտը:

Հայոց Հայրապետը հոգեղեն այն կամուրջն է, որ սկիզբ կառնէ Մայր հայրենիքեն ու սրբություն սրբոց սուրբ Էջմիածնեն ու կխարսխալի ամեն հայու սրտին, հոգիին և մտածումներուն մեջ: Ամեն անգամ որ Հայոց Հայ-

րապետը այցելե արտասահման, ազգային գիտակցության, եկեղեցափրության ու հայրենասիրության խարույկ կվառի հայոց սրտերում մեջ:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, թող Ձեր գալուստն իր հետ բերե համազգային գիտակցության, սիրո, եղբայրության սրբազան այն շաղախը, որ մեր պատմության մեջ հաճախ եկած է Մայր Աթոռ ու Էջմիածնեն:

Թող Աստված Հայոց մեծագործ Հայրապետին տա արևշատություն, որպեսզի Նորին Սրբության հայրական իմաստուն հովանիին տակ ավելի ևս ծաղկի և պայծառանա հայ եկեղեցին և Լուսավորչի կանթեղին յուրը շող ու համայն հայության սրտին մեջ»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հունիսի 6-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, Լոնդոնի «Մայլսթոն» հյուրանոցի սրահներից մեկում **Վեհափառ Հայրապետը** հանդիպում է ունենում Լոնդոնի ու Սարգիս եկեղեցու հոգաբարձության անդամների հետ՝ գլխավորությամբ պատվո նախագահ **Սարգիս Քյուրքչյանի** և նախագահ **Վահան Կյումիշուջյանի**: Հանդիպման ժամանակ քննարկվում են մի շարք եկեղեցական հարցեր:

Այնուհետև, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, նույն սրահում տրվում է ճաշերույթ ու Սարգիս եկեղեցու խնամակալության կողմից:

ԸՆԴՈՒՆ ԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 7-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետին** ու Սարգիս եկեղեցու հովվատանն այցելում է Անգլիայի կաթոլիկ եկեղեցու պապական նվիրակ սրբազան **Հեյմ** արքեպիսկոպոսը:

Նույն օրը, ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում և բարի գալուստ մաղթում Անգլիայի կաթոլիկ եկեղեցու պետ կարդինալ **դոկտ. Հեռնանը**:

Նույն օրը, ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետին** են այցելում Լոնդոնի եպիսկոպոս **Ջերալդ Էլիսոնը** և Քենսինգթոնի եպիսկոպոս **Ռոնալդ Գուդչայլդը**՝ բարի գալուստ մաղթելու Նրան:

Նույն օրը, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Քյունից ժամանած հայ ազգային-համայնքային գործիչներ **Քլեյսանին** և **Մովսեսյանին**, որոնք զեկուցում են Հայոց Հայրապետին Գերմանիայի հայ գաղութի, եկեղեցական կյանքի ու հոգևոր հովիվ ունենալու անհրաժեշտության մասին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ

Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԻ ՕԾՈՒՄԸ

Հունիսի 8-ին, կիրակի օրը, պատմական մի իրադարձություն եղավ լոնդոնահայության համար:

Նորին Սուրբ Օծություն **Ս. Ս. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը** օծումն է կատարում Լոնդոնի ու Պետրոս եկեղեցու խորանի: Լոնդոնահայությունն ունենում է իր երկրորդ հայկական եկեղեցին:

Ս. Պետրոս եկեղեցին, որ իր մեծությամբ ու շքեղությամբ հույսկապ մի տաճար է, լոնդոնահայության կողմից գնվել է անգլիկան եկեղեցուց և այժմ Վեհափառ Հայրապետի օծումով վերածվեց հայկական եկեղեցու:

Առավոտյան ժամը 11-ին սկսվում է եկեղեցական արարողությունը: Վեհափառ Հայրապետը օծում է տաճարի սուրբ խորանը և Էջմիածնից բերված մարմարե մի խաչքար տեղադրում խորանի վրա:

Այնուհետև սկսվում է սուրբ պատարագը: Պատարագում է Հայոց Հայրապետը: Ս. Սեդակին սպասարկում են **տ. Ներսես եպս. Պողոսյանը**, **տ. Եզնիկ, տ. Հակագուն** արեղաները, սարկավագներ, դպիրներ:

Ս. պատարագին ներկա են լինում Քենսիկգթոնի եպիսկոպոս **Ռոնադ Գուշալյը**, կաթոլիկ և այլ եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հայ և օտար մտավորականներ, թղթակիցներ, ինչպես նաև լոնդոնահայ եկեղեցական խորհրդի անդամները և ավելի քան հազար հայ հավատացյալներ:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Քենսիկգթոնի **քաղաքապետ** **Ռոնադ Հայր մեր**»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում **Վեհափառ Հայրապետը**: Նորին Սրբությունը նախ իր գոհունակությունն է հայտնում լոնդոնահայ համայնքին և այն նախաձեռնության համար՝ մի նոր հայկական եկեղեցի ստեղծելով Լոնդոն քաղաքում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն անդրադառնում է սփյուռքահայության կյանքի հետ կապված մի շարք խնդիրների, նշում այն դժվարությունները, որ ունենում են սփյուռքահայերն իրենց կյանքում, և շնչոտում եկեղեցու դերը սփյուռքում ազգապահպանման գործում:

Վեհափառ Հայրապետն իր քարոզի մեջ պատգամում է լոնդոնահայությանը, մեկ սիրտ և մեկ հոգի, համախմբվել իր երկու՝ **ս. Սարգիս և ս. Պետրոս եկեղեցիների** շուրջը և միշտ շրջապատելու ու օժանդակելու իրենց առաջնորդ **տ. Ներսես սրբազանին**:

Քարոզի ավարտին Նորին Սրբությունը, ի գնահատություն **տ. Ներսես եպս. Պողոսյանի** ծավալած հոգևոր, եկեղեցական գործունեության, նրան նվիրում է եպիսկոպոսական մատանի:

Ս. պատարագից հետո ներկա քարձրաստիճան հյուրերը ընդունելության են հրավիրվում «Նվարդ Կյուպեմկյան» սրահ, ուր տեղի է ունենում ճաշկերույթ, պատրաստված տիկնանց հանձնախմբի կողմից:

Ճաշկերույթի ընթացքում քարձրաստիճան հյուրերը սրտագին արտահայտություններ են ունենում հայ եկեղեցու արարողությունների մասին, միևնույն ժամանակ շնորհավորելով **Վեհափառ Հայրապետին** և լոնդոնահայությանը՝ **ս. Պետրոս եկեղեցու** բացման երջանիկ առթիվ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՇԿԵՐՈՒՅԹ «ՌՈՅԱԼ ԳԱՐԴԸՆ» ՀՅՈՒՐԱՆՈՅՈՒՄ

Հունիսի 8-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 19-ին, «Ռոյալ Գարդեն» հյուրանոցի մեծ սրահում տեղի է ունենում համայնքային ընդունելություն-ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Վեհափառ Հայրապետի:

Սույն ընդունելություն-ճաշկերույթը կազմակերպվել էր լոնդոնահայ եկեղեցական խորհրդի և ս. Սարգիս եկեղեցու խնամակալության կողմից:

Ընդունելության սույն սեղանը ղեկավարում էր «Լոնտոն» թերթի խմբագիր **Ասատուր Կյուզելյանը**, որը բաժակ է քարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը՝ հիշելով, որ «Վազգեն կաթողիկոս Էջմիածինը բերավ սփյուռքի ամեն հայերու սրտերում, Էջմիածնի լույսը, շունչը, հոգին սփռեց Հնդկաստանն մինչև Ամերիկա»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ողջոված ողջույնի և որդիական

ակնածանքի արտագին խոսքեր են ասում ս. Սարգիս եկեղեցու խնամակալության պատվո նախագահ **Սարգիս Քյուրքչյանը**, լոնդոնահայ համայնքային և եկեղեցական խորհրդի նախագահ **Հայկ Աբաջյանը**, ծանոթ ազգային **Գևորգ Թահթան**, Հայկական բարեգործական ընդհանուր միության Լոնդոնի մասնաճյուղի կողմից՝ **դոկտ. Արա Դանիելյանը**, լոնդոնահայ մի շարք ազգային կազմակերպությունների կողմից՝ **Հայկ Սարոյանը**, **դոկտ. Գրիգոր Կորկոտյանը**, **Կարպիս Եսայանը**, **Ժիրայր Ազիրյանը**, **Բագրատ Դանիելյանը**, **Վարդան Մանուկյանը**, ս. Գրիգոր և ս. Սարգիս ասպետների կարգի կողմից՝ **Նուրհան Կուրտիկյանը**, «Անահիտ» միության կողմից՝ **տիկ. Սրբուհի Մանուկյանը** և Տիկնաց օժանդակ հանձնախմբի կողմից՝ **տիկ. Ֆլորա Աբաջյանը**:

Ընդունելության ընթացքում շնորհալի ջուրթականար **Լևոն Զիլինգիրյանը** կատարում է Կոմիտաս վարդապետի «Ծիրանի ծառ»-ը, «Կաքավիկ»-ը և Արամ Խաչատրյանի «Երգ-պոեմ»-ը՝ դաշնամուրի ընկերակցությամբ **օր. Արաքսի Բոյաջյանի**:

Սիրված երգչուհի **օր. Մարի Պողապալյանը** կատարում է ժողովրդական «Կիլիկիա» և Կոմիտասի «Կոունկ» երգերը՝ դաշնամուրի ընկերակցությամբ **օր. Արաքսի Բոյաջյանի**, որը առանձին դաշնամուրի վրա կատարում է նաև Ռախմանինովի 12-րդ պրելյուդը:

Ընդունելության ավարտին հրավիրվում է Վեհափառ Հայրապետը՝ ասելու Իր օրհնության խոսքը շուրջ 300 ներկաների:

Նորին Սրբությունը շնորհակալություն է հայտնում սույն ընդունելության և Իր անձին ուղղված որդիական սիրո խոսքերի համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն Իր օրհնությանը և գնահատանքին է արժանացնում լոնդոնահայությանը՝ նրա եկեղեցական, ազգային, մշակութային գործունեության համար, որը տարվում է Լոնդոնում, և որի վստարտահայտություններից մեկն է նաև համայնքային ընդունելությունը:

Սույն ճաշկերույթ-ընդունելությունն ավարտվում է միասին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

Փ Ո Ւ Ն Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հունիսի 9-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը փոխայցելություններ է տալիս Անգլիայի կաթոլիկ եկեղեցու կարդինալ **դոկտ. Հեռնանին** և պապական նվիրակ **Հեյմ սրբազանին**:


Վեհափառ Հայրապետին ողնկցում էին տ. Ներսես եպս. Պողապալյանը և տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը ներկա է լինում ս. Գրիգոր և ս. Սարգիս ասպետների խմբի կողմից կազմակերպված և Իրեն ի պատիվ տրված ճաշկերույթին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հունիսի 10-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 16-ին, Հայոց Հայրապետը այցելություն տվեց Լոնդոնի եպիսկոպոս **Ջերալդ Էլիսոնին**:

Վեհափառ Հայրապետին ողնկցում էին տ. Ներսես եպս. Պողապալյանը և տ. Եզնիկ, տ. Հայկազուն արեղաները:



Եպիսկոպոսարանի մուտքի առջև Վեհափառ Հայրապետին դիմավորում է Լոնդոնի եպիսկոպոսը, իր տիկնոջ հետ, և Նորին Սրբությանն առաջնորդում ընդունելության սրահ:

Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում նաև Քենսինգթոնի եպիսկոպոս Ռոնալդ Գուդչայդը, իր տիկնոջ հետ, Քենտրքերիի արքեպիսկոպոսարանի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ հայր Մաքլ Մուրը, Լորդերի պալատի անդամ Նորման Անդերսոնը և այլ անձինք:

Վեհափառ Հայրապետի և Լոնդոնի եպիսկոպոսի միջև տեղի է ունենում նվերների փոխանակում:

Այնուհետև ներկաները հրավիրվում են թեյասեղանի:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒԵՍԹՄԻՍԹԸՐ ԱԲԲԱՅԱՐԱՆԻ ՏԱԾԱՐ

Նույն օրը, երեկոյան ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Լոնդոնի Թագավորական Ուեսթմինսթեր աթոռարանի տաճար:

Տաճարի բակի մուտքի առջև Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում տաճարի լուսարարապետը:

Այնուհետև եկեղեցական թափոքով Հայոց Հայրապետն առաջնորդվում է տաճար, ուր տեղի է ունենում էկումենիկ արարողություն:

Արարողության ընթացքում Ուեսթմինսթեր աթոռարանի լուսարարապետը ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը և Նորին Սրբությանը նվիրում, իբրև հիշատակ, նույն տաճարի պատմության գիրքը:

Ապա օրհնության խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով տաճարի լուսարարապետին սույն ջերմ ընդունելության համար:

Էկումենիկ արարողության ավարտին լուսարարապետը Հայոց Հայրապետին առաջնորդում է խորան որի ետևում թաղված է տաճարի հիմնադիր Էդվարդ Խոստովանող թագավորը, և ուր տեղադրված է թագավորական պատմական գանդ:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում Էդվարդ Խոստովանողի գերեզմանի առջև:

Եկեղեցու Գավթում Հայոց Հայրապետը նույնպես «Հոգւոց» է արտասանում առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում զոհված անգլիացի մարտիկների հուշարձան-գերեզմանի առջև:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ԿՈՆՏԻՆԵՆՏԱԿ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Լոնդոնի «Կոնտինենտալ» հյուրանոցում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում ողջերթի ընդունելություն-ճաշկերույթ՝ կազմակերպված Լոնդոնի համայնքային եկեղեցական խորհրդի և տիկնանց օժանդակ մարմնի կողմից:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղված ջերմ խոսք են ասում տ. Ներսես եպս. Պոզապայանը, Հայկ Աբաջյանը, Հակոբ Փալամուդյանը, Հարություն Այվազյանը, Տիրան Ուզունյանը և Տիկնանց օժանդակ մարմնի ատենապետուհի տիկ. Ֆլորա Աբաջյանը:

Համայնքային և եկեղեցական խորհրդի անդամները Վեհափառ Հայրապետին են ընծայում արծաթյա գեղեցիկ մի սկիհ:

Օր. Մարի Պոզապայանը երգում է «Ծիրանի ծառ» և «Ծիծեռնակ» երգերը:

Վերջում Նորին Սրբությունն Իր օրհնությունն է տալիս բոլոր ներկաներին՝ բաշխելով նաև ս. Էջմիածնի խաչիկներ, իբրև հիշատակ:

ԱՅՅ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունիսի 11-ին, չորեքշաբթի օրը, ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետը** քաղաքավարական այցելություն է տալիս Մեծ Բրիտանիայում Սովետական Միության դեսպանատուն:

Վեհափառ Հայրապետին ողնկցում էին տ. Ներսես եպս. Պոզապայանը և տ. Եզնիկ աթղ. Պետրոսյանը:

Դեսպանատան մուտքի առջև **Վեհափառ Հայրապետին** ընդունում և բարի գալուստ է մաղթում առաջին քարտուղար **Ա. Ս. Պարաստանը**:

Ընդունարանում **Վեհափառ Հայրապետին** ողջունում է Մեծ Բրիտանիայում Սովետական Միության դեսպան **Ն. Մ. Լունկովը**:

Մեծահարգ դեսպանի և Հայոց Հայրապետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԱՄԲԵԹ ՊԱԼԱՏ

Հունիսի 11-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, **Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Լամբեթ պալատ՝ Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտոր **Ֆրեդերիկ Դոնալդ Կոզանին**:

Սույն այցելության ընթացքում Հայոց Հայրապետին ողնկցում էին տ. Ներսես եպս. Պոզապայանը, տ. Եզնիկ աթղ. Պետրոսյանը և տ. Հայկազուն աթղ. Նաջարյանը, ինչպես նաև լոնդոնահայ համայնքային եկեղեցական խորհրդի նախագահ Հայկ Աբաջյանը՝ իր տիկնոջ հետ:

Լամբեթի պալատի շքամուտքի առաջ Հայոց Հայրապետին դիմավորում և ողջունում է Քենտրբերիի արքեպիսկոպոսարանի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ կանոնիկոս հայր Մայքլ Մուրը և Նորին Սրբությանը առաջնորդում ընդունարան, ուր Նրան ողջունում և բարի գալուստ է մաղթում Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Դոնալդ Կոզանը՝ իր տիկնոջ հետ:

Հայոց Հայրապետը կրկին անգամ շնորհավորում է դոկտ. Կոզանին՝ Քենտրբերիի արքեպիսկոպոս ընտրվելու առթիվ, և նրան նվիրում բյուրեղապակյա մի ծաղկաման՝ ս. Էջմիածնի տաճարի պատկերով:

Հայոց Հայրապետն այս առթիվ վարդապետական լանջախաչ է նվիրում նաև կանոնիկոս Բ. Մայքլ Մուրին:

Ժամը 18-ին Լամբեթ պալատի եկեղեցում տեղի է ունենում Էկումենիկ արարողություն, որի ընթացքում պաշտոնական ճառեր են փոխանակվում Քենտրբերիի արքեպիսկոպոսի և Հայոց Հայրապետի միջև (Հայոց Հայրապետի ճառը տես «Էջմիածին», սույն համարում, էջ 3):

Ժամը 19-ին Քենտրբերիի արքեպիսկոպոսն ընդունելություն-ճաշկերույթ է տալիս Հայոց Հայրապետի պատվին, որին ներկա են լինում շուրջ քսան հրավիրյալներ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ԼՈՆԴՈՆԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 12-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Լոնդոնին և մեկնում Փարիզ:


Ս. Սարգիս եկեղեցում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պողոսյայանը, համայնքային վարչության և ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամներ և բազմաթիվ հայ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետը աղոթում է ս. Սեդակի սուշև և հավատացյալներին տալիս իր օրհնությունն ու ապա հրաժեշտ տալիս Լոնդոնին:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են տ. Ներսես սրբազանը, Քենսինգթոնի եպիսկոպոսը, օտար հարանվանությունների ներկայացուցիչներ, համայնքային ու եկեղեցական խորհրդի և ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամներ ու այլ անձինք:

Վեհափառ Հայրապետին օդանավակայանում ճանապարհում է նաև Մեծ Բրիտանիայում Սովետական Միության դեսպանատան պաշտոնյա Բ. Վ. Ալեքսանդրին:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հունիսի 16-ին հինգշաբթի օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Փարիզ՝ ուղեկցությամբ տ. Եզնիկ աբեղայի:

Օրիկի օդանավակայանում **Վեհափառ Հայրապետին** ողջունում և բարի գալուստ են մաղթում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. **Սերովբե արքեպ. Մանուկյանը**, հայրապետական պատվիրակի փոխանորդներ տ. **Հակոբ եպս. Վարդանյանը՝ Մարսելից, տ. Գյուտ եպս. Նազաշյանը** և ֆրանսահայ հոգևորականաց դասը, ֆրանսահայ կրոնական ընկերակցության անդամները, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ և բազմաթիվ հավատացյալներ:

Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում նաև հունաց միտրոպոլիտ **Մելիսիոս եպիսկոպոսը**, Փարիզի կարդինալ **Մարտիի** ներկայացուցիչ **հայր Ռոբը**, հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ տ. **Նիկողոս Ժ. վրդ. Քեհայանը**, նույն օրը Փարիզ ժամանած **Վենետիկի Մխիթարյան** միաբանության ընդհանուր աթոռակալ **հ. Սերովբե վրդ. Ագլյանը**, Սևրի Մուրադյան վարժարանի տեսուչ **հ. Խորեն վրդ. Տիիզյանը**, նույն վարժարանի ուսումնապետ **հ. Ռաֆայել Անտոնյանը** և ուրիշներ:

Հանուն ֆրանսիական կառավարության, Հայոց Հայրապետին ողջունում է Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի ներկայացուցիչ **Ժան Լարշեն**:

Վեհափառ Հայրապետի գալուստը Փարիզ ողջունում է նաև Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանատան առաջին քարտուղար **Հենրիկ Լիդյանը**:

Օդանավակայանի պատվո սրահի մուտքի առջև երկու փոքրիկ հայ

աղջնակներ վեհափառ Հայրապետին են մատուցում հյուրասիրության
ալանդական աղն ու հացը:

Այնուհետև վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Փարիզի Հայոց և
Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

Վեհափառ Հայրապետին առաջնորդում և ողեկցում էին ֆրանսիական
կառավարության կողմից նշանակված պատվո ուսուցիչներ և Ֆրանսիա-
յի արտաքին գործերի մինիստրության օտար բարձրաստիճան հյուրերի
ապահովության բյուրոյի պաշտոնյաներ:

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի:
Նորին Սուրբ Օծությանը, հանուն ողջ ֆրանսահայության և Արևմտյան
Եվրոպայի հայ եկեղեցիների և համայնքների, բարի գալուստ է մաղթում
ու. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Այնուհետև վեհափառ Հայրապետը նախ Իր օրհնությունն է տալիս
բոլոր ներկաներին, ապա, անդրադառնալով այս տարի Եղեռնի 60-ամյակի
տոնակատարությանը, նշում է. «Կիրթհիմք թե Հայոց Կաթողիկոսը պետք էր
Հայաստանն հետո Իր ձեռքը դներ արտասահմանի հայ ժողովուրդի բազ-
կերակին վրա»: Այնուհետև Հայոց Հայրապետը կարևորությամբ կանգ առ-
նելով Հայաստանում՝ ա. Էջմիածնում և Երևանում, Եղեռնի 60-ամյակի ոգե-
կոշման հանդիսությունների վրա, ավելացնում է. «Անցյալի մեջ նահատակ-
ված ազգ մըն ենք, որ այսօր ունինք վերածնված հայրենիք մը: Եղեռնի
վաթսուամյակը մեզ բոլորս պիտի համախմբե այդ հայրենիքին շուրջ:
Պիտի մոռանք երկրորդականը, կենտրոնանալու համար հիմնական
հարցերու վրա»:

Իր խոսքի վերջում վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն է
հայտնում ֆրանսահայությանը այս ջերմ դիմավորման համար, ապա Իր
շնորհակալությունը՝ հունաց միտրոպոլիտին, կարդինալի ներկայացուցիչ
հայր Ռոբին, Մխիթարյան հայրերին և բոլոր նրանց, որոնք Իրեն դիմա-
վորեցին օղանավակալանում: Այնուհետև Հայոց Հայրապետը Իր խորին
շնորհակալությունն է հայտնում ասպետական Ֆրանսիային, նրա ժողովրդին
և կառավարությանը, որի հովանու տակ հայ ժողովուրդը ապրում է խաղաղ
և բարգավաճ՝ կազմակերպված իր եկեղեցական, ազգային ու մշակութա-
յին կյանքով:

Այնուհետև Հայոց Հայրապետն առաջնորդվում է առաջնորդարան, որ
հայ հավատացյալներն աջահամբույրով ստանում են Նրա օրհնությունը:

ԸՆԴՈՒՆ ԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հունիսի 18-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Փարիզի հայոց առաջնոր-
դարանում վեհափառ Հայրապետին են այցելում Փարիզի կարդինալ
Ֆրանսուա Մարտին և պապական նվիրակ Ռիկի Լամպերթին:**

Հայոց Հայրապետի և բույր եկեղեցու բարձրաստիճան հոգևոր պետե-
րի միջև տեղի է ունենում ջերմ գրույց էկումենիկ ոգով:

Ապա Հայոց Հայրապետը բարեհաճում է ընդունել Ֆրանսիայի և
Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներից ժամանած հոգևորականների և
եկեղեցական վարչության ներկայացուցիչների ու անհատ ազգայինների
այցելությունները:

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ
ԱԾԽԱՐՀԱԿԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ԺՈՂՈՎ ՓԱՐԻԶՈՒՄ**

Հունիսի 13—14-ին, ուրբաթ և շաբաթ օրերը, Փարիզի հայոց առաջնորդարանում գումարվում է խորհրդակցական ժողով՝ Արևմտյան Եվրոպայի հայ եկեղեցիների հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների մասնակցությամբ, նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Խորհրդակցական ժողովը սկսվում է Տերունական աղոթքով:

Բացման խոսք է ասում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Այս ներկաներին Իր պատգամն ու օրհնությունն է ուղղում Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով նրանց կատարած աշխատանքի կարևորությունը և անհրաժեշտությունը սփյուռքահայության հոգևոր, բարոյական և ազգային նկարագրի ստեղծման և պահպանման գործում:

Հոգևոր հովիվների և վարչական մարմինների պարտականությունների և հարաբերությունների մասին զեկուցում է կարդում տ. Գյուտ եպս. Նազաշյանը:

Այնուհետև սկսվում է ժողովի խորհրդակցական մասը:

Երկու օրվա ընթացքում քննարկվում և լուծում են գտնում շատ կարևոր հարցեր՝ կապված Արևմտյան Եվրոպայի հայ եկեղեցիների ներքին կյանքին:

Վերջում դարձյալ Իր օրհնությունը բոլոր ներկաներին է բաշխում Վեհափառ Հայրապետը և նրանց բաժանում փոքրիկ հիշատակներ՝ բերված յ. Էջմիածնից:

Խորհրդակցական ժողովը փակվում է միասին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՓԱՐԻԶԻ
«ԻՆՏԵՐԿՈՆՏԻՆԵՆՏԱԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ**

Հունիսի 14-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, Փարիզի «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցում տեղի է ունենում համայնքային ընդունելություն-ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը մասնակցում են շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում նաև ԱՄՆ-ից Փարիզ ժամանած Հայկական բարեգործական ընդհանուր միության ցկյան նախագահ տիար Ալեքս Մանուկյանը՝ իր տիկնոջ հետ:

Ընդունելություն-ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղված ողջույնի և որդիական ակնածանքի խոսքեր են ասում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Մխիթարյան միաբանության ընդհանուր աթոռակալ Բ. Սերովբե վրդ. Ագլյանը, Ալեքս Մանուկյանը և Սեդրակ Բարյանը:

Ռազմիկ Աբրահամյանն արտասանում է Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» և Սարմենի «Հայու տունը» բանաստեղծությունները:

Տիկ. Է. Ալեքսյան ժամ Մարի Տիգրան Բաղդուն դաշնամուրի վրա նվագում է հատվածներ Կոմիտասից և Գոհար Ղազարույանից:

Ընդունելություն-նաշկերությանի ավարտին հրավիրվում է Վեհափառ Հայրապետը՝ իր պատգամը և օրհնությունը տալու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհակալությունն է հայտնում սույն ընդունելության համար, ապա ներկաներին բաշխում Աստուծո օրհնությունը և. Էջմիածնից, ողջույնները Մայր հայրենիքից և, իբրև գերագույն պարտականություն, կոչ է անում ներկաներին չտկարանալ երբեք ազգապահպանման ճանապարհի վրա, միշտ ամուր պահել քրիստոնեական հավատքը, հավատարիմ մնալ և. Էջմիածնին, պահպանել մայրենի լեզուն և ազգային ավանդություններն ու սրբությունները:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, հանուն Ֆրանսահայ ժողովրդի, շնորհակալության և երախտագիտության խոսք է ուղղում ապետական Ֆրանսիային, նրա ազնիվ ժողովրդին և հայ ժողովրդի հանդեպ բարյացակամ նրա կառավարությանը:

Սույն ընդունելությունն ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

Բոլոր ներկաները մոտենում են Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով հրաժեշտ տալիս Նորին Սրբությանը:

ԻՍԻ ԼԵ ՄՈՒԿԻՆՈՅԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Հունիսի 15-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, տեղի է ունենում Փարիզի Իսի Լե Մուլինո արվարձանի լորսկառույց հայկական եկեղեցու օծումը:

Իսի Լե Մուլինոյի եկեղեցու կառուցման համար կատարված հանգանակությանը մեծ նվիրատվությամբ մասնակցել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահ Նորհան Ֆրեճկյանը:

Իսի Լե Մուլինոյի քաղաքապետը և քաղաքապետական խորհուրդը, ի պատիվ նորած եկեղեցու և Վեհափառ Հայրապետի Փարիզ այցելության, այն փողոցը, ուր եկեղեցին է գտնվում, կոչել են Երևան փողոց:

Եկեղեցու օծման արարողությանը ներկա են գտնվում տարբեր հարանվանությունների ներկայացուցիչներ, Ֆրանսիական կառավարության ներկայացուցիչներ, բազմաթիվ հրավիրյալներ և հայ հավատացյալների մի հոծ բազմություն:

Եկեղեցու օծումը կատարում է Վեհափառ Հայրապետը՝ և. Էջմիածնից բերված մի խաչքար գետեղելով եկեղեցու և. խորանին:

Այնուհետև նորած եկեղեցու խորանի վրա անդրանիկ պատարագն է մատուցում տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով Իսի Լե Մուլինոյի հայ ժողովրդին նրա ազնիվ նախանձախնդրության և սեփական եկեղեցի ունենալու ջանքերի իրականացման համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեմաղթում է Իսի Լե Մուլինոյի և Մարիամ Աստվածածին եկեղեցուն անխափան և օգտաշատ գործունեություն՝ տեղի հայ հավատացյալների ազգային ոգու պահպանման և քրիստոնեական հավատքի անսասանության համար:



ՕՏՈՒՄ ԻՄԻ ԼԵ ՄՈՒԼԻՆՈՅԻ Ս. ԱՅՍՎԱՍԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՓԱՐԻԶ

ՕՇՈՒՄ,

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

6, Ավրենյու Պարկե

Կիրակի. 15 Յունիս 1975 - առաւօտեան ժամը 9,30-ին

ՕՇՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՋԴԻՆ Ա.

ՊԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿՆԸ ՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏՐԱՐԿԸ ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԸ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՇ Տ. ՍԵՐՈՎԸՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՊՈՒՆ ՊԱՏՈՒՐԱԿ

Կը հրաւիրուի ձեր ժողովուրդը խոտնեցած եկեղեցի գտնուիլ բացառիկ այս հանգիստը:

CONSÉCRATION DE L'ÉGLISE ARMÉNIENNE d'Issy-les-Moulineaux

Par

Sa Sainteté VASKEN 1^{ER}

CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS

le Dimanche 15 Juin 1975 à 9 h 30

La Première Messe sera célébrée par

Son Eminence Monseigneur Sérobé MANOUKIAN

Archevêque des Arméniens de Paris

A cette occasion exceptionnelle nous prions nos fidèles de venir très nombreux

Eglise Arménienne
6, Av. Bourgain
Issy-les-Moulineaux

(Métro: Mairie d'Issy)

Նույն օրը, ժամը 14-ին, Փարիզի «Պլացա Աթենե» հյուրանոցի սրահ-ներինց մեկում տեղի է ունենում «աշկերույթ» Իսի Լե Մուլինոյի ու Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման առթիվ:

Աշկերույթին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը, Ֆրանսիայի հայ հոգևորականաց դասը, Իսի Լե Մուլինոյի ու Մարիամ Աստվածածին եկեղեցու ճարտարապետ-նկարիչները և եկեղեցու հոգաբարձությունը, Փարիզի համայնքային-եկեղեցական խորհրդի անդամները:

Ճաշկերույթի ընթացքում նորաօժ եկեղեցու կառուցման մանրամասն պատմությունն է ներկայացնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերուբե արքեպ. Մանուկյանը:

Այնուհետև խոսք է տրվում տ. Եզնիկ արք. Պետրոսյանին, որը, արտահայտելով իր առաջին տպավորությունները, շեշտում է, որ ափսոսքը, որպես եկեղեցի և ժողովուրդ, երբեք չի կորչի, եթե կապված մնա ամրապես ս. Էջմիածնին և Մայր հայրենիքին:

Ճաշկերույթի վերջում գնահատանքի և օրհնության խոսք է ասում Վեհապատ Հայրապետը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԱՐԻԶԻ
ՄԱՍՆԱԺՅՈՒՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ «ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Հունիսի 15-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 17-ին, տեղի է ունենում Փարիզի «Ալեքս Մանուկյան» մշակութային կենտրոնի նորակառույց շենքի բացումը:

Սույն հանդիսության հետ մեկտեղ նշվում է նաև տիար Ալեքս Մանուկյանի, որպես Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահի, քսանամյա գործունեության տոնակատարությունը՝ ներկայությամբ պատվարժան ու մեծահամբավ բարերարի և նրա ազնվափայլ տիկնոջ՝ Մարի Մանուկյանի:

Հանդիսությանը նախագահում է Ամենայն Հայոց Վեհապատ Հայրապետը:

Մուտքի դռան առջև, հանդիսավոր իրադրության մեջ, Վեհապատ Հայրապետը և Ալեքս Մանուկյանը կտրում են կարմիր ժապավենը, և նորակառույց մշակութային կենտրոնը բաց է անում իր դռները ներկաների առջև:

Հանդիսության բացումը կատարում է Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի շրջանային մասնաճյուղի ատենապետ Նուրհան Ֆրենկյանը:

Ապա ֆրանսերեն լեզվով զեկուցումով հանդես է գալիս գրագետ, պատմաբան և լրագրող Ժան Մարի Գառզուն՝ նշելով անցյալում հայ ժողովրդի ապրած տառապալից կյանքն ու վեր հանելով Հայկական բարեգործական ընդհանուր միության կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Հայերեն լեզվով զեկուցումով հանդես է գալիս Հայկական բարեգործական ընդհանուր միության Փարիզի երիտասարդաց ակումբի ատենապետ Արման Նշանյանը:

Այնուհետև ամբիոն է հրավիրվում Հայկական բարեգործական ընդհանուր միության ցկյանն նախագահ տիար Ալեքս Մանուկյանը՝ իր սրտի խոսքը ասելու:

ՀԱՅԿԱԿԱՆ Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
ԽՈՍՔԸ

«Վեհապատ Տեք,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգևոր Հայրեր,

Հարգելի Հյուրեր և սիրելի Սեղանակիցներ,

Ահա պատմական և հոգեպարար առիթ մը ևս սփյուռքի հայության համար: Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահեն իջնելով՝ Իր հեռավոր հոտին այցի եկած է Ամենայն Հայոց առաքինազարդ Հայրապետը:

Ժամանակները փոխված են հիմա և ավելի բախտավոր դարաշրջանի մը մեջ կապրինք բոլորս. այնքան արյունոտ ողբերգություններն ետք՝ այսօր դարձյալ վերականգնած է հայ ժողովուրդը սփյուռքի մեջ թե հայրենիքի:

Ամեն փոխադարձ այցելություն՝ բերկրանքի առիթ մըն է մեզի, մեր վերապրումը հաստատող գեղեցիկ փաստ մը:

Արտասահմանի հայությունը այսօր ցնծությամբ կողջունե իր սիրելի Հայրապետը, միևնույն այն ցնծությամբ, որով մեր նախահայրերը ընդունած էին մեր եռամեծ հայրապետները դարերու ընթացքին:

Բոլոր ժամանակներուն ալ ս. Էջմիածինն ու անոր գահակալը հոգևոր և ազգային առաջնորդության պայծառ ջահեր հանդիսացած են:

Դարերով աղոթեցինք և աղերսեցինք. սակայն, մեր աղերսանքներեն ավելի մեր ժողովուրդին ստեղծագործ ճիգերով ոտքի կանգնեցավ հայրենիքը. անոր ներշնչումով ոտքի կանգնեցավ նաև սփյուռքահայությունը. իսկ այդ կենդանի երկու իրականությունները իրար կապող կամուրջը դարձավ սուրբ Էջմիածինը:

Արյան հեղեղներեն ու տխուր ժամանակաշրջաններեն վերջ, երբ խաղաղության աղավնին թառ կ'փնտրեր կանգնելու և ամենայն հայոց սգավոր գահին լույս բերելու՝ ան գնաց ու թառեցավ վճիտ հոգիով կրոնականի մը ուսերուն. կրոնական մը՝ որուն էությունը շաղված էր Ծնորհալիի շարականներով, Նարեկի աղոթքներով և Լուսավորչի տեսիլքներով:

Այդ սրբակյաց կրոնավորը՝ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջին կաթողիկոսն էր:

Ան գիտեր թե փառքե ու պատիվե ավելի՝ դժվարին առաքելության մը համար կբարձրանար Լուսավորչի պատմական գահուն վրա:

Այդ օրերուն նոր պայմաններ ստեղծված էին Հայրենիքի մեջ. նոր զարթոնք մը կապրեր Հայոց Արարատյան հոտը. հոգևոր սնունդ, առաջնորդություն, աղոթք և իմաստություն պետք էր մատակարարել այդ հոտին: Իսկ սփյուռքի եկեղեցական կյանքին մեջ կապրզվեր ալեկոծ հորիզոն մը, ուր ամենեն ճարտար նավապետներն անգամ վարանումի պիտի մատնվեին:

Քրիստոսի նման՝ Հայոց Հայրապետը դատապարտյալն էր Իր առաքելության: Ան քալեց հաստատ, Իր ոտքերը ամուր դրած հայրենի հողի վրա: Բարեկարգեց Արարատյան հոտը, հրահրեց հավատքի կայծերը և դարձյալ Իր պատմական ճառագայթումով օծեց մեր հոգևոր կեդրոնին սրբազան կամարները:

Ան հասավ նաև սփյուռքին, սատարեց անոր վերականգնումի ճիգերուն, տագնապեցավ անոր համար և արյունեցավ անոր հետ, քայց հասավ անոր:

Այնուհետև ինչպիսի՜ հրճվանքով ու հպարտությամբ տեսանք Հայոց Հայրապետին վսեմ ճակատը Հոռմի գահուն դիմաց ու պետական գերագույն պալատներն ներս:

Անոր հետ հայոց պատմությունն էր որ կքալեր: Հայոց պատմությունն էր որ կխոսեր աշխարհին:

Այսօր եկած է Ան հարազատ պատմության պատգամը բերելու նաև մեզի՝

Մենք, որ կորուստի օրերուն սուրբ Էջմիածնի լույսին հարեցանք, ու մենք, որ ովկիանոսներե անդին Հայրենի սուրբաշուք ապրեցանք և մեր ոխառը կատարեցինք մեր Գերագույն Հայրապետին անունով՝ այսօր վարձատրված կզգանք Իր ոգեշնչող ներկայությամբ:

Ամեն անոնք որ բախառը ունեցած են ոխատագնացության երթալու Էջմիածին, իրենց սեփական աչքերով տեսած են Հայրապետը Իր դարավոր գահուն վրա:

Մեզի համար անմոռանալի սպրումներու ստիթ մը եղալ Վեհափառին Աջը համբուրել Էջմիածնի կամարներուն ներքև, որ մեր Հայրենապետներուն նշխարները դեռ կապրին իբրև իմաստուն վկաները մեր պատմության: Վազգեն կաթողիկոսի շնորհիվ դարձյալ կենդանություն ստացած են այդ սրբազան վայրերը:

Այնտեղ պատմությունը միախառնված է այսօրվան կյանքին: Ծինարարությունը տարածված է ամենուրեք և կարծեք հոգևոր թագավորություն մը հաստատած է Ամենայն Հայոց Հայրապետը՝ սպասվիմած մեր բոլորին հիացումին ու հավատարմության:

Հայրենի պարզ ժողովուրդին հետ նաև մտավորականությունն ու պետական անձնավորությունները ամենեն երկյուղած հարգանքով տոգորված են Կաթողիկոսին հանդեպ: Պարզ է բոլորիս համար թե Իր անձին շնորհները կրորդին Իր հանգամանքին սահմաններեն դուրս՝ բոլոր հոգիները լեցնելու համար Իր առաքիլության լույսերով, Իր համատարած սիրով ու բարությամբ:

Մեզի համար ամենեն սրտառուչ ստիթներ եղած են Վեհափառի մտերիմ խորհուրդներուն ծանոթանալ:

Արդարև ամեն տագնապի դիմաց, ամեն շինարարական ձեռնարկի կապակցությամբ հաստատած ենք անոր հոգեկան մեծությունն ու անսահման բարությունը: Անոր հայրապետական սիրտին մեջ ջերմ անկյուն մը կա ամեն հարազատ հայորդիի համար:

Ան կապրի Իր անձեն դուրս՝ ամբողջ ժողովուրդին համար. կրաշխի Ան բոլորիս, կպատարագվի Քրիստոսի նման Իր բոլոր զավակներուն համար, որպեսզի անմար մնա մեր հայրերուն հավատքը մեր մեջ, որպեսզի միշտ պայծառ մնա սուրբ Էջմիածինը և որպեսզի անսատան մնա հայրենի երկիրը:


Եթե ժամանակները ավելի բարի ընթացք մը առին վերջին տարիներուն՝ նաև հայությունը բախտավորեցին՝ Վազգեն կաթողիկոսին նման Հայրապետ մը բազմեցնելու Էջմիածնի գահուն վրա:

Ծառ մը սրբություններ խլվեցան մեզմե. կորսցուցինք հող, օջախ, բերդեր և հարստություն. սակայն, շարունակեցինք ապրիլ իբրև հայ: Սուրբ Էջմիածինը սրբություն մըն է որ չենք կրնար կորսնցնել՝ առանց վրա տալու մեր հայեցիությունը:

Վեհափառ Տեր,

Ամեն հայուն սրտին մեջ ամուր խաբիսխ մը ունի սուրբ Էջմիածինը. աշխարհի որ անկյունին վրա որ ալ գտնվին Ջեր զավակները՝ անոնք իրենց սիրտին զարկի մեջեն կլսեն Էջմիածնի զանգերուն արձագանքները և ատուվ իսկ կհաստատեն թե կարժե ապրիլ իբրև հայ, տառապիլ իբրև հայ և ստեղծագործել իբրև հայ:

Ամա մոտ երկու տասնամյակներե ի վեր Ջեր անձը նույնացած է Մայր Աթոռի հետ:



Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ. ՓԱՌԻՋ

Վեհափառությանը անձին ընդմեջեն է որ ամբողջ հայությունը կհաղորդվի իր նախահայրերու սուրբ հավատքին: Ձեր խոսքերեն, Ձեր շունչեն ու Ձեր տեսիլքներեն ճառագայթող լույսն է որ մեզ բոլորս կկապե սուրբ Էջմիածնին:

Այսօր, այստեղ հավաքված Ձեր ֆրանսահայ զավակները եկած են իրենց հավատարմության ուխտը նորոգելու Ձեզի հանդեպ: Նույն ուխտով նաև եկած ենք մենք հեռավոր Ամերիկայեն ու միևնույն ուխտով աշխարհի բոլոր անկյուններեն Ձեր զավակները կնային Ձեզի:

Կհավատանք թե այդ միահամուռ ուխտով, Ձեր զավակներուն անխախտ հավատքով՝ միացած պիտի մնա հայ ժողովուրդը սուրբ Էջմիածնի շուրջ, հավատարիմ պիտի մնա Հայրապետությանը գերագույն իշխանության և անասան պիտի պահեն Մայր Աթոռը:

Թող երկինքները միշտ պայծառ մնան Հայրենիքի և Սփյուռքի միջև և թող Էջմիածնի լույսը ամեն օր ողողե մեզ իր ջերմությամբ:

Մեր հայեցի առօրյային մեջ պետք ունինք այդ լույսին, պետք ունինք Ձեր հորդորներուն, պետք ունինք Ձեր օրհնությանը:

Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ Տե՛ր»:

Այնուհետև ցուցադրվում է Ալեքս Մանուկյանի գործունեությանը նվիրված լուսարձակավոր նկարների ամբողջական մի հավաքածո՝ պատրաստված Փարիզի Երիտասարդաց ակումբի կողմից:

Վերջում օրհնության և շնորհավորական խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ ողջված հոբելյար Ալեքս Մանուկյանին:

Հանդիսությունից հետո կենտրոնի սրահներից մեկում տեղի է ունենում հյուրասիրություն:

ԱՅՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունիսի 16-ին, երկուշաբթի օրը, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանատուն:

Վեհափառ Հայրապետին ողջելցում էին տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը, տ. Գյուտ եպս. Նագաշյանը և տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը:

Դեսպանատան մուտքի առջև Վեհափառ Հայրապետին ընդունում և բարի գալուստ է մաղթում դեսպանատան առաջին քարտուղար Հենրիկ Լիլոյանը:

Ընդունարանում Վեհափառ Հայրապետին ողջունում է Ֆրանսիայում Սովետական Միության դեսպան Ստեֆան Չերվոնենկոն:

Մեծահարգ դեսպանի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի է ունենում գրույց՝ ջերմ մթնոլորտում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՐՍՈ

Հունիսի 17—18 օրերին Հայկական բարեգործական ընդհանուր միության Փարիզի շրջանային մասնաճյուղի նախագահ **Նուրհան Ֆրենկյանի** հրավերով **Վեհափառ Հայրապետը** երկօրյա հանգստի է մեկնում Բուրսո, Ֆրենկյան գերդաստանի դղյակ, որի վերանորոգումներից հետո տեղի էր ունենալու նաև հանդիսավոր բացումը:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին տ. Սերովբե, տ. Հակոբ, տ. Գյուտ սրբազանները, տ. Դավիթ, տ. Զարեն, տ. Վաչե, տ. Նորվան, տ. եզնիկ վարդապետները:

Հրավիրյալների թվում էին նաև հունիսի 16-ին Փարիզ ժամանած և Վեհափառ Հայրապետի հետ Երուսաղեմ մեկնող շքախմբի անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրապետ ու հոգևոր ճեմարանի դասախոս Արթուր Հատիսյանը և Անանիա արեղա Արաբաջյանը որպես գալազանակիր:

Հունիսի 17-ին, երեքշաբթի օրը, կատարվում է վերանորոգված դղյակի պաշտոնական բացումը, Հայոց Հայրապետի օրհնությամբ և ի ներկայության ֆրանսացի ու հայ բազում հրավիրյալների:

Հունիսի 18-ին, չորեքշաբթի, ստալիության 11-ին, Հայոց Հայրապետը իր շքախմբով այցելում է տեղի կաթոլիկ ս. Պողոս Պետրոս մատուռ, ուր տեղի է ունենում Էկումենիկ աղոթք:

Մատուռի հոգևոր հովիվը բարիգալստյան ջերմ խոսքով ողջունում է Հայոց Հայրապետի ներկայությունը: Ն. Սրբությունը տալիս է իր օրհնությունը և ապա առաջնորդվում 1914—1918 թվականների առաջին համաշխարհային պատերազմում զոհված Բուրսայի հերոսների հիշատակին կառուցված հուշարձան և «հոգեղ» արտասանում:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվում է Բուրսայի գերեզմանատուն, Աշոտ և Սիրանույշ Ֆրենկյանների հիշատակին վերջերս կառուցված գեղեցիկ դամբարան-հուշարձան, որը իր հայկական ճարտարապետությամբ իշխում է ողջ գյուղի համայնապատկերի վրա:

Այստեղ տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր արարողություն Աշոտ և Սիրանույշ Ֆրենկյանների հիշատակին: Ժամը 15-ին դղյակում Հայոց Հայրապետի պատվին տրվում է պաշտոնական ընդունելություն, ավելի քան 300 ֆրանսիացի և հայ հրավիրյալների մասնակցությամբ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ

Հունիսի 19-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը այցելում է ֆրանսիական հայտնի նկարիչ Գառուի և կանադահայ լուսանկարիչ Գավրիլի Փարիզում բացված ցուցահանդեսներ:

Ավելի ուշ, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ տ. Սերովբե, տ. Կոմիտաս և տ. Գյուտ սրբազանների, պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՓԱՐԻԶԻՆ

Հունիսի 20-ին, ուրբաթ օրը, ստալիության ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Փարիզից մեկնում է Ամման՝ այնտեղից անցնելու համար Երուսաղեմ:

Բուրժեի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են տ. Հակոբ և տ. Գյուտ սրբազանները, տ. Զարեն վրդ. Թովալյանը, տ. Նորվան վրդ. Զաքարյանը, բանաստեղծ Պարոնյանը, Փարիզի հայոց կրոնական



ՖՐԵՆԿՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆ-ՀՈՒՇԱՐՁԱՆԸ, ԲՈՐՍՈ (ՖՐԱՆՍԻԱ)

ընկերակցության անդամներ, հայ մշակութային կազմակերպություններ և մամուլի ներկայացուցիչներ և հալատացյալների մի մեծ խումբ:

Հայոց Հայրապետին ճանապարհում են նաև քույր եկեղեցիների և կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ: Փարիզի սովետական դեսպանատան անունից Հայոց Հայրապետին ճանապարհում և ողջերթ է մաղթում նաև դեսպանատան առաջին քարտուղար Հենրիկ Լիլոյանը:

ԵԶՆԻԿ ԱՔԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՐԵ ԵՐԿՐՈՒՄ

Երուսաղեմի հայոց ամենապատիւ տ. Եղիշէ սրբազան պատրիարքի եղբայրական սիրալիր հրավերով Հայոց Հայրապետի Երուսաղեմ երկրորդ այցելությունը մեծ ու կարևոր իրադարձություն էր մեր ազգային-եկեղեցական ժամանակակից տարեգրության մեջ:

Նորին Սուրբ Օծությունը ա. Էջմիածնից մեկնում էր Երուսաղեմ ոչ միայն «յուխտ և յերկրպագութիւն» սուրբ քաղաքի քրիստոսակոյն վայրերին և նվիրական սրբություններին, այլ նաև մեծահանդես շքով կատարելու սուրբ Հարության տաճարի հայկական մասի նորոգված և վերաշինված խորանների նավակատիքն ու օծումը, ինչպես նաև պաշտոնական բացումը՝ սրբոց Հակոբյանց վանքի հանդիպակաց տարածուն հողամասի վրա բարձրացած Ալեքս և Մարի Մանուկյանների անունը կրող Ժատանգավորաց վարժարանի և ընծայարանի նորակառույց շենքի, որը հայկական իր գեղեցիկ ճարտարապետությամբ հանդիսանում է փառավոր ու շքեղ մի նոր վկայություն սուրբ քաղաքի մեջ հայ եկեղեցու ու մեր ժողովրդի դարավոր ներկայության:

ԺԱՄՍԱՆՈՒՄ ԱՄՄԱՆ

Հունիսի 20-ին, ուրբաթ օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը ոտք դրեց Հորդանանի Հաշիմական թագավորության մայրաքաղաք Ամման:

Սույն ուղևորության ժամանակ Հայոց Հայրապետին ընկերակցում էին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Արարատյան թեմի առաջ-



ԵՐՈՒՍՏԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԺ

նորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը**, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ ու ժողովրդական նկարիչ **Գրիգոր Խանջյանը**, «Էջմիածին» ամսագրի խմբագրապետ ու հոգևոր ճեմարանի ավագ դասախոս **Արթուր Հատիտյանը** և **Անանիա արեղա Արաքսյանը**՝ որպես գալականակիր:

Հոռմի միջազգային օդանավակայանում հայրապետական շքախմբի անդամներին միացան նաև ԱՄՆ-ից նոր ժամանած Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան թեմի առաջնորդ **տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը**, արևելյան թեմի առաջնորդ **տ. Վաչե եպս. Հովսեփյանը**, **տ. Սիոն արքեպ. Մանուկյանը**, Դեմոքրատի հայոց հոգևոր հովիվ **տ. Փառեն վրդ. Ավետիքյանը**, Կլիվլենդի հայոց հոգևոր հովիվ **տ. Տիրան քնն. Փափազյանը**, ուխտավորների մի մեծ խումբ, որի կազմում էին սուրբ Աթոռի բարերար տեր և տիկին **Հարություն Թադոսյանները**, **պրոֆ. Ավետիս Սանճյանը**, **պրոֆ. Վազգեն Բարսեղյանը**, **պրոֆ. Վարդգես Մկրտչյանը**, **պրոֆ. Դենիզ Փափազյանը**, «Արմինյուն ռիփորթը» թերթի խմբագիր **Եղվարդ Պողոսյանը** և ուրիշներ:

Փարիզից Հայոց Հայրապետին ուղեկցում էին նաև այլ ուխտավորներ, ֆրանսահայ թեմի ծանոթ անձնավորություններ՝ այդ թվում Մայր Աթոռի բարերար տեր և տիկին **Գևորգ—Ռոզա Պազրճյանները**, **Կարպիս Ճևկարյանը**, տեր և տիկին **Համազասպ—Ալիս Մոմճյանները**, տեր և տիկին **Մուշեղ—Արմենուհի Ճերահյանները**, տեր և տիկին **Սուրեն—Մերի Գործունյանները** և ուրիշներ:

Ամմանում **տ. Եղիշե սրբազան պատրիարք** հոր անմիջական ղեկավարությամբ և գլխավորությամբ ամեն ինչ կատարվել էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորելու և ողջունելու համար՝ Նրա բարձր անձնավորությանը, դիրքին և հեղինակությանն արժանավայել շքով և հարգանքով:

Ժամեր առաջ Ամմանի միջազգային օդանավակայանում հավաքված հոծ բազմությունն Ամմանից, Երուսաղեմից, Բեյրութից, Դամասկոսից, Հալեպից, Պարսկաստանից, Ստամբուլից, ԱՄՆ-ից անհամբեր սպասում էր Հայոց Հայրապետի շնորհաբեր գալստյանը:

Չափ ու սահման չունեղ ժողովրդի, սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանության անդամների ուրախությունն ու խանդավառությունը:

Բոլորի շրթների վրա թրթռում էին երկու քաղցր անուններ՝ **սուրբ Էջմիածին** և **Հայոց Հայրապետ**, երկու խորհրդանշական բառեր, որոնք իրենց մեջ ամփոփում էին բոլոր ներկաների սերը, երախտագիտությունը, հոգեկան բերկրանքն ու ազգային հպարտությունը, երկու սրբազան խորհրդանշաններ, որոնք սփյուռքի ողջ տարածքի վրա միշտ էլ լույս է օրհնություն են բաշխում հայ բազմությունների հայրենակարոտ հոգիներին Երևանից մինչև Մոսկվա, Եվրոպայից մինչև հեռավոր ափերն Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի:

Հորդանանի հայ համայնքը ևս, մեծով ու փոքրով, ոգևորված և ուրախությամբ սպասում էր Հայոց Հայրապետի շնորհաբեր ժամանմանը տեղի հոգևոր հովիվ **տ. Անուշավան վրդ. Զոչանյանի** գլխավորությամբ:

Ամենապատիվ սրբազան հոր գլխավորությամբ Ամմանի օդանավակայանում էին սրբոց Հակոբյանց վանքի միաբանության ներկայացուցիչներ **տ. Ծահե արքեպ. Աճեմյանը**, **տ. Աղան**, **տ. Նուրհան**, **տ. Վահան**, **տ. Գեղարդ**, **տ. Վիգեն** վարդապետները, քույր եկեղեցիների բարձրաստի-

նան ներկայացուցիչներ, պետական պատասխանատու պաշտոնատարներ, ազգային-համայնքային կազմակերպությունների անդամներ, արաբական մամուլի և հեռուստատեսության ներկայացուցիչներ ու բազմահազար հայ և արաբ ժողովուրդ:

Ժամը 19.30-ին ինքնաթիռը խաղաղ վայրէջք կատարեց Ամմանի օդանավակայանում: Ինքնաթիռի կամրջակի վրա վերջապես երևաց մեծ և ցանկալի Հյուրը, վեղար ի գլուխ, հայրապետական գավազան ի ձեռին, Իր պարթև հասակով և բարեհամբույր ժպիտով՝ շրջապատված Իր բազմամարդ շքախմբի անդամներով:

Հայոց Հայրապետը, երկրորդ անգամ լինելով, ոտք դրեց Հորդանանի արաբ թագավորության հյուրընկալ հողի վրա, երկիր, որը հայ ժողովրդի հետ կապված է բարեկամության, եղբայրության սրտագին ու սալանդական կապերով:

Երուսաղեմի **ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը** մոտեցավ Հայոց Հայրապետին և եղբայրական ջերմ սիրով ողջունեց Նրա օրհնաբեր ժամանումը Ամման:

Արծաթե ափսեի մեջ Հայոց Հայրապետին ներկայացվեց սուրբ երկրի սալանդական աղն ու հացը՝ ի նշան խաղաղության, բարեկամության և սրտաբաց հյուրասիրության: Հայոց Հայրապետն օրհնեց հյուրընկալ երկրի առատությունը խորհրդանշող այս բարիքները:

Երկու փոքր սևաչյա հայ աղջնակներ բուրումնավետ ծաղկեփնջեր մատուցեցին Հայոց Հայրապետին, մինչ մի անգամ ևս պեկոծվեց օդանավակայանում հավաքված բազմությունը, ու թնդացին ուրախության աղաղակները և բացականչությունները:

Այնուհետև սրբազան պատրիարք Հայրը Հայոց Հայրապետին ներկայացրեց պաշտոնական անձանց, հոգևոր պետերին, որոնք եկել էին ողջունելու Նորին Սրբությանը և բաժանելու հայ ժողովրդի ուրախությունը:

Ժողովրդական խանդավառ և ցնծագին ծափողջույնների տակ **Վեհափառ Հայրապետն** առաջնորդվեց օդանավակայանի ընդունելությանց դահլիճ, ուր, հանուն Հորդանանի Նորին Վեհափառություն **Հուսեին Բ թագավորի**, Հայոց Հայրապետի ժամանումն Ամման ողջունեց Հորդանանի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի տնօրեն **Մուհդասամ Բիլբեսին**:

Հայոց Հայրապետը և պրոտոկոլի հարգելի տնօրենը փոխանակեցին ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր: Հայոց Հայրապետն այս առթիվ ասաց. «Երկրորդ անգամ է, որ կայցեղենք Հորդանանի այս օրհնյալ և բարի երկիրը: Մեր առաջին այցելութենեն անմոռանալի հիշատակներ կպահենք: Կհիշենք միշտ Նորին Վեհափառություն Հուսեին Բ քաջակորով ու հայրենապետ թագավորի բարի ժպիտը: Ընդունեցեք, պարոն տնօրեն, Մեր սրտագին շնորհակալությունն այս ջերմ դիմավորման համար և հաճեցեք Մեր օրհնությունները և ողջույնը հաղորդել Նորին Վեհափառությանը, արքայական ընտանիքին, Հորդանանի բարեպաշտ, աստվածասեր արաբ ժողովրդին: Թող Աստված խաղաղության, արդարության և բարօրության մեջ պահե-պահպանե այս օրհնյալ երկիրը իր թագավորով, իր ժողովուրդով, երկիր, որու հովանիին ներքև իր կազմակերպված եկեղեցական, մշակութային կյանքով խաղաղ և ապահով կապրի նաև Հորդանանի մեր հայ համայնքը»:

Այստեղ Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև Հորդանանում Սովետական Միության դեսպան **Ալեքսեյ Լ. Վորոնինը**:



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒՆ Ա. Լ. ՎՈՐՈՆԻՆԸ ԱՄՍԿՆ

Հյուրասիրությունից հետո Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը Նորին Վեհափառություն Հուսեին թագավորի անձնական ինքնաշարժով, զինվորական պատվո ջոկատի ուղեկցությամբ և ինքնաշարժերի մեծ շքերթով առաջնորդվեց Ամմանի «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցի ութերորդ հարկ, ուր մասնավոր հարկաբաժին էր հատկացվել Նրան: Սույն հյուրանոցում իջևանեցին նաև հայրապետական բազմամարդ շքախմբի անդամները և հյուրերն ու ուխտավորները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄՄԱՆՈՒՄ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Հունիսի 20-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, Ամմանում Սովետական Միության դեսպան **Ա. Լ. Վորոնինը**, ի պատիվ Հայոց Հայրապետի, Ամմանի դեսպանատան գեղեցիկ և զով այգում կազմակերպեց մեծ ընդունելություն, որին ներկա եղան ավելի քան երեք հարյուր հրավիրյալներ, այդ թվում՝ Ամմանում դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան անձնավորություններ, միհիստրներ, զինվորական ղեկավարներ, մահմեդական և քրիստոնյա հոգևոր պետեր:

Ընդունելությանը ներկա էին նաև հայրապետական շքախմբի անդամները, Եվրոպայից, Ամերիկայից, Լիբանանից, Սիրիայից այս առթիվ Ամման ժամանած բոլոր հայ հոգևորականները, ուխտավորները, սուրբ Աթոռի միաբանները, Ամմանի հայ համայնքի ներկայացուցիչները, տեղական արաբ մամուլի, հեռուստատեսության թղթակիցներ և այլ հյուրեր:

Հայոց Հայրապետը և մեծահարգ պարոն դեսպանը, այգու պաշտոնական մուտքի առաջ կանգնած, դիմավորեցին և ընդունեցին հարգարժան հյուրերին և ապա նույն ձևով ճանապարհեցին ընդունելությունից հետո:

Ընդունելությունն անցավ բացառիկ ջերմ ու սրտագին մթնոլորտում, արաբ, հայ և սովետական ժողովուրդների բարեկամության ոգով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հունիսի 21-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունեց այցելությունն այս առթիվ Բեյրութից ժամանած հասարակական ծանոթ գործիչ և հարգված մտավորական պրոֆ. **Բարունակ Թովմասյանի՝** ընկերակցությամբ իր տիկնոջ՝ **Անժել Թովմասյանի,** և Մայր Աթոռի միաբան **տ. Գևորգ Ծ. վրդ. Կարախյանի:**

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունեց Բեյրութի Հայկական բարեգործական ընդհանուր միության տիկնանց հանձնաժողովի անդամ **տկն. Սաթենիկ Մանուկյանի** և օրիորդ **Իվոն Գասարճյանի** այցելությունները:

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց այցելությունն այս առթիվ Ամման եկած Դամասկոսի թեմի առաջնորդ **տ. Ոսկան Ծ. վրդ. Գալբակյանի,** Հայկական բարեգործական ընդհանուր միության տեղական վարչության անդամ և ազգային-գավառական ժողովի ատենապետ **դոկտ. Լևոն Յագուպյանի,** քաղաքական ժողովի անդամ **Կարախյա Առաքելյանի,** «Թեքելյան» մշակութային միության վարչական անդամներ **Գ. Բարսեղյանի, Մ. Գևորգյանի, Ժ. Գրիգորյանի** և այլոց, որոնք պաշտոնապես եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետն ընդունեց նաև այցելությունը Դամասկոսի Թարգմանչաց ազգային վարժարանի տնօրեն **Տիրան Ակինյանի:**

ԱՅՑ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՐԴԱՆԱՆԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ
ՀԱՍԱՆ ԻՇԽԱՆԻՆ

Հունիսի 21-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, **Հայոց Հայրապետը** և **Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը** մեծ շքախմբով այցելեցին Ռադադան պալատում Հորդանանի գահաժառանգ Նորին Բարձրություն **Հասան իշխանին**:

Նորին Վեհափառություն **Հուսեին** թագավորը պաշտոնական այցով գտնվում էր երկրից դուրս: Նորին Վեհափառությունը սակայն ջերմ ցանկություն էր հայտնել իր վերադարձին Ամման անպայման հանդիպում ունենալ **Հայոց Հայրապետի** հետ:

Գահաժառանգ **իշխանին** տրված սույն այցելության ժամանակ **Հայոց Հայրապետին** և սրբազան պատրիարքին ողջկցում էին այս ստորիվ Ամման ժամանած հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, հայրապետական շքախմբի անդամները, սուրբ Աթոռի միաբանները, Ամմանի հայ գաղութի ներկայացուցիչները, ինչպես նաև բոլոր հայ հյուրերը՝ ավելի քան հիսուն հոգի:

Հայոց Հայրապետը, նախքան իր հանդիպումը գահաժառանգին, պալատի շրջափակում գտնվող **Աբդուլահ** և **Դալլահ** հայասեր արքաների դամբարաններին ծաղկեպսակներ զետեղեց: Այստեղ Նորին Սրբությունը, ամենապատիվ պատրիարքը և հայրապետական շքախմբի բոլոր անդամները մի պահ լուռությամբ հարգեցին հիշատակը հանգուցյալ թագավորների:

Այնուհետև **Հայոց Հայրապետին** և սրբազան պատրիարքին ընդունեց Նորին բարձրություն գահաժառանգ **Հասան իշխանը**: Տեղի ունեցավ ջերմ գրույց, որի ընթացքում բարիգալստյան և ողջունի սրտագին խոսքեր փոխանակեցին **Հայոց Հայրապետը** և գահաժառանգ **իշխանը**: Գահաժառանգ **իշխանն** իր խոսքի մեջ ասաց. «Մեծ ուրախություն և գոհունակություն է պատճառում մեզ հայոց կրոնապետի այս երկրորդ այցելությունը սուրբ Երուսաղեմ: Դուք ևս մեզ չափ մեծ կարևորություն եք տալիս սուրբ Երկրին: Ցանկանում եմ Ձեզ հաջող ուխտագնացություն»:

ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՊԱՏՎՈՒՄ Է
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հունիսի 21-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 21-ին, Հորդանանի **Հայոց հոգևոր տեսչությունն** ու հայ համայնքը **Վեհափառ Հայրապետի** պատվին կազմակերպեցին բարիգալստյան ջերմ ընդունելություն, **Հուսեին** թագավորի անվան մարզավանի շքեղ դահլիճում: Ընդունելությանը ներկա եղան ավելի քան հարյուր հիսուն հրավիրյալներ, այդ թվում նաև Սովետական Միության դեսպան Ա. Լ. Վորոնինը և այլ պետական պաշտոնական անձնավորություններ:

Սեղանն օրհնեց **Վեհափառ Հայրապետը**: Դահլիճում շուտով ստեղծվեց հայրենասիրական խանդավառ մթնոլորտ:

Ընդունելության ժամանակ սկս. **Մարի Գործունյանը** խոր ապրումով արտասանեց Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Այնուհետև Ամմանի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ **տ. Անուշավան վրդ. Զոչանյանը**, հանուն համայնքի, հետևյալ գեղեցիկ ողերձով ողջունեց **Հայոց Հայրապետի** օրհնաբեր ներկայությունը:

«Վեհափառ Տեր,

Այս պատմական և եզակի պահուն, բառերը կպակսին արտահայտելու այն խորունկ հրմլանքը, որ կզգա հորդանանահայությունը, Ձերդ Վեհափառության շնորհաբեր ծամանումովը Ամման:

Այսօր տոնական օր է մեզ համար: Արդյոք պիտի կարենա՞մ հավատարիմ թարգմանը ըլլալ հորդանանահայությանը, որ ինձի պատենությունը կրնձայն Ձերդ Վեհափառության ուղղելու բարի գալուստի և հավատարմության այս մեկ քանի խոսքերը: Հայ ժողովուրդը, որ կապրի Հորդանանի մեջ ազատ և երջանիկ, շնորհիվ արաբ ժողովուրդի ասպնջական ոգիին և Հուսեին թագավորի արդարամիտ կառավարության ղեկավարության, իր խորունկ սերն և հավատարմությունը կհալտնե Ձեր անձին և հայ հավատքի կեդրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի հանդեպ: Բացառիկ առաքինություններով և բարեմասնություններով օծոված Ձեր կյանքին ու գործունեության ի տես, մեր սրտերեն կբարձրանան երախտագիտական և ջերմ որդիական խորունկ զգացումներ:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության առաջին իսկ օրերին վերաշինեցիք, պայծառացուցիք Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որուն կմնան հառած մեր բոլորին նայվածքները, մեր սրտերն ու հոգիները, իբրև հայ ժողովուրդի միասնականության խորհրդանիշ:

Ձեր Վեհափառ անձին ընդմեջեն շողաց այն ջերմացնող հաղորդակցությունը, որ կու գար Մայր հայրենիքի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի խորունկ ակունքներեն:

Ձեր հայրենանվեր գործունեության ընթացքին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը ապրեցավ իր հոգևոր, մշակութային և շինարարական զարթոնքը: Այս բոլոր շքեղ իրագործումները, իրենց ներշնչումը ստացան ազգին, եկեղեցիին և հայրենիքին հանդեպ ունեցած Ձեր բոլորանվեր ծառայութենեն:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը մեր գերագույն սիրույն և պաշտամունքին խորհրդանիշն է: Ս. Էջմիածինը ոգեկան անքեկանելի կոթողն է մեր հոգիներուն մեջ: Անվերապահ է մեր հավատարմությունը դեպի Լուսավորչի Աթոռը և անոր առաքելաշաղկի գահակալը: Ձեր բարձր հովանավորության ներքև թող անի, բարգավաճի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, թող սփռե լույս և ջերմություն՝ մեզ կապելով վերածնած հայրենիքին:

Վերածնված հայրենիքը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը ձուլման, ապագայնացման դեմ մեզ պահող երկու ուլծերն են: Ձեր սույն այցելությունը հոգեկան մխիթարության անփոխարինելի առիթ մը եղավ: Զխնայեցիք Ձեր կորովը սփյուռքահայության և հայրենի ժողովրդին կապերը ամրապնդելու: Հայրենի աշխարհը Ձեր անձով մեզի շոշափելի իրականություն դարձավ: Ամեն տեղ տարիք Մայր հայրենիքի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի սրբությունները:

Աղոթենք որ բարձրյալն Աստված Ձեզի պարգևե հովվապետական երկար և բեղուն տարիներ, լուսավոր հեռապատկերներով՝ ի պայծառություն և ի բարգավաճումն Հայաստանյայց մեծ եկեղեցվո. «Տէ՛ր, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեսյս, և պայծառացո գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին»:

Այնուհետև, պաշտոնական առաջին իսկ առիթով, Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունեց տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը՝ նշելով, որ Հայոց Հայրապետն Իր հանգամանքով, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, մեր սրտերի թագավորն է, մեր եկեղեցու և

ժողովրդի հպարտությունը, և իր բարձր անձի մեջ խտացնում է ս. Էջմիածնի և հայրենիքի գաղափարները՝ հաղորդելով մեզ հայրենական աշխարհի քաղցրությունները և ս. Էջմիածնի օրհնությունը:

Այս մտորումների լույսի տակ պատրիարք սրբազանը, արտահայտելով բոլոր ներկաների կարոտն ու սերը, հրավիրում է Հայոց Հայրապետին տալու իր պատգամն ու օրհնությունները:

Խորապես հուզված, բայց երջանիկ ու գոհմունակ, խոսք է սունում Հայոց Հայրապետը՝ բերելով ներկաներին օրհնություն իր մեծ սրտից և ս. Էջմիածնից և ողջուն Հայոց վերածնված աշխարհից:

Հայոց Հայրապետն իր խոսքի մեջ ոգեկոչում է նախ 1963 թվականի հոկտեմբերին Ամման կատարած իր առաջին այցելության վառ հիշատակները, ապա շեշտում իր երկրորդ այցելության հոգևոր, հայրենասիրական նշանակությունը, խոսում առավոտյան թագավորական պալատում գահաժառանգ Հասան իշխանին տված իր այցելության և գտած ջերմ ընդունելության մասին, ընդունելություն, որը նշանն էր որպես արտահայտություն այն խոր հարգանքի և վստահության որ տածում է արքունիքը դեպի հայ եկեղեցին, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը, դեպի ամենապատիվ սրբազան պատրիարքի սիրելի անձը և դեպի հայ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը բացառիկ կարևորությամբ ընդգծում է, որ 1920-ական թվականներից սկսած Հորդանանի ազնիվ և բարի ժողովուրդն իր աղն ու հացը եղբայրորեն բաժանեց հայ ժողովրդի գաղթական քեկորների հետ, որոնք ասպնջականություն, խաղաղություն և ազատություն գտան արաբական այս օրհնյալ հողի վրա և հնարավորություն ունեցան կազմակերպելու իրենց եկեղեցական, ազգային, մշակութային կյանքը: Այս հանգամանքը, շեշտեց Հայոց Հայրապետը, մխիթարությամբ և անսահման երախտագիտությամբ է լցնում մեր սրտերը դեպի Հորդանանի արդարակրոլ թագավորը, արքունիքը, պետական իշխանությունները և ժողովուրդը:

Իր խոսքի մեջ Հայոց Հայրապետը սրտագին բարեմաղթություններ արեց հաշիմական գահի անսասանության, Նորին Վեհափառություն Հուսեյն թագավորի կենաց արևաշատության և Հորդանանի արաբ ժողովրդի ազգային ազնիվ իղձերի իրականացման համար, արդարության, մարդկային իրավունքի և խաղաղության պահպանման պայմաններում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ ս. Էջմիածնի գործունեության և հայրենիքի մասին խանդավառ խաբրիկներ հաղորդելով ստեղծեց հայրենասիրական ջերմ մթնոլորտ:

Խոսեց նաև վերջերս Ռումիհիա, Բուլղարիա, Լոնդոն, Փարիզ կատարած իր այցելության հոգևոր, ազգային, հայրենասիրական նշանակության մասին:

Ոգեկոչեց Մեծ եղեռնի վաթսուն և Հաղթանակի երեսնամյակները՝ եզրակացնելով, որ այսօր հայրենի հողի վրա և սփյուռքի ողջ տարածքում կենդանի է հայ ժողովուրդն ու լավատես իր պայծառ ապագայի նկատմամբ՝ ապրելու որպես մեկ եկեղեցի ու մեկ ժողովուրդ և կյանքի կոչելու իր ազգային բոլոր երազները:

Սույն ընդունելությունն ավարտվեց խմբովին երգված Տերունական աղոթքով:

Հորդանանի հայ գաղութը հիմնվել է 1920 թվականին: Ծնորհիվ տեղի արաբ ժողովրդի ասպնջականության և հայ մարդու առհավական ձեռներեց ու աշխատասեր ոգու, հայությունը կարողացել է այս հյուրընկալ ափերի վրա



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԱՀԱՆՂԵՍ ԹԱՓՈՐԸ ԴԵՊԻ ՍՐԲՈՑ ՀԱՎՈՐՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, ԵՐՈՒԱՍՏԱՆԻ

ևս ստեղծել ապահով ու բարեկեցիկ կյանք: Հայությունը գլխավորապես կենտրոնացել է Ամման մայրաքաղաքում, ուր ներկայումս ապրում են երեք հարյուր ընտանիքներ՝ մեծամասնությամբ արհեստավորներ:

Հորդանանի հայ համայնքը գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքության հոգևոր իրավասության ներքո: Համայնքը ղեկավարում է պատրիարքարանի կողմից նշանակված հոգևոր հովիվով: Այժմ Ամմանի հայոց հոգևոր հովիվն է տ. Անուշավան վրդ. Զոչանյանը:

Համայնքի ծոցում գոյություն ունի ման սրբազան պատրիարք հոր կողմից նշանակված տեղական մի խորհուրդ, որը հոգևոր հովիվի հետ միասին վարում է թեմի մշակութային, ազգային գործերը: Սույն խորհրդի անդամներն են ճարտարապետ Տիրան Ոսկերիչյանն ու Նուպար Գաբրիելյանը:



Ամմանի Յուզբաշյան-Կյուլպենկյան վարժարանի տեսչական, ուսուցչական կազմը և 1975 թվականի շրջանավարտները

Վերջերս Ամմանում կառուցվեց ս. Թադեոս հայկական փառավոր եկեղեցին՝ նվիրատվությամբ ամերիկահայ բարերար Հարություն Թադոսյանի:

Գաղութում գործում է ման Հայկական բարեգործական ընդհանուր միության Վահրամ Յուզբաշյան—Գալուստ Կյուլպենկյան ազգային մախսկրթարանը, ուր հաճախում են հարյուր ութսուն երկսեռ հայ մանուկներ: Դպրոցն ունի ուսուցչական ընտիր կազմ հայ և արաբ 14 դասատուներից բաղկացած: Համայնքի ծոցում գործում են ման մարզական և մշակութային միություններ՝ ԱՄՄ-ն (Ամմանի մարզական միություն) և ՀՄԸՄ-ն:

**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ
ԱՄՄԱՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎԵՂԵՑՈՒՄ**

Հունիսի 22-ին, կիրակի: Հին տոմարով Հոգեգալստյան տոն է այսօր: Ամմանի հայոց ս. Թադեոս եկեղեցում եպիսկոպոսական հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ղիվանա-

պետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերադառնալու **տ. Ծառն արքեպ.** **Աճեմյանը:**

Ժամը 10-ին **Վեհափառ Հայրապետը** և **տ. Եղիշե սրբազան պատրիարքը** բարձրաստիճան հոգևորականներով մուտք գործեցին եկեղեցի, որը լցված էր աղոթավոր հայ հոգիներով: Ամեն կողմ խունկ ու աղոթք, լույս և վեհություն:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում էր **ս. Աթոռի միաբանների խումբը՝** ղեկավարությամբ **տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:** Սուրբ սեղանին սպասարկում էին **տ. Փառեն, տ. Նուրհան, տ. Գեղարդ և տ. Վիգեն** վարդապետները:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը և հրավիրեց Նրան իր պատգամը և օրհնությունը տալու ամսանահաշությամբ:

Իր քարոզի մեջ Հայոց Հայրապետը ոգեկոչեց հիշատակը Հոգեգալըստյան մեծ տոնի, վեր հանեց այդ դեպքի հոգևոր ու պատմական նշանակությունը եկեղեցու կյանքում՝ նշելով, որ Ավետարանի լույսը և քրիստոնեական հավատքը Հոգեգալստյան դեպքից հետո Հայաստան աշխարհ բերեցին **ս. Թադեոս** և **ս. Բարթողիմեոս** առաքյալները: Ավետարանի այդ լույսի և քրիստոնեական հավատքի հանդեպ հավատարմությունը, առաջ Վեհափառ Հայրապետը, հաճախ մահատակության գնով իսկ ձեռք բերված մեր ժողովրդի փառքի տիտղոսներից մեկն է:

Ապա իր քարոզի մեջ Հայոց Հայրապետը ոգեկոչեց անցյալում մեր պատմության տխուր էջերը և մեր օրերի ազգային, եկեղեցական ու հայրենական վերագարթոնքի փառաբանումով ոգեշնչեց բոլոր ներկաներին:

Հայրապետական սույն քարոզն ավարտվեց սրտաբուխ բարեմտություններով Հորդանանի թագավորության անասանության, նրա քաջասիրտ Հուսեին թագավորի հայրենանվեր գործունեության և աշխարհի խաղության համար:

Հավարտ **ս. պատարագի** բոլոր հավատացյալները աջահամբույրով ստացան Հայոց Հայրապետի օրհնությունները:

Ժամը 14-ին հյուրանոցի «Զարաշ» դահլիճում Հայոց Հայրապետի պատվին տրվեց ողջերթի ճաշկերույթ Հորդանանի հայ համայնքի կողմից:

Հայոց Հայրապետի ժամանումը Ամման, այս առթիվ կազմակերպված հանդիսությունները, կատարված ընդունելությունները ու այցելությունները, կիրակի օրվա **ս. պատարագն** ու հայրապետական քարոզը լայնորեն հաղորդվեցին Հորդանանի հեռուստատեսության գունավոր ծրագրով:





ՓԱՆՈՒՔ ՄԵՇԵՆԱՅ. ՎԻՃԱԿՓԱՆՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՏԻԱՐԿԸ. ԵՐԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հունիսի 22-ին, կիրակի օրը, հետմիջօրեի ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը, արքայական ինքնաշարժի մեջ, հանդիսավոր մեծ շքերթով, զինվորական պատվո ջոկատի ուղեկցությամբ, մեկնեցին Երուսաղեմ:

Ավելի քան հարյուրավոր մեքենաներ Ամմանից ուղեկցում էին հայրապետական շքերթին մինչև Հորդանանի և Իսրայելի սահմանի կամուրջը:

Ծանապարհի կեսին, սահմանի կամրջի վրա, մի պահ կանգ առավ հանդիսավոր շքերթը, որին միացան Երուսաղեմից եկած հարյուրավոր ինքնաշարժեր, և շքերթը, կրկնապատկված, ստացավ պատկառելի և մեծահանդես երևույթ:

Կամրջից այն կողմ, հանուն Իսրայելի կառավարության, Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին կրոնից մինիստրի անձնական ներկայացուցիչներ դոկտ. **Փականը, դոկտ. Կլեյնը,** Երիթով քաղաքի զինվորական կառավարիչը և պաշտոնական այլ անձնավորություններ:

Բարիգալստյան և ողջույնի պաշտոնական խոսքերից հետո հայրապետական շքերթն ուղևորվեց դեպի սուրբ քաղաք՝ Երուսաղեմ:

Ժամը 17-ին ինքնաշարժերի հանդիսավոր թափորը մուտք գործեց հին Երուսաղեմի պատմական պարիսպներից ներս և կանգ առավ Դավթի դարբասի առաջ: Հայրապետական շքերթի մասնակիցները, իջնելով ինքնաշարժերից, միացան եկեղեցական մեծահանդես թափորին: Ի նշան որախության բազում սպիտակ աղավնիներ բաց թողնվեցին օդի մեջ:

Դավթի դարբասի մոտ Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. **Շնորհք սրբազան պատրիարք Փալստյանը,** որը ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի եղբայրական հրավերով հունիսի 20-ին ժամանել էր Երուսաղեմ՝ ստամբուլահայ ուխտավորական մի մեծ խմբով, մասնակցելու սաղիմական հանդիսություններին:

Հայոց Հայրապետի ժամանմունը ողջունեցին նաև այս ուրախ ստիժով Երուսաղեմ ժամանած Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանն** ու Լոնդոնից՝ **տ. Պսակ արքեպիսկոպոս Թումանյանը**։

Այստեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին կրոնից միևնաժամ **դոկտ. Ռաֆայել Իցհակը**, Երուսաղեմի քաղաքագլուխ **դոկտ. Տեդի Կոլլեկը**, Երուսաղեմի նահանգապետ **դոկտ. Ռաֆայել Լևին**, Երուսաղեմի ոստիկանապետը և քաղաքային իշխանությանց այլ ներկայացուցիչներ, դիվանագիտական մարմնի անդամներ։

Այստեղ էին նաև Երուսաղեմի քույր եկեղեցիների հոգևոր պետերը՝ լատինաց պատրիարք **մոնսենյոր Միաքսմո Բելթրիսին**, հունաց Բենեդիկտոս պատրիարքի ներկայացուցիչները և ս. Սիմոնի միտրոպոլիտներ, պապական նվիրակ **Վիլյամ Քերիվ**, Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ **հայր Մաուրիլիոս Սաքին**, ասորի, ղպտի, հաբեշ, ռուս վանքերի միաբանությունների մեծավորները, հույն կաթոլիկ, մարոնիտ, հայ-կաթոլիկ, անգլիկան, լութերական, մահմեդական, մուսլիսական տարբեր համայնքների ներկայացուցիչները և ժողովրդի բազմություն, շուրջ 15 հազար հոգի։

Հայոց Հայրապետը, շքեղորեն զգեստավորված Գրիգոր Շղթայակիր պատրիարքի պատմական շուրջատով, գլխավորում էր հայրապետական մեծաշուք թափորը, որը խաչերով ու խաչվառներով, խնկով ու աղոթքով, 'հանդիսավոր վեհությամբ, երեք կիլոմետր գորգածածկ և դրոշակազարդված ճանապարհով ընթանում էր դեպի սրբոց Հակոբյանց մայրավանք, «Որ զխորհուրդ քո գալստեան» շարականի երգեցողությամբ։

Արդարև Հայոց Հայրապետի ժամանումով Երուսաղեմ, «**դղրդեցաւ քաղաքն ամենայն**»։

Տոնական և հանդիսավոր դրդանշում էին ս. Հակոբյանց Մայր տաճարի զանգերը։ Հայրապետական թափորը համընթաց, մեծաշուք և հանդիսավոր, մոտեցավ պատրիարքարանի կամարներին, որտեղ սրտատրոսի ու անհամբեր, տեղ էին գրավել Ժառանգավորաց, սուրբ Թարգմանչաց, Տատուրյան վարժարանների սաները, ՀԵՄ-ի և ՀՄԸՄ-ի ու այլ կազմակերպությունների արիները և արեւմուշները։

Վանք տանող պողոտան, փողոցներն ու մայրերը, պատրիարքարանի կամարները, վանքի դարբասի առաջ գտնվող հրապարակը զարդարված էին դրոշակներով, ծաղիկներով, արմավենու ճյուղերով և էլեկտրական գունագեղ լամպերով։ Կամարների պատերի վրա ամրացված էին հայերեն, արաբերեն, անգլերեն և եբրայեցերեն լեզուներով ծաղկազարդ պատատուներ՝ հետևյալ վերտառությամբ. «**Երուսաղեմի բովանդակ հայությունը ջերմորեն բարի գալուստ կմաղթե Ամենայն Հայոց Հայրապետին**»։

Եկեղեցական թափորը, ժողովրդական խանդավառ արտահայտությունների ու զանգերի ավետավոր դրդանքի ներքո, «**Հրաշափառ**»-ով, հանդիսավորապես մուտք գործեց Մայր տաճար, ուր ս. Գլխադրի մատուան առաջ Հայոց Հայրապետը ծնրադիր կատարեց Իր ուխտն ու աղոթքը և ապա առաջնորդվեց Ավագ սեղան։

Եկեղեցական արարողության ավարտին **ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը**, հայտնելով իր և իր Աթոռի ու բովանդակ միաբանության ու սաղիմահայ հավատացյալների զգացած հոգեկան բերկրանքն ու երջանկությունը, **Հայոց Հայրապետի** շնորհաբեր ներկայությունը ողջունեց հետևյալ սրտատուշ ուղերձով.



ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ. ԵՐՈՒՍԱԿԵՄ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ Ս. ՊԱՏՐԻԱՐԷԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(1975 թ. հունիսի 20-ին)

«Վեհափառ Տեր,

Այսօր երջանիկ է սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությունը և Երուսաղեմի հայ ժողովուրդը անգամ մը ևս իր մեջ ողջունել կարենալու Ձերդ Ս. Օծությունը, որ Իր հոգիին մեջ ծրարած Արարատյան աշխարհի հայրենական քաղցրությունները և Էջմիածնի սրբությունը կուգա իբրև մեծ Հյուրը և Տերը մեր սրտերուն և այս սրբազան ժառանգության:

Ձեր անձեն ճշմարիտ հոր մը և բարի հովիվի շունչն է որ կծավալի և որուն մեջ Լուսավորչի և իր արժանավոր հաջորդներուն, Ներսեսներու, Սահակներու և Խրիմյաններու սրտին տրոփն է որ կլսվի անպղտոր և արի հոգիի մը կենսունակությամբ:

Նորեն հովվապետի գավազանը առած օրհնելու, սփռելու և հրահանգելու եք ելել աշխարհացրիվ Ձեր հոտը, ս. Էջմիածնի և վերաշինվող Մայր հայրենիքի զգացումով ու գաղափարով:

Այդ զույգ զգացումներու ոսկի գետն է որ կհոսեցնեք տարիներե ի վեր արտաաահմանի մշուշներուն նստած Ձեր պանդուխտ զավակներու հոգիեն ներս:

Խոնարհաբար կեցած Ձերդ Վեհափառության առջև մտքիս մեջ կհնչե մեծ մարգարեին ձայնը. «Ո՛վ է սա որ դիմեալ գալ լեղումայ, կարմրություն ձորձոց իրոց ի բոսորայ, գեղեցիկ պատմունճանա և բուռն զօրութեամբ»:

Գեղեցիկ է Ձեր պատմունճանը, Վեհափառ Տեր, որովհետև Դուք արքան եք մեր սիրտերուն, կարմիր է ան, որովհետև ներկված է մեր պատմության արյան հնձանին մեջ:

Ավերներեն վերականգնող նորափետուր Մայր հայրենիքի կողքին, Ձերդ Ս. Օծությունը գիտցալ շինել, զարդարել և ծաղկեցնել Մայր Էջմիածինը: Հայ ժողովուրդը անցնող հիսուն տարիներուն պատմունճան հագցուց դարերե ի վեր ավերներուն մեջ նստած սգավոր Մայր Հայաստանին, իսկ Դուք այդ ծիրանին հագցուցիք Էջմիածինը խորհրդանշող ս. Կույսին: Անունք, այդ հավիտենական զույգ կույսերը, թոթափած դարերու փոշին այժմ իրարու կնային քաղցր ժպիտով, խրած սրբազան դանակը թշվառության և վշտի կոկորդին: Անողոր է գեղեցկության սերը և շինարարության ոգին: Այդ սերն ու ոգին ունեցաք Դուք մեր եկեղեցվո ավերներուն վիշտը վերածելու գոյացման ուժի:

Բարի գալուստ մեր սիրելի Վեհափառին»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ
ՏԱԾԱՐՈՒՄ
(1975 թ. հունիսի 20-ին)

Վեհափառ Հայրապետը, խորապես հուզված պատրիարք սրբազան հոր պերճիմաստ այս ուղերձից, խոսք առավ՝ առաջին իսկ առիթով հայրական Իր ողջույնը և օրհնությունը հաղորդելու հայոց պատրիարքին, սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությանը և տալու Իր պատգամը սաղիմահայ ժողովրդին:

Հայոց Հայրապետը նախ գոհություն մատուցեց Աստծուն, որ կրկին Իրեն արժանի դարձրեց «յուխտ և յերկրպագութիւն» գալու սուրբ քաղաք և սրբոց Հակոբյանց պատմական տաճարում անձամբ ողջունելու սրբոց Հակոբյանց վանքի գահակալին, միաբանությանը և հավատացյալ ժողովրդին: Վեհափառ Հայրապետն այնուհետև շեշտեց, որ Ինքը ջերմ սրտով ողջուն և օրհնություն է բերում մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ և Էջմիածնից, Հայոց աշխարհից և սուրբ գրական Արարատից, ուր, ստեղծված նոր պայմանների մեջ, իր պատմական հոգևոր, հայրենասիրական առաքելության վրա է կանգնած Մայր Աթոռ և Էջմիածինը, ուր Արարատի հավերժական նալվածքի տակ իր ազգային, մշակութային վերագարթոնքն է ապրում հայոց արի, բարի ու աշխատասեր ժողովուրդը:

Մայր Աթոռ և Էջմիածնի կողքին, առաջ Հայոց Հայրապետը, սրբոց Հակոբյանց այս պատմական Աթոռը՝ հայոց աղոթքի այս մեծ տունը, ամենապատիվ տ. Նիկիշե սրբազան պատրիարքի իմաստուն և կորովի ղեկավարության ներքո, զորանում, ծաղկում և փառավորվում է որպես լույսի և հույսի վառարան՝ կատարելու համար իր բացառիկ առաքելությունն արտասահմանի հայ եկեղեցական, ազգային և մշակութային կյանքի մեջ, առաքելություն, որը պիտի շարունակվի սփյուռքի մեր հավատավոր ժողովրդի ջերմ սիրով ու գուրգուրանքով, բարոյական և նյութական օժանդակությամբ դեպի հայոց առաքելական այս սուրբ Աթոռը:

Հայոց Հայրապետը ողջունի և օրհնության ջերմ մատյաններ ուղղեց նաև և. Երուսաղեմի քույր եկեղեցիների հոգևոր պետերին, եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնք եկել էին բաժանելու սրբոց Հակոբյանց միաբանության և ժողովրդի ուրախությունը՝ աղոթելով, որ քրիստոնեական եղբայրության, սիրո և միության ոգին էլ՝ ավելի ամրապնդվի՝ ի փառս Աստուծո Ավետարանի:


Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց նաև ներկայությունը պետական բարձրաստիճան ներկայացուցիչների, որոնք ամեն դյուրություն ընծայեցին, որպեսզի Հայոց Հայրապետի այցելությունը սուրբ երկիր լինի խաղաղ, ապահով և բարեհաջող:

Իր պատգամի ավարտին Հայոց Հայրապետն աստվածային օրհնություն բաշխեց լույսի տաճար Մայր Աթոռ և Էջմիածնից. և ողջունեց հաղորդեց հայոց վերածնված հայրենիքից, հայրենաբնակ հայ եղբայրներից ու քույրերից:

Հայ ժողովուրդը, եզրակացրեց Վեհափառ Հայրապետը, ուր էլ որ գտնվի, հայրենի հողի վրա թե սփյուռքի տարածքում, մեկ և անբաժանելի մի ոգեկանություն է: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում պահել ու պահպանել է այդ ոգեկանությունը:

Սրբոց Հակոբյանց Մայր տաճարում տեղի ունեցած սույն արարողությունից, ողջունի և բարիգալատյան խոսքերի փոխանակումից հետո Հայոց Հայրապետը մեծաշուք հանդիսությամբ առաջնորդվեց պատրիարքարան, ուր բոլոր ներկաները, սուրբ Աթոռի միաբանությունը, հոգևորական դասը, Ժառանգավորաց, և. Թարգմանչաց և Տառնության վարժարանների ուսուցչական կազմը և աշակերտությունը, բազմահազար ժողովուրդ աջահամբույրով առաջան Նրա օրհնությունները:

Հայոց Հայրապետն Իր տան մեջ էր՝ շրջապատված ամենապատիվ սրբազան պատրիարք հոր, սրբոց Հակոբյանց միաբանության ջերմ հոգատարությամբ, գուրգուրանքով և խանդավառ սիրով:



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԵՂԻՇԵ, Տ. ԾՆՈՐՀԲ ՊԱՏԻՄԱՐԿԱՆԵՐԸ ԵՎ ԼԱՏԻՆԱՑ ԺԱԿՈՄԻ ԲԵԼԹԻՏԻ ՊԱՏԻՄԱՐԿԸ
ՍՐԲՈՑ ՀԱՅՈՐԹԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՄԱՂՈՒՄ. ԵՐԴԻԱՍՏԱՆԸ

Մայրավանքի լուսավորված, դրոշագարդված բակում ուրախությունն ու ոգևորությունը Հայոց Հայրապետի գալստյան առիթով շարունակվեց մինչև ուշ գիշեր:

Հունիսի 22-ը սրբոց Հակոբյանց վանքի պանծալի տարեգրության մեջ կմտնի որպես անմոռանալի և հիշարժան մի թվական Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաբեր երկրորդ այցելությամբ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 23-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, առաւելոյան ժամը 12-ին, պատրիարքարանի շքեղ դահլիճում ընդունեց մի շարք պաշտոնական այցելություններ Երուսաղեմի հոգևոր պետերի, հարանվանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների, այդ թվում՝ Երուսաղեմի հունաց տ. Բենեդիկտոս պատրիարքի և նրա շքախմբի անդամների, լատինաց տ. Միաքոմո Բելթրիտի պատրիարքի, սուրբ երկրի Ֆրանչիսկյան միաբանության՝ գլխավորությամբ մեծ կուստող հայր Սաքիի, ինչպես նաև ղպտիկների, հաբեշների, ասորիների, անգլիկանների, ավետարանականների այցելությունները:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետն ընդունեց այցելությունը Երուսաղեմում ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության, որին գլխավորում էր Արևմտյան Եվրոպայի Էկզարխ Ֆիլարետ միտրոպոլիտը: Ռուս եկեղեցու պատվիրակությունն այդ օրերին սուրբ երկրում էր գտնվում Երուսաղեմի «Ռուսաց եկեղեցու կրոնական առաքելության» հրավերով:

Ժամը 16-ին Հայոց Հայրապետը պատրիարքարանում ընդունեց դարձյալ այցելությունները Երուսաղեմում դիվանագիտական մարմինների ներկայացուցիչների, հյուպատոսների, պետական բարձրաստիճան պաշտոնատարների, ոստիկանապետի, բանակի հրամանատարի և այլ պաշտոնական անձանց:

Բոլոր այցելուների բարիգալստյան և ողջույնի խոսքերի մեջ արտահայտվում էր այն անկեղծ ուրախությունը, որով համակված էր սուրբ քաղաքը Հայոց Հայրապետի այստեղ գտնվելու օրերին:

ԺԱՄԱՆՈՒՄ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱԼԵԿՍ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ

Հունիսի 23-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 20.30-ին, տ. Եղիշե սրբազան պատրիարքի հրավերով, ս. Աթոռ ժամանեց Հայկական բարեգործական ընդհանուր միության ցկյանս նախագահ, ազգային հանրաժանոթ բարերար Ալեքս Մանուկյանը իր հարգելի տիկնոջ՝ Մարի Մանուկյանի, և իր երկու թոռնիկների հետ:

Տեր և տիկին Մանուկյանները ս. Աթոռ ժամանեցին՝ տեսակցություն ունենալու Ամենայն Հայոց Հայրապետի հետ և մասնակցելու իրենց անունը կրող նորակառույց Ժառանգավորաց վարժարանի և ընծալարանի բացման հանդիսություններին:

Լիդիայի միջազգային օդանավակայանում տեր և տիկին Ալեքս և Մարի Մանուկյաններին անձամբ դիմավորեց և բարի գալուստ մաղթեց տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝ ընկերակցությամբ տ. Շահե արքեպիսկոպոսի և միաբանության այլ անդամների:

Մայրավանքի մեծ դարբասի առաջ մեծարգո հյուրերին ծաղիկներով

և ծախերով դիմավորեցին ժառանգավորաց, ս. Թարգմանչաց և Տառնոյան վարժարանի տեսչական կազմն ու ուսանողությունը: Հարգելի հյուրերը եկեղեցական թափոքով և ս. Աթոռի հիմն «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեցին պատրիարքարան, որտեղ աջահամբույրով ստացան Հայոց Հայրապետի օրհնությունը:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետը, հանուն իր, հանուն Մայր Աթոռ և Էջմիածնի, հանուն տ. Եղիշե սրբազան պատրիարքի և ս. Աթոռի, ջերմորեն ողջունեց ժամանումը տեր և տիկին Ալեքս և Մարի Մանուկյանների:

Պարոն Ալեքս Մանուկյանը վերջում իր և իր տիկնոջ կողմից շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց Հայոց Հայրապետին՝ բարիգալատյան Նրա ջերմ խոսքերի համար, ինչպես նաև սրբազան պատրիարք հորը՝ Երուսաղեմ գալու նրա ջերմ հրավերի համար:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԵԹՂԵՆԵՄԻ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԱՅՐՈՒՄ

Հունիսի 24-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը սրբազան պատրիարքների և Երուսաղեմ ժամանած բոլոր հոգևորականների, ուխտավորների և սաղիմահայ ժողովրդի մի մեծ խմբի ողեկցությամբ, ավելի քան հիսուն ավտոմեքենաների շքերթով ուխտի գնաց Բեթղեմեմ՝ Քրիստոսի Ծննդյան սուրբ այր:

Դեպի Բեթղեմեմ տանող ճանապարհի կեսին, հունական ս. Եղիս վանքի մոտ, Հայոց Հայրապետին պաշտոնապես դիմավորեցին Բեթղեմեմի քաղաքագլուխը, եկեղեցական պետերը և պետական բարձրաստիճան ալ անձնավորություններ:

Բեթղեմեմում, ս. Ծննդյան տաճարի ընդարձակ հրապարակի առաջ, կազմվեց եկեղեցական մեծահանդես մի թափոք, և Հայոց Հայրապետը «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ մուտք գործեց ս. Ծննդյան տաճար՝ Բեթղեմեմի բոլոր եկեղեցիների զանգերի զվարթ դողանջի ներքո: Ապա իջավ ս. Ծննդյան այր «լուստ և երկրպագությոն»: Այստեղ կատարվեց Ծննդյան արարողությունը, որից հետո Հայոց Հայրապետը ս. Ծննդյան տաճարի հայկական բաժնում ողջունեց և օրհնեց բոլոր ներկաներին:

Այնուհետև նույն հանդիսավորությամբ Հայոց Հայրապետն առաջնորդվեց Բեթղեմեմի հայոց ս. Ծննդյան վանքի տեսչության, ուր ընդունեց քաղաքի հոգևոր ներկայացուցիչների և ալ պաշտոնական անձանց այցելությունները:

ԲԵԹՂԵՆԵՄԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՊԱՏՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ժամը 13-ին Բեթղեմեմի արաբ քաղաքապետությունն իր պաշտոնատեղիում Հայոց Հայրապետի պատվին կազմակերպեց շքեղ ընդունելություն՝ ավելի քան երեք հարյուր հրավիրյալների մասնակցությամբ:

Սույն ընդունելությանը ներկա էին, բացի Վեհափառ Հայրապետի շքախմբից և հայ ուխտավորներից, բազմաթիվ շեյխեր, գյուղապետներ, արաբ պետական և զինվորական իշխանությանց ալ ներկայացուցիչներ:

Ընդունելության ժամանակ Բեթղեմեմի մեծահարգ քաղաքագլուխը՝ Իլիաս Ֆրեժը, և Հայոց Հայրապետը փոխանակեցին բարիգալատյան և ող-



«ՅՈՒՆՏ ԵՒ ՅԵՐԿՐԿԱԳՈՒԹԻՒՆ» Ս. ԾՆՆՆԱՆ ԱՅՐՈՒՄ. ԲԵԹԼԵՄ

ջույնի խոսքեր: Թարգմանի պարտականությունը ինչպես ամեն տեղ, այնպես էլ այստեղ կատարում էր **տ. Շահե արքեպ. Աճեմյանը:**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՆԻՑ ՄԻՆԻՍՏՐԻ ՄՈՏ

Հունիսի 24-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Հայոց Հայրապետը, տ. Եղիշե և տ. Շնորհք սրբազան պատրիարքների ու բարձրաստիճան հայ հոգևորականների ուղեկցությամբ, մասնավոր հրավերով այցելեց Երուսաղեմում կրոնից մինիստր դոկտ. Ռաֆայել Իցհակիմ, պատկանելու շենքում, ուր պարոն կրոնից մինիստրը և Հայոց Հայրապետը բարիգալստյան ու ողջույնի ճառեր փոխանակեցին:

ՀԱՄԵՐԳ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Երուսաղեմի քաղաքապետարանը, ի պատիվ Հայոց Հայրապետի և Ալեքս—Մարի Մանուկյանների, ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի նորակառույց շենքի բացման առիթով, Երուսաղեմի թատրոնում կազմակերպեց համերգ, որին ներկա եղան Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարքները, տեր և տիկին Ալեքս—Մարի Մանուկյանները, բոլոր հայ հոգևորականներն ու ուխտավորները. Երուսաղեմի ծանոթ ազգայիններ: Թատրոնի շքեղ դահլիճը լեւի—լեցուն էր Երուսաղեմի հայ և օտար երաժշտաւեր հասարակությամբ:

Համերգը բաղկացած էր երկու մասից. առաջին մասում ելույթ ունեցավ Հայ երիտասարդաց երգի և պարի երկսեռ համույթը՝ Հայկական ծրագրով՝ խմբավար Սահակ Գալստյանի շնորհալի ղեկավարությամբ:

Համերգի երկրորդ մասում Երուսաղեմի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը կատարեց Չայկովսկու, Ռախմանինովի, Բիզեի, Շչեդրինի գործերից և ամերիկահայ կոմպոզիտոր Ռիչարդ Յարդըմյանի «Հայկական սյուիտա»-ն:

ԾԱՂԿԵՊԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՆԱՅԻԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀՈՒԾԱՐՁԱՆԻՆ

Հունիսի 25-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետն ուղեկցությամբ սրբազան պատրիարքների և մի մեծ շքախմբի այցելեց Երուսաղեմում երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հիտլերյան Գերմանիայի կողմից կատարված հրեական ցեղասպանությանը նվիրված հուշարձանին, ուր և ծանկեպսակ զետեղեց:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՊԱՏՐԻԱՐԶԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 12-ին, պատրիարքարանում, տիար Ալեքս Մանուկյանի առաջարկով, Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվեց խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին **տ. Եղիշե պատրիարքը, տ. Թորգոմ, տ. Շահե, տ. Վաչե սրբազանները, պրն. Տատուր Տատուրյանը, պրոֆ. Ավետիս Սանճյանը, պրոֆ. Վազգեն Բարսեղյանը և պրոֆ. Դենիզ Փափազյանը:** Խորհրդակցական տույն ժողովի նպատակն էր Ալեքս—Մարի նորակառույց ժառանգավորաց վարժարանի համար որակյալ դասախոսական կազմ ապահովելու և ս. Երուսաղեմը սիյուրքի հայ կյանքում կրթական մշակութային կենտրոն դարձնելու հարցերի քննարկումը:

Հաջորդ օրերին ևս նույն նպատակով գումարվեցին մի քանի այլ խորհրդակցական ժողովներ, ուր ընդունվեցին գործնական որոշումներ այդ ծրագրի իրագործման կապակցությամբ:

Որոշվեց ստեղծել նախագահություն՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ: Նախագահության կազմում ընդգրկվեցին տ. Եղիշե և տ. Շնորհք պատրիարքները, տ. Սերովբե, տ. Թորգոմ, տ. Վաչե առաջնորդ սրբազանները: Կազմվեցին նաև ակադեմիական կենտրոնական, գործադիր և ֆինանսական հանձնաժողովներ:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄ ԱԼԵՔՍ-ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԺԱՌԱԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Հունիսի 25-ին, չորեքշաբթի օրը, ժամը 17-ին, խանդավառ իրադրության մեջ, աղոթքով և օրհնությամբ կատարվեց Երուսաղեմում սրբոց Հակոբյանց վանքի հանդիպակաց հողամասի վրա Ալեքս և Մարի Մանուկյանների անունով կառուցված Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի շենքի հանդիսավոր բացումը:

Բացման հանդիսությանը ներկա «Մարմարա» թերթի հրատարակության տնօրեն Ռ. Հատտեճյանը գրում է.

«Երուսաղեմի մեջ ստեղծված հանրային ոգևորությունը իր գագաթնակետին հասավ երեկ, երջանկությամբ և հպարտությամբ լեցնելով մեր կուրծքերը և անգամ մը ևս ապրեցնելով մեր ժողովրդին շինարար և լուսատենչ ոգին:

Վեհափառ Հայրապետին ժամանումեն և օրերն ի վեր շարունակվող այնքան հոգեպարար հանդիսություններեն վերջ, երեկ կատարվեցավ վեհաշուք բացումը նորակառույց Ժառանգավորաց վարժարանին և ընծայարանին, որոնց շինությունը իրագործվեցավ մեծամուն բարերար և Հայկական բարեգործ. ընդհ. միության ցկյանն նախագահ տիար Ալեքս Մանուկյանի հավետ ծափահարելի ջանքերով»:

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը պատրիարքարանից եկեղեցական թափորով, տ. Եղիշե տ. Շնորհք սրբազան պատրիարքների, ողջ հայ հոգևորականության ողեկությամբ, առաջնորդվեց կրթական այս օջախի նորակառույց շենք՝ կատարելու նրա պաշտոնական բացումը:

Նորակառույց վարժարանի՝ մայրավանքի մուտքին մայրող արևելյան պատի վրա դրոշմված էր հետևյալ արձանագրությունը.

Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգատրաց վարժարան Եւ ընծայարան

Բացման եկեղեցական արարողության ավարտին Ալեքս-Մարի Մանուկյանները, որոտընդոստ ծափերի ներքո, կտրեցին նորակառույց վարժարանի մուտքի ծապավենը: Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ թափորը պաշտոնապես մուտք գործեց շենք, որի հանդիպակաց պատին, գեղեցիկ մարմարե տախտակի վրա, կար հետևյալ արձանագրությունը.



Տե՛ր եւ՛ Տիգրէն Ա՛լեքս-ՄԱ՛րի ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԸ ԿՏՐՈՒՄ ԵՆ ՆՈՐԱՆԱՌՈՒՅՑ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԺԱՊԱՎԵՐԸ,
ԶԱՄԻՑ՝ Տ. ՕԱԼԵ ԱՐԳԵՊ. ԱԺԵՄՅԱՆԸ

Ի փառս Աստուծոյ
 Ի լուսաւորութիւն եկեղեցւոյ
 Եւ ի վաշեղումն ազգիս
 Բացան դրունք ուսումնարանիս
 Շնորհաբաշխ ձեռամբ
 Տ. Տ. Վազգէն Առաքին
 Կաթողիկոսին Ամենայն Հայոց
 Պատրիարքութեան առաքելական Աթոռոյս
 Տ. Եղիշէ սրբազան արքեպիսկոպոսին
 Ի թուին Տեառն 1975-ի յունիսի 25

Այնուհետև ուսումնարանի ընդարձակ բակում տեղի ունեցավ բացման պաշտոնական բացօթյա հանդիսությունը՝ ի ներկայության հոծ բազմության:

Հանդիսությունը ներկա եղան մաս քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, Երուսաղեմի քաղաքագլուխը, միևնույն կրոնից մախարաբի գլխավորությամբ:

Տ. Շահէ արքեպ. Աճեմյանը հանդես եկավ օրվա հանդիսությանը նվիրված անգլերեն բովանդակալից մի ճառով:

Այս հանդես եկավ կրոնից միևնույն օրվա հանդիսության մշակութային նշանակությանը նվիրված մի ճառով՝ բարձր գնահատելով պրն. Ալեքս Մանուկյանի բարերարությունը: Այս առթիվ կրոնից միևնույն օրվա մեղավ նվիրեց պրն. Ալեքս Մանուկյանին՝ ի նշան երախտագիտության և շնորհակալության, հայտնելով մաս, որ քաղաքապետարանի որոշումով դպրոցի այս հրապարակը հետ այսու պիտի կոչվի Ալեքս Մանուկյան հրապարակ և պիտի նշվի Երուսաղեմի տեսարժան վայրերի քարտեզի վրա:

Այնուհետև ընդարձակ և բովանդակալից ճառով հանդես եկավ մեծահուն ազգային բարերար Ալեքս Մանուկյանը:

ԱԼԵԿՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾԱՌԸ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

«Վեհափառ Տեր,

Ամենապատիվ պատրիարք սրբազան հայրեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր և

Հարգելի հյուրեր,

«Հերթը մի պահ քոնն է հիմա,
 Դու էլ նայիր սեզ գազաթին ու անցիր»)

ըսած է մեր իմաստուն բանաստեղծը՝ Ավետիք Իսահակյան, ակնարկելով Արարատին: Մենք ևս կրնանք միևնույն մտածումներով մոտենալ Երուսաղեմին, որովհետև, եթե Արարատը հանդիսացավ ազգային և աշխարհագրական բարձունք մը՝ Երուսաղեմը միշտ մնաց հոգևոր բարձունք մը՝ մեզի համար:

Կերպով մը՝ հայությունը քրիստոնեացավ Երուսաղեմի մեջ, և քրիստոնեությունը հայացավ սուրբ Էջմիածնի մեջ. և այդ երկու կեդրոնները դարերով հանդիսացան մեր հավատքի գույգ բևեռները:

Հայոց ներկայությունը այս սուրբ քաղաքին մեջ արձանագրված է քրիստոնեության առաջին դարերուն իսկ: Կըսվի թե արդեն վեցերորդ դարուն շուրջ յոթանասուն վանքեր գոյություն ունեին, հիմնված ու պահպան-

ված Հայաստանի իշխաններուն կողմէ, ինչպէս Արծրունցաց վանք, Մամիկոնեից վանք, Արշակունցաց վանք և այլն:

Այնուհետև ամեն սերունդ վանք մը, գանձ մը, խաչքար մը կամ նույնիսկ կանթեղ մը ավելցնելու ձգտած է քրիստոսակոյխ այս հողերուն ու բլուրներուն վրա:

Ամեն սերունդ՝ ավանդ մը ձգելով Երուսաղեմի մեջ՝ հաւատացած է որ **հավիտենական կկտակէ** իր գանձերը: Եվ բոլոր դարերուն ալ հաւատքի պայծառ լույս մը արձակված է այս սրբազան քաղաքի գմբէթներէն ու քարերէն. և մեր նախահայրերը, **դէպի լույսը սուրացող** թիթեռներու նման, միշտ **ձգտա՛ծ** են այդ լույսին, երբեմն լուսավորվելով ու երբեմն ալ այրելով անկէ:

Երուսաղեմ տեսած է հայոց Հեթում Երկրորդ հաղթական արքայի փառքը, ինչպէս ընդունած է խոնարհ աղոթքը Կիլիկիոյ Լևոն Հինգերորդ պարսոյալ թագավորին:

Ամեն հայ, նվաճող արքայէն մինչև ամենէն համեստ ուխտավորը, **բա՛ն** մը բերած է Երուսաղեմ. ոմանք բերած են իրենց գանձը, ուրիշներ՝ իրենց սուրբ մատչանքները, և դեռ ուրիշներ աղոթքը և հուսահատներ՝ իրենց արցունքն ու հույսը: Եվ այս կերպով մեր կյանքին թելը հյուսված է Երուսաղեմի պատմության և **նույնացա՛ծ** է անոր հետ:

Սակայն, երբ մեր ակնարկը դարձնենք դէպի Երուսաղեմի բլուրները՝ այնտեղ կանգնած հաւատքի տունները պիտի վկայեն թէ այս սուրբ քաղաքը նվիրական է նաև բազմաթիւ այլ ժողովուրդներու: Բոլոր՝ քրիստոնյաները, բոլոր՝ հրեաներն ու բոլոր՝ իսլամները իրենց նայվածքը ուղղած են Երուսաղեմին. ու դարերով այնքան բուռն սիրո առարկա դարձած այս քաղաքը հանդիսացած է նաև վայրը ահեղ մարտերու: Հզոր բանակներ մերթ փոքրված են անոր բերդերուն առջև ու մերթ նվաճած են զայն՝ հարյուր հազարներ նահատակելով, Քրիստոսի արշաւք հագեցած այդ հողերուն վրա:


Իսկ հայ Երուսաղեմը, զուրկ ըլլալով բանակներու պաշտպանութենէն, երբեմն ճգմված է օտարներու կրունկներուն տակ ու երբեմն հարություն առած՝ ս. Հարության տաճարի ավերակներէն:

Երևակայեցէք պահ մը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց արի միաբանության դարերու կյանքը. երբ տարբեր կրոններ ու դավանանքներ, հսկա պետությանց զորության ասպավինած, մերթ կտիրապետէին Երուսաղեմի ու մերթ կխորտակվէին անոր դուռներուն առջև, մեր առի մը միաբանները հայոց իրավունքները կպաշտպանէին այս սուրբ քաղաքին մեջ: Եվ ասիկա՝ ոչ միայն մեկ տարի, մեկ տասնամյակ կամ մեկ դար, ավելի քան տասնհինգ դար շարունակաբար:

Թագավորներ ու իշխաններ եկած ու անցած են Երուսաղեմէն, երբեմն ավերակ և երբեմն ալ նոր գմբէթներ ձգելով իրենց ետին. և այդ բոլոր վերիվայրումներուն մեջ սուրբ Հակոբյանց ուխտոյալ միաբանությունը **ամուր** կառչած է այս աղոթատեղիներուն և պահպանած է հայոց ներկայությունը այս սրբազան վայրերուն մեջ:

Երբեմն, վտարված են անոնք իրենց վանքերէն, խոշտանգվա՛ծ, սպանվա՛ծ ու ծանր տուգանքներու ենթարկված, սակայն, ի վերջոյ **վերադարձա՛ծ** են այստեղ, շարունակելու այն աղոթքը, զոր իրենց նախահայրերը սկսած էին դարեր առաջ:

Ի՞նչն էր որ այս միաբանությունը այնքան ամուր կերպով կապված պա-



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀՈՒՆԱՑ Տ. ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՏՐԻԱՐԿԸ, Տ. ԵՂԻՇԵ ԵՎ Տ.
ԾՆՈՐՀԻ ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐԸ ԵՎ Տ. ՍԵՐՈՎԵՆ ԱՐԿԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀԱՅՈՑ
ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆՈՒՄ. ԵՐՈՒՍԱԴԱՆ

հեց այս սուրբ քաղաքին, եթե ոչ՝ իր հզոր հավատքն ու հայկական իմաստությունը, վերապրելու՝ իմաստությունը:

Արդարև, ինչ որ հույներ և լատիններ կարողացած են ընել հսկա բանակներով և միլիոնավոր հետևորդներով՝ հայերը կարողացած են ընել պարզապես հավատքով և իմաստությամբ: Ու մարդ Երուսաղեմ պետք է գա՝ ճանչնալու համար հայուն հավատքին գործությունը:

Ամեն մեկ վանքի, ամեն մեկ խորանի և ամեն մեկ կանթեղի դիմաց դարերով աղոթելով է որ պաշտպանված են հայոց իրավունքները այստեղ: Եվ հրաշքը այն է որ տակավին կշարունակվի այդ իմաստուն աղոթքը ու պիտի շարունակվի նաև ապագային՝ հավերժորեն դրոշմված պահելու համար հայոց անունը այս վանքերում ու սրբազան քարերում վրա:

Երուսաղեմի միաբանությունը, սակայն, երբեք միմյակ չէ մնացած իր պայքարին մեջ. հայ ժողովուրդը ո՛ր որ ալ գտնված է՝ իր նեցուկն ու պաշտպանությունը հասցուցած է անոր: Սուրբ Էջմիածնի գահակալներեն ինչպես Պոլսո ամիրաներն ու պարզ հավատացյալները կողքի՛ն կանգնած են մեր պատրիարքության:

Ճակատագրին մեկ խաղով՝ հայ Երուսաղեմի փառքը դարձած է նաև անոր տառապանքի շղթան. և դարերու վրա երկարող այս զուգորդությունը ամենն խորհրդանշական կերպով պարզված է Գրիգոր Ծղթայակիր պատրիարքի կյանքին ընդմեջեն: Արդարև, սրբակրոն այդ եկեղեցականը, ԺԸ դարու սկիզբին պատրիարքական գահ բարձրանալով կորոշեր իր վզին շղթա կրել, այնքան ատեն «որքան պարտուց ծանրության տակ կհեծե Տյառնեղբոր Աթոռը»: Այդ օրերուն ու Էջմիածնի Ամենայն Հայոց Աստվածատուր Հայրապետն ու Պոլսո Հովհաննես Կոլոտ պատրիարքը, ինչպես համայն հայ ժողովուրդը ձեռք կմեկնեն Երուսաղեմին, որպեսզի պատրիարքն ու պատրիարքությունը ձերբագատվին շղթաներեն:

Դարերու ընթացքին այդ շղթան կերպով մը մի՛շտ ծանրացած է Երուսաղեմի պատրիարքության վիզին. և անոր միաբանները համբերությամբ, տառապանքով ու փառքով կրած են այդ շղթաները, միշտ հավատալով որ իրենց կողքին պիտի գտնեն նվիրապետական մեր մյուս Աթոռներն ու հավատացյալ ժողովուրդը:

Զարմանալի չէ, ուրեմն, որ այսօր, Երուսաղեմի պատրիարքության կյանքին այս պատմական հանգրվանին, աշխարհի չորս ծագերեն հայեր եկած են խնդակից դառնալու միաբանության ուրախության: Մանավանդ, այստեղ ուխտի եկած է Ամենայն Հայոց առաքինազարդ Հայրապետը, իր օրհնությունը բերելու այս ձեռնարկին ու այստեղ կատարվող գործին: Վագդեն Վեհափառի ձեռքով՝ ու Գրիգոր Լուսավորչի ոսկեղեն Աջին օրհնությունն է որ կբաշխվի մեր վրա: Այնպես ինչպես Քրիստոս խաչին տանջանքեն բարձրացավ երկինքի արքայության՝ մարդկության փրկության համար՝ նույնպես ալ Գրիգոր Լուսավորիչ Խորվիրապի տանջանքներեն բարձրացավ սուրբ Էջմիածնի գահը՝ հայոց փրկության համար. և այսօր, դարեր վերջ, այս սուրբ քաղաքին մեջ, ի մի կուգան Քրիստոսն ու Լուսավորիչը, հայությունն ու մարդկությունը, և մենք բախտավոր վկաները կդառնանք այս պատմական եղելության:

Բախտավոր կզգամ մանավանդ ե՛ս որ այսօր ուխտի եկած եմ հոս, այնպես ինչպես դարեր առաջ ուխտի եկած էին Երուսաղեմ՝ մեր նախնիքները՝ Անիեն, Ակնեն, Պոլսեն կամ Իզմիրեն: Բախտավոր կզգամ որ վկան կդառնամ այդ պատմական եղելության և այդ առիթով ինձի ևս պատեհությունը

կտրվի քա՛ր մը գետեղելու, լույսի կոթո՛ղ մը բարձրացնելու այս սուրբ երկրին մեջ:

Մեր նախահայրերը, հարկավ, իմաստություն մը ունեին, երբ կհավատային թե Երուսաղեմի մեջ ավելցած ամեն քար ու կանթեղ՝ հիմնաքարն ու արյունը պիտի դառնային իրենց կյանքին: Ու մենք, անոնց խոսքի ժառանգորդները, միևնույն հավատքով ու նվիրումով կուզանք Երուսաղեմ, կաթիլ մը յոտ ավելցնելու անոնց վառած կանթեղին ու շարունակելու հավատ անոնց սրբազան հավատքն ու ավանդությունը:

Հրաշքներու լույսով ողողված այս երկինքին տակ՝ գիտենք թե բազմաթիվ սիրտեր բացված են խոստովանության սեղաններուն առջև. հետևաբար, իբրև հետին ուխտավոր մը այս քաղաքին մեջ՝ թող թույլ տրվի նաև ինձի ընել խոստովանություն մը. արդարև, եթե Աստված տված է ինձի նյութական բախտավորություն մը, շնորհած է նույն ստեղծավելի մեծ բախտավորություն մը՝ տալո՛ւ երջանկությունը. և ինձի համար աշխարհի վրա տավորություն մը՝ ապրելու մեծ հրճվանք՝ քան նյութականը հոգեկանի վերածելու երջանկությունը: Ամեն գմբեթ որ կկանգնի, ամեն լույսի տաճար որ կբարձրանա՝ կաթիլ՝ կհարստացնե զիս, ավելի՛ կլիացնե զիս ու կյանքս իմաստով կլեցնե. որովհետև, նյութականի հոգեկանի վերածումը՝ անկայուն աշխարհեն մնայո՛ւն աշխարհի անցում մը կնշանակե: Բոլորս ալ անցավոր ենք այս աշխարհին մեջ, մեծատուն ըլլանք թե խոսքի քանկոր. բայց կմնա՛ այն կոթողը զոր կկանգնենք, այն գանձը զոր հավիտենության կհանձնենք և այն ավանդը զոր մեր հարազատ ժողովուրդին կձգենք:

Հոգեկան այսպիսի ապրումներեն ծնունդ առավ Ժառանգավորաց վարժարանի այս քարեղեն կոթողը, որ վստահ ենք, կանգուն պիտի մնա տակավին, երբ բոլորս մեկնած ըլլանք արդեն այս աշխարհեն: Ու եթե դարեր ետք հայ վանական մը պիտի պատրաստվի այստեղ՝ մեր սուրբ վայրերը պահպանելու, մեր հավատքը հավերժացնելու և հայության անունը պանծացնելու՝ ահա ա՛յդ գործն է որ պիտի մնա մեզի և այդ իրողությունն է որ պիտի վարձատրե մեր զոհողությունները:

Ավետարանական խոսքով՝ Աստուծո տվածն է որ կվերադարձնեմ իրեն. և ինչ որ տվավ ինձի իմ ժողովուրդս, իբրև ազգային ապրում ու հավատք, ա՛յն է որ կվերադարձնեմ իրեն ամենա՛յն սրտով, անասկա՛րկ բաշխումով և ամբողջական նվիրումով:

Ահա թե ինչո՛ւ ըսի թե հերթը մերն է հիմա Երուսաղեմի մեջ քար մը ավելցնելու և... անցնելու:

Կհուսանք ու կհավատանք որ Ժառանգավորաց այս շենքը նշանակալից խթան մը պիտի հանդիսանա պատրիարքության հառաջիկա գործունեության մեջ. շենքի մը նյութեղեն կառույցը այնքանով իմաստ կատանա որքանով որ հոգի՛ կմտնե անոր մեջ: Վստահ ենք թե պատրիարք սրբազան հայրը, ինչպես անոր շուրջ խմբված միաբանությունը, իրենց կրթական ու հոգևոր գործունեությամբ լիովին պիտի արժևորեն Ժառանգավորաց այս շենքը:

Ամբողջ մեր պատմության ընթացքին հոգևոր ու մտավոր սնունդի աղբյուր հանդիսացած է Երուսաղեմը մեզի, մանավանդ այնպիսի ժամանակներու երբ հայրենի աշխարհը կործանումի ու քանդումի եղթարկված էր:

Այսօր ճիշտ է թե մեր պատմական հայրենիքի մեկ փոքրիկ լեռնաշխարհը կապրի իր վերածնունդը և իր բարիքները կհասցնե արտասահմանի

հայության. սակայն Երուսաղեմի պատրիարքության վիճակված է բոլորովին տարբեր ու եզակի դեր մը:

Ամենն դժվար ժամանակներուն ալ, Երուսաղեմ կղերականներ հասցուցած է սփյուռքին, երբ ինք այնքան կարիքը ունեցած է միաբաններու. և այսօր, աշխարհի տարբեր անկյուններու վրա Երուսաղեմի միաբաններու գործունեությունը կկազմեն անոր փառապսակը:

Երուսաղեմը **կապրի'** սփյուռքի հայությամբ, սփյուռքի հայությունն ալ՝ Երուսաղեմով. այնքան ատեն որ **կանգուն** ու պայծառ կմնա Երուսաղեմի վանքը՝ վստահ ենք թե անխափան պիտի մնա սփյուռքի հոգևոր մատակարարությունը:

Մեր պատրիարքությունը այստեղ կգտնվի յուրահատուկ դիրքի մը մեջ. աշխարհի այս չարչարյալ հանգույցին վրա Եղիշե պատրիարք Տերտերյան, հետևելով իր նախորդներու իմաստության, կարողացած է անվտանգ պահել մեր իրավունքները և իրագործել շինարարական ծրագիրներ:

Մյուս կողմն պատրիարք հայրը ամենայն հավատարմությամբ պաշտպան կանգնած է սուրբ Էջմիածնա հեղինակության ու վարկին, անխախտ պահելով եղբայրական կապը մեր նվիրապետական սուրբ Աթոռներուն միջև:

Վերջապես Երուսաղեմը, հայրենիքեն ետք, ամենն հարուստ գանձատունն է մեր մշակութային ժառանգությանը. ժառանգություններ, որոնք թե՛ ազգային հպարտության և թե՛ մտավորական կյանքի բարգավաճման աղբյուրներ են մեզի համար:

Հակառակ աղետալի պատերազմներուն և ավերներուն՝ այսօր Երուսաղեմը հպարտ է իր շինարարական իրագործումներով և իր հոգևոր առաջնորդության գիտակցությամբ: Երջանիկ ենք որ մեր այցելությունը ևս կգուզադիպի շինարարական այդ ծրագրերուն մեկ կարևոր հանգրվանին:

Այս հանգրվանը իր պատմական նշանակությունը կստանա մանավանդ Ամենայն Հայոց Հայրապետին օրհնաքեր ներկայությամբ: Հայոց Հայրապետը, Իր երանաշնորհ նախորդներուն նման գիտակից է Երուսաղեմի ազգային ու միջազգային նշանակության և այդ իսկ պատճառով եկած է իր ներկայությամբ **փառավորելո՛ւ** այս առիթը:

Սուրբ Էջմիածինը մեր նախահայրերուն **ձեռակերտն** է, իսկ Հայոց Հայրապետը՝ այդ սրբազան ձեռակերտեն թխող **կենդանի՝ շունչ** և օրհնություն: Հոն ուր կերթա ան՝ մեր պատմության արձագանքները կհետևին իր քայլերուն. Իր անձին, խոսքին ու շունչին մեջեն մենք կլսենք մեր նախահայրերուն ձայնն ու անոնց կամքին արտահայտությունը:

Այսօր Վեհափառի անձով այստեղ ներկա է **ամբողջ** հայրենիքը և **ամբողջ** Հայաստանյայց եկեղեցին: Այս պատեհությամբ մեր հոգիները կլեցվին ջերմ հրավանքով, որովհետև մենք հավատացած ենք թե Էջմիածինը հավիտենական առաքելություն մըն է մեր ժողովուրդին համար. և անոր հպումն ու օրհնությունը՝ ամեն ձեռնարկ կկոչեն հավիտենական:

Ահա այսպիսի ջերմ հավատքով է որ կողջունենք Ամենայն Հայոց Հայրապետին ներկայությունը մեր մեջ:

Այս հանդիսությունը գեղեցիկ պատեհություն մը եղավ նաև իրարու մոտ քերելու Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետական երեք Աթոռներու գահակալները: Դարերու ընթացքին մեր նվիրապետական Աթոռները միշտ լծակից ու գործակից հանդիսացած են իրարու, այնքան ատեն որ թույլատու եղած են քաղաքական արտաքին պայմանները:

Այսօր Երուսաղեմի սրբազան պատրիարքին կողքին՝ մասնավոր հաճույք է ողջունել նաև Պոլսո պատրիարքը՝ հանձնին ամենապատիվ տեղ Ենոթիք սրբազանի: Պոլսո Աթոռը ևս պատմական դեր մը կատարած է մեր ժողովուրդի ճակատագրին մեջ, և Ենոթիք պատրիարք, դժվար պայմաններու տակ, կաշխատի պատրիարքությունը պահել իր պատմական ստաբիլության մեջ: Ենոթիքի սնոր անձնակեր ճիգերուն սուրբ Խաչ դպրեվանքը ևս կրերէ իր մասնակցությունը հայոց հոգևոր կերտումի ընդհանուր ճիգին:

Մեր պատմության մեջ Պոլսո պատրիարքները միշտ փութացած են հասնիլ Երուսաղեմի օժանդակության, ամեն անգամ որ տագնապի մը մեջ եղած է ան. սակայն այսօր ուրախալի է որ Պոլսո ամենապատիվ պատրիարքը կու գա այստեղ վկա՛ն հանդիսանալու շինարար ձեռնարկի մը:

Ենոթիքի անձնակազմը Վեհափառ Հայրապետին, մեր զույգ պատրիարքներուն, Ծափե արքեպիսկոպոսին, սուաջնորդ սրբազան հայրերուն, հոգևորական և աշխարհական հյուրերուն և ամբողջ միաբանության:

Վեհափառ Հայրապետին օրհնությամբ՝ Էջմիածնի լույսով օծվեցաւ Ժառանգավորաց շենքին ճակատը: Ու կրածնվինք ձեզմե այն վստահության որ այդ լույսը պիտի ճառագայթե՛ հավերժ, հասնելով մինչև հեռավոր անկյունները աշխարհի:

Ենոթիքի պատմություն բոլորին:

Այս հանդիսավոր առիթով հետևյալ կուտ և իմաստալից ճառով հանդես եկավ նաև Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ ԾԱՌԸ

«Երանի որ ունիցի գառակ ի Սիոն» արտահայտությունը ժողովուրդի մը հոգեղեն թափը միայն չարտահայտեր, այլ կանցնի ավելի անդին, ըլլալու լուսավոր ձգողությունը անանցին:

Կրթական այս տաղավարը որ կբարձրանա Սիոնի այս բարձունքին՝ սրբազան տապանակի մը նման, գալական է տիար Ալեքս Մանուկյանին, որ վարժված է մտածելու թե իր ժողովուրդի գոյատևման ամենեն կենսական լծակներեն մին կրթությունն է: Այդ է պատճառը որ Նորին Վսեմությունը իր ամենեն գորովագեղ ուշադրության առարկան ընեն ազգային կրթության գործը: Մարդը՝ որ ժամանակն վեր գիտն կարդալ իր ժողովրդին ճակատագիրը և լսել ձայնը որ զինքը անոր սուաջնորդության կկանչե: Ի վերջո պետք է գիտնալ թե ժողովուրդները կապին իրենց փորովը բայց կդիմանան իրենց մտքովը:

Եթե ուզեինք մարդերը միայն երկու դասակարգերու բաժնել, պիտի ըսեինք՝ տեսիլքի մարդեր և տեսիլքե զուրկ մարդեր: Բոլոր մեծ հոգիները, ստեղծիչները, գիտնականները, աշխարհ վարող անձնավորությունները, որոնք ափ մը բարիք և կտոր մը լույս բերեր են իրենց ժողովուրդին և մարդկության, տեսիլքի մարդեր եղած են:

Տիար Ալեքս Մանուկյան տեսիլքի մարդ է, ան գեղեցիկ գաղափարը ունեցալ հիմնելու կրթական այս պալատը, որմե սակայն իշխաններ և արքաներ պիտի չանցնին, այլ հայ մտքի և հոգիի ընտրյալներ, հազնելու աղբյուր արքայական պատմությանը մեր մշակույթին և սաղավարտը մեր կրոնին, թուրք կենալու օտար հեղեղին դեմ, բայց մանավանդ ըլլալու



ՎԵՂԱՓԱՍ ԼԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱՇԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԸ ԵՎ ՊԻՆ. ԱՆԻՔԱՆ ՄԱՆՈՒԳՅԱՆԸ
ԼԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆՈՒՄ. ԵՐՈՍԱՂԵՄ

ճրագը սիրտերու և հացն արդար և բազմաբաշխ մեր իմացական պատուրին:

Մտքի այս պալատը որ կբարձրանա ս. Հակոբյանց հնադարյան մենաստանի նայվածքին առջև, շենք մը չէ միայն, այլ գաղափարը, հանճարին պես անոր՝ որ հղացավ զայն իբրև աշտարակ մտքի, անծայրածիր հորիզոնը հոգիներու, անշրջանակ լուսամուտը հայ դպրության, աղոթքը՝ Նարեկացիին, երգը Շնորհալիին, փոխելով այս կերպ նյութը ոգիի, որուն երբ նայինք մեր ուղեղը կարենա ժպտիլ մեզի:

Ան կկանգնի իբրև հուշարձան մեր մտքի բոլոր քանդված տաճարներուն, Ներսեսյան, Գեորգյան, Սանասարյան, Արմաշի և նմաններուն, սրբազան վրեժի մը իբրև խորհրդանիշ: Այս գեղակառույց գմբեթի տակեն պիտի անցնեն սերունդներ որոնց գերագույն երագը պիտի ըլլա ըսել «Տէ՛ր, կեցո՛ր դու զհայս»:

Մտքի ու հոգիի այս տուն-տաղավարն է որ եկան հիմնելու անգուգական զույգը, երջանիկ ամուլը՝ Ալեքս և Մարի Մանուկյանները, իրենց հոգիի արդար յուղովը և մտքի մաքուր պատրույգովը հայ մտքին ճրագը վառելու Միոն այս բարձունքին: Վստահ ենք թե չենք վիրավորեր համեստությունը մեծ բարերարին, եթե ըսենք թե տիար Ալեքս Մանուկյանը մեր օրերու ամենն պատկառելի և բացառիկ արժեք ներկայացնող դեմքն է: Մին ազգային մեր մեծ բարերարներեն և պարծանքներեն, որ գիտե դիմավորել իր ժողովուրդին կարիքները կիրթ և ազնվական զգացումներու և դատումի մը մեջեն: Բարձր և սրբատաշ քարերով կառուցված բարերարություններ են վսեմափայլ Ալեքս Մանուկյանի նվիրաբերումները, որոնք իրարահաջորդ սերունդներու երախտիքն ու վկայությունը պիտի ունենան իբրև իրենց գրավական:

Սրբոց Հակոբյանց ուխտանվեր միաբանության, հայ եկեղեցվո և բովանդակ հայ ժողովուրդի սերն ու երախտիքը իրենց անմահությունը գնել գիտցող Ալեքս և Մարի Մանուկյան անգուգական զույգին, որոնք իրենց այս նվիրաբերումով հայ մտքի տաճարին դռները կբանան մեզի, որպեսզի կարենանք անոր իշխանական սեղանեն բաշխել հրեղեն հացն ու գինին զալիք սերունդներուն:

Հանդիսության վերջում, տ. Ծահե արքեպիսկոպոսի հրավերով, խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը՝ Իր օրհնությունը բերելու կրթական նորակառույց օջախի ապագա գործունեության և այս առթիվ տալու հայրապետական Իր օրհնությունը:

Բոլոր հանդիսականները հոտնկայս և ջերմ ծափերով ողջունեցին, երբ Հայոց Հայրապետը մոտենում էր ամբիոնին Իր խոսքն ասելու:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՈՒ ՊՍԳԱՄԸ

«Ծանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» աստվածաշնչական բնաբանով սկսեց Հայոց Հայրապետն Իր գեղեցկահյուս խոսքը, վեր հանեց Ե դարում Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ սկզբնավորված հայ մշակույթի և հայ դպրության պատմական նշանակությունը մեր ժողովրդի և եկեղեցու կյանքում՝ շեշտելով, որ հայ ժողովուրդը, որպես ոգեկանության ժողովուրդ, որը դարերի ընթացքում ստեղծել է փառավոր մշակույթ իր բոլոր ձևերի և արտահայտությունների մեջ, հաճախ

արյան գնով իսկ, զարգացրել և մեր օրերին է հասցրել իր մշակութային զանգեքը, որովհետև «Հոգին է կենդանարար»:

Մեր ժողովրդի հերոսական պատմությունը, ասաց Հայոց Հայրապետն իր խոսքի մեջ, պայծառ վկայությունն է այն բանի, «որ մենք, որպես ժողովուրդ և եկեղեցի, ապրել ենք մեր քրիստոնեական հավատքով և հայ մշակույթի ստեղծած հոգևոր արժեքներով, արժեքներ, որոնց միջոցով է, որ դիմագիծ և ազգային նկարագիր են ստանում ժողովուրդները: Ահա այս մտածումների լույսի և ճշմարտության տակ է, որ բաց է անում իր դռները սրբոց Հակոբյանց վանքի Ալեքս և Մարի Մանուկյան նորակառույց վարժարանը:

Այս առաքելական Աթոռը հնուց ի վեր եղել է հավատարիմ այս սկզբունքներին որպես հայ կրոնական հավատքի, հայ դպրության և հայ մշակույթի կենտրոն:

Այսօր էլ, ս. Էջմիածնից ու մայր հայրենիքից հետո, այս սուրբ Աթոռն է հանդիսանում, մանավանդ սփյուռքի մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կյանքի արդի պայմանների մեջ, անմար ջահը մեր քրիստոնեական հավատքի և հայ դպրության:

Այնուհետև Հայոց Հայրապետը խոսեց այն մասին, որ այս նորակառույց վարժարանով և ընծայարանով Երուսաղեմի հայոց պատրիարքության համար բացվում է առաքելության և մշակութային գործունեության խոստումնալից մի շրջան Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու և օրհնության ներքո:

«Առաքելական այս սուրբ Աթոռը, այդ առաքելությունը սրբությամբ և պատվով պիտի կատարի մայր հայրենիքից դուրս, սփյուռքի տառածքի վրա ապրող ավելի քան երկու միլիոն մեր ժողովրդի ծոցում: Հայ սփյուռքն իր ժողովրդով, եկեղեցական և համայնքային իր կազմակերպվածությամբ, իր կրթական մշակութային հաստատություններով և ազգապահպանման իր հերոսական ճիգերով հայկական մի իրականություն է, որ պետք է հաշվի առնել»:

«Ազգային մեծ բարերար, Մայր Աթոռի հարազատ զավակ մեծահարգ Ալեքս Մանուկյանի նվիրատվությամբ կառուցված այս նոր վարժարանը նրա մեծ սրտի ընծայաբերումն է և՛ այս պատմական Աթոռին, և՛ սփյուռքի բովանդակ հայության: Ահա թե ինչու, Մենք ս. Էջմիածնից, Մեր Հայրապետական սրտից ու մահ Հայաստանի Մեր զավակների կողմից կրեքենք ջերմ ու սրտագին օրհնություն և զմահատություն ազգային մեծ բարերարին այն բարի մաղթանքով, որ այս կրթական հաստատությունը սկզբնավորությունը հանդիսանա մի նոր շրջանի հոգևոր-կրթական վերածննդյան, Մեր սիրեցյալ եղբոր՝ տ. Եղիշե սրբազան պատրիարքի ղեկավարության ու վերին հոգատարությանը ներքո, որպես մի նոր «աղբիւր բացեալ գիտութեանն Աստուծոյ»:

Մենք բոլորս, հայությունը համայն, պիտի սպասենք որ այս կրթական հաստատությունը դառնա լուսատու մի կենտրոն, Հայ սփյուռքի համար, ուր պիտի դաստիարակվին, որակավոր հայ նոր ու կրթական մշակներ արտասահմանի մեր եկեղեցիների և վարժարանների համար»:

Հայոց Հայրապետը բովանդակալից իր սույն խոսքին ավելացրեց սրտագին բարեմաղթություններ Ալեքս Մանուկյանի կյանքի արևշատության և առողջության համար, «մի բարի և կրթասեր անձնավորություն», ասաց Վահագն Հարյապետը, «որ ավելի քան քսան տարիներ երկնային



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌՈԻՍ ԵԿԵՂԵՑԻ ՊԱՏՄԻՐԱՍԽԻԹԱՆ ՀԵՏ. ԵՐՈՍԻՄՆԵՐ

պարզ և օրհնություն կհանդիսանա հայ եկեղեցու և մեր ժողովրդի համար»:

Բոլոր հանդիսականները հոտնկայս և բուն ծափահարություններով դիմավորեցին Հայոց Հայրապետի սույն ճշմարիտ խոսքերն ու բարձր գնահատությունը:

Նորակառույց դպրոցի բացման հանդիսության խանդավառությունն ավելացնում էին ՀԵՄ-ի երկսեռ երգչախումբը՝ խմբավար Սահակ Գալաճյանի ղեկավարությամբ, ինչպես նաև Երուսաղեմի զինվորական նվագախումբը:

Հանդիսության ավարտին նորակառույց վարժարանի սեղանատանը տեղի ունեցավ հյուրասիրություն:

ՓԱՌԱՇՈՒՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Սույն օրը, երեկոյան ժամը 20-ին, ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը, ի պատիվ Հայոց Հայրապետի և պրն. Ալեքս Մանուկյանի, պատրիարքարանի գեղակառույց ու ջահագարդ ընդունելության դահլիճում կազմակերպեց շքեղ ընդունելություն՝ ավելի քան չորս հարյուր հրավիրյալների մասնակցությամբ:

Պաշտոնական հրավիրյալների թվում էին Երուսաղեմի հոգևոր պետերն ու արաբ և հրեա պետական բարձրաստիճան պաշտոնատարներ, դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև տեղական մամուլի, հեռուստատեսության աշխատակիցներ, թղթակիցներ և այլ հրավիրյալներ:

Որոշված ժամին, երբ հավաքվել էին հրավիրյալները, Հայոց Հայրապետը, տ. Եղիշե և տ. Շնորհք սրբազան պատրիարքները, տեր և տիկին Ալեքս և Մարի Մանուկյանները, բարձրաստիճան հայ հոգևորականների ուղեկցությամբ, մուտք գործեց դահլիճ՝ բոլոր ներկաների ծափողջույնների ներքո:

Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը խանդավառ խոսքերով և ազգային հպարտության զգացումով հավաքվածներին ներկայացրեց Հայոց Հայրապետին, որը խոսք առավ և ողջունեց բոլոր ներկաներին և սովեց Իր օրհնությունը:

Սույն ընդունելությունն անցավ բացառիկ ջերմ և խանդավառ մթնոլորտում:

Այս ուրախ առիթով ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը մեծ սիրով և ուրախությամբ արժեքավոր մանրանկարներով հարուստ հայկական մի ձեռագիր նվիրեց պրն. Ալեքս Մանուկյանին՝ Դետրոյտում նրա անունը կրող նորաբաց թանգարանի համար:

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի այս մեծարժեք և սրտաբուխ բացառիկ նվերը որոտընդոստ ծափահարություններով ընդունվեց բոլոր ներկաների կողմից: Վերջում սրբազան պատրիարքին ողղված շնորհակալական և երախտագիտական խոսք ասաց Ալեքս Մանուկյանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 26-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ սրբազան պատրիարքների և եկեղեցական

մեծ շքախմբի, փոխադարձ այցելություններ տվեց հունաց ամենապատիվ տ. **Բենեդիկտոս սրբազան պատրիարքին** և ս. Սիմոնի անդամներին:

Հայոց Հայրապետի, հունաց սրբազան պատրիարքի ու նրանց շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ ջերմ գրույց՝ Էկումենիկ ոգով:

Այս առիթով հունաց սրբազան պատրիարքը Հայոց Հայրապետին պատվեց ս. Հարության տաճարի սուաջին կարգի շքանշանով: Իսկ Հայոց Հայրապետը հունաց պատրիարքին պատվեց ս. Գրիգոր Լուսավորչի սուաջին կարգի ադամանդակոտ շքանշանով:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը նույն հանդիսավորությամբ այցելեց Երուսաղեմի լատինաց տ. **Միաքոմո Բեյթրիտի** պատրիարքին, իսկ ժամը 13-ին՝ Երուսաղեմում ֆրանչիսկյան միաբանության կուստոդ Հայր Մատրիլիու Սաքիին:

Ողջույնի և բարիգալատյան ջերմ խոսքերից հետո նվերներ փոխանակվեցին Հայոց Հայրապետի և ֆրանչիսկյան միաբանության մեծավորի միջև:

Ժամը 14-ին Երուսաղեմի ֆրանչիսկյան միաբանությունն իր վանատան ընդարձակ և շքեղ սեղանատանը ճոխ ճաշկերույթով պատվեց Հայոց Հայրապետին, սրբազան պատրիարքներին, հայ հոգևորականաց դասին և հայ ուխտավորներին:

ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ
Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԱՐՈՆ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Երուսաղեմի հայոց ս. Թարգմանչաց վարժարանի հարկի տակ, Հայոց Հայրապետի բարձր նախագահության ներքո, տեղի ունեցավ ամսվերջի հանդիսություն՝ նվիրված ՀԲԸՄ-ի նախագահի պրն. **Ալեքս Մանուկյանի** նախագահական 20-ամյա գործունեությանը:

Սրբոց Թարգմանչաց երկսեռ միջնակարգ վարժարանը մայրավանքի շրջափակում Կյուլպենկյան մատենադարանին և Ժառանգավորաց հին վարժարանին մոտիկ քարաշեն և քառահարկ փառավոր մի շինություն է՝ կառուցված 1929 թվականին: Այստեղ տվորում են 4-ից 16 տարեկան հասակ ունեցող շուրջ 250 աշակերտ-աշակերտուհիներ՝ մեծ մասամբ անվճար: Դպրոցի ծախսերը հոգացվում են հայոց պատրիարքարանից, արտասահմանյան նվիրատվություններից և որոշ աշակերտներից գանձվող ուսման վարձերից:

Վարժարանն ունի երեք բաժին՝ մանկապարտեզ (երեք դասարան), նախակրթարան (վեց դասարան) և միջնակարգ բաժին (հինգ դասարան): Վարժարանի տեսուչն է տ. **Կյուրեղ Ծ. վրդ. Գաբրիկյանը**, որը ձեռնհասությամբ և մեծ արդյունավորությամբ ավելի քան քսան տարի է, ինչ ղեկավարում է կրթական այս օջախն ամենապատիվ տ. **Եղիշե պատրիարքի** անմիջական հսկողության ներքո:

Վարժարանն օժտված է մահ ուսուցչական որակյալ կազմով՝ բաղկացած հայ և օտար դասախոսներից:

Ժամը 18-ին **Վեհափառ Հայրապետը տ. Եղիշե, տ. Ծնորհք սրբազան պատրիարքները** և շքախմբի բոլոր անդամները հանդիսավորապես մուտք գործեցին ս. Թարգմանչաց վարժարան: Թարգմանչաց և Տատուրյան վարժարանների ողջ աշակերտությունը ծափողջույններով դիմավորեց Հայոց Հայրապետին: Ծառ ուրախ էին մանավանդ փոքրերը. նրանց անմեղունակ

մանկական, հայկական աչքերը խայտում էին երջանկությունից: Վարժարանի դահլիճը լցված էր աշակերտների ծնողներով և հրավիրյալներով:

Հանդիսության բացումը կատարեց վաստակաշատ տեսուչ հայր սուրբը: Դպրոցի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» շարականը, այնուհետև՝ Հայրապետական մաղթերգը: Հաջորդաբար կատարվեցին «Իմ Երևան», «Բարի արագիլ», «Արփա-Սևան», «Գարնանային զով ստավոտով», «Երգիր ինձ համար» հայրենասիրական երգերը:

Զ դասարանի աշակերտուհի Անուշ Նազգաշյանը խոր սալրումով և արվեստով արտասանեց Սիրվա Կապուտիկյանի «Զրահապատ Վարդան գորավար» բանաստեղծությունը: Նույնքան փայլուն հաջողությամբ կատարվեց նաև Եղիվարդի (Եղիշե արքեպ. Տերտերյան) «Կարմիր գորավար» (1975 թ., Երուսաղեմ) հայրենաշունչ և հայատրոսի մեծ պոեմից մի հատված՝ խմբական արտասանությամբ:

Այնուհետև 1974—1975 ուսումնական տարեշրջանի շրջանավարտներ Դալիտա Դեմիրճյանը, Աննա Ադամյանը և Վահե Գարճյանը գրավոր ուղերձով հաջորդաբար ներկայացրին «Ալեքս Մանուկյան մարդը», «Ալեքս Մանուկյան մեծ բարերարը» և «Ոգեկան մարդը՝ Ալեքս Մանուկյան»:

Սևան վրդ. Ղարիբյանն ընթերցեց պրն. Ալեքս Մանուկյանի 20-ամյա նախագահության առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոսի գրած սրբազան կոնդակը, որից հետո տեսուչ հայր սուրբը հրավիրեց բարերար պրն. Ալեքս Մանուկյանին՝ ասելու իր շնորհակալության խոսքը:

Հանդիսության երկրորդ բաժնում տեսուչ վարդապետը ներկայացրեց սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների տարեկան ընդհանուր տեղեկագիրը: Այնուհետև տեղի ունեցավ մրցանակաբաշխություն և շրջանավարտների վկայականների տվչություն՝ ձեռամբ և օրհնությամբ Վեհափառ Հայրապետի:

Ծրջանավարտ Ընծա Հարությունյանը Հայոց Հայրապետին, տ. Եղիշե, տ. Ծնորհք սրբազան պատրիարքներին և Ալեքս Մանուկյանին ուղղված երախտագիտության և շնորհակալության մի ուղերձ կարդաց՝ ջերմ ու անկեղծ զգացումներով զեղուն:

Ամավերջի սույն հանդիսության փակումը կատարեց Վեհափառ Հայրապետը՝ հատկապես աշակերտությանն ուղղյալ հայրական ջերմ, ամփջական, սրտառու խոսքով, որը հաճախ ընդմիջվում էր բոլոր ներկաների բուն ու խանդավառ ծափերով:

Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելու պահին դպրոցի աշակերտությանը բաժանեց, աջահամբույրով, ս. Էջմիածնից բերված խաչիկներ:

ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքի նախաձեռնությամբ և հսկողությամբ ու ամերիկահայ ծանոթ ազգային-հասարակական գործիչ Տատուր Տատուրյանի բարերարությամբ 1969 թվականին սրբոց Հակոբյանց վանքի միաբանական թաղամասում բացվեց երրորդ կրթական մի օջախ ժառանգավորաց և ս. Թարգմանչաց վարժարանների կողքին:

Սույն նորարաց վարժարանի նպատակն էր, բարերարի առաջարկությամբ, հայ աշակերտությունը բերել հատկապես Թուրքիայի ներքին գավառներից, հայեցի կրթություն և դաստիարակություն տալ նրանց և ապա

ուղարկել հայրենիք բարձրագույն մասնագիտական ուսում ստանալու և հայրենի ժողովրդին ծառայելու համար:

1969 թվականի սեպտեմբերին Թուրքիայից բերված երեսունհինգ աշակերտներով սկսեց գործել բարերարի անունը կրող սույն դպրոցը, որի պատասխանատու ղեկավարությունն ու տնօրենությունը տ. Եղիշե պատրիարքի կողմից վստահվեց սիրված մանկավարժուհի Արփինե Սարգիսյան—Նազգաշանին, որը ձեռնհաստրեմ և մեծ նվիրումով է կատարում ուսումնա-դաստիարակչական, ազգօգուտ ու հայրենասիրական այս գործը, իր ամուսնու՝ Հրանդ Նազգաշանի գործակցությամբ:



Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարքները, Տատուրյան վարժարանի բարերար Տ. Տատուրյանը և վարժարանի տեսչությունը. Երուսաղեմ

Տատուրյան վարժարանը գիշերօթիկ է: Աշակերտությունն իր ուսումնական կրթությունը ստանում է Թարգմանչաց վարժարանի նախակրթարանում: Տատուրյան վարժարանի խոստումնալից և ուսումնաստենչ աշակերտներն ընդունվում են ժառանգավորաց վարժարան:

Անցնող վեց տարիների ընթացքում Տատուրյան վարժարանի նախկին սաներից երկուսը ստացել են վարդապետական աստիճան, այդ թվում՝ տ. Վիգեն վրդ. Ալբազյանը և տ. Խաժակ վրդ. Պարսամյանը, իսկ շուրջ երեսունը սարկավագներ և ուրարակիրներ են:

Տատուրյան վարժարանի յուրաքանչյուր աշակերտի համար տարեկան ծախսվում է շուրջ 600 դոլլար: ԱՄՆ-ում, բարերար Տատուր Տատուրյանի գլխավորությամբ, ստեղծվել է «Հայ Երուսաղեմի պատրիարքության բարեկամներու ընկերակցություն»-ը, որը հոգում է վարժարանի ծախսերը: Բարերար Տատուր Տատուրյանն ամեն տարի իր նյութական միջոցներով փակում է դպրոցի բացը:



ԹԵՌԻՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԺԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԽՈՐԱՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Հունիսի 27-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Երուսաղեմի հայոց պատրիարքարանում, **Վեհափառ Հայրապետի** բարձր նախագահության ներքո, գումարվեց հանդիսությունների առթիվ Երուսաղեմ ժամանած եպիսկոպոսների խորհրդակցական ժողով՝ աստեղակցությամբ **ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի:**

Եպիսկոպոսական խորհրդակցական սույն ժողովին մասնակցում էին տ. **Շնորհք սրբազան պատրիարքը, տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, տ. Պսակ արքեպ. Թումայանը, տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, տ. Շահեն արքեպ. Աճեմյանը, տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը և տ. Վաչե եպս. Հովսեփյանը:**

Խորհրդակցական սույն ժողովը շարունակվեց նաև շաբաթ օրը:

Ժողովում քննարկվեցին հայերեն Աստվածաշնչի գիտական բնագիրը պատրաստելու և հրատարակելու հարցը, ինչպես նաև հայ եկեղեցու ծիսական բարեկարգության վերաբերյալ մի շարք հարցեր:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ «ՀՐԱԾԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԺԱՐ

Հունիսի 28-ին, շաբաթ օրը, ժամը 16-ին, **Վեհափառ Հայրապետը,** վեհաշուք հանդիսությամբ, եկեղեցական թափորով և ծովածալալ ժողովրդի ուղեկցությամբ, մուտք գործեց սուրբ Հարության տաճար:

Պատրիարքարանի դահլիճից կազմված էր եկեղեցական մեծահանդես թափոր՝ մասնակցությամբ երկու սրբազան պատրիարքների, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, հյուր հոգևորականների, ս. Աթոռի ողջ միաբանության, բոլորն էլ զգեստավորված իրենց դիրքի և աստիճանի համաձայն, ծանրագին շուրջառնեքով:

Թափորին մաս էին կազմում նաև Ժառանգավորաց, ս. Թարգմանչաց և Տատուրյան վարժարանների աշակերտները, ուսանողական նվագախումբը, երուսաղեմահայ մարզական կազմակերպությունների արիներն ու արեւմուշները:

«Որ զխորհուրդ քո գալստեան» շարականի երգեցողությամբ եկեղեցական թափորը, հանդիսաբալլ ու վեհ, առաջնորդվում էր ս. Հարության տաճար եկեղեցու զանգերի տոնական ու հաղթական հնչյունների ներքո, դրոշագարդված փողոցներով, տներից և պատշգամբներից շաղ տրվող ծաղիկների անձրևի, մայրերի վրա խոնված հայ և օտար ժողովրդական բազմության հիացական արտահայտությունների ներքո:

Հայոց Հայրապետն իր ճանապարհի վրա օրհնում էր բարեպաշտ հայ և օտար ուխտավորներին, որոնք ամբողջ ճանապարհի երկարությամբ խոնվել էին մինչև պատմական մեծ տաճարի մուտքը:

Եկեղեցական թափորը մուտք գործեց տաճար, մինչ դպիրները քաղցրաձայն հնչեցնում էին «Հրաշափառ»-ը: Սարկավագները մատուցեցին խունկ ու բուրվառ: Հայոց Հայրապետը խնկարկեց Ուշաթափման վայրը, ծնրադիր ու գլխաբաց համբուրեց սրբատեղին, ապա նույն հանդիսավորությամբ առաջնորդվեց Քրիստոսի լույս գերեզման, ուր մուտք գործեց և կատարեց իր ուխտն ու աղոթքը:

Այնուհետև, սուրբ գերեզմանի շուրջ թափոր դառնալուց հետո, **Հայոց Հայրապետն** առաջնորդվեց **ս. Հարության տաճարի** հայկական մասի Գողգոթան՝ կատարելու համար մեծահանդես նախակատիքն ու օծումը 1963 թվականից հետո նորոգված և վերաշինված **ս. Աստվածածին** և այլ խորանների: Սույն հանդիսությանը ներկա եղան նաև քույր եկեղեցիների բազում բարձրաստիճան ներկայացուցիչներ:

**ԾԱԾԿԵՐՈՒՅԹ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ
ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ**

Նույն օրը, ժամը 20-ին, Ալեքս Մանուկյան նորակառույց վարժարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի, Երուսաղեմ ժամանած հայ հոգևորականության և հյուրերի:

Ծաշկերույթին ներկա էին **ս. Աթոռի** ողջ միաբանությունը, շուրջ հարյուր հիսուն հրավիրյալներ, ինչպես նաև ժառանգավորաց և Տատուրյան վարժարանների աշակերտները:

Սուրբ Աթոռի բարիքներով ծանրաբեռնված սեղանների շուրջ շուտով ստեղծվեց խանդավառ ու հայրենասիրական մթնոլորտ, որի ընթացքում **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը** և ապա հայրապետական շրախմբի անդամ, «Էջմիածին» ամսագրի խմբագրապետ ու հոգևոր ճեմարանի ավագ դասախոս **Արթուր Հատիսյանը**, հանդես եկան օրվա խորհրդին նվիրված խանդավառ ճառերով:

Ծաշկերույթն ավարտվեց Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ
ՔՐԻՍՏՈՍԻ ԼՈՒՅՍ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ**

Հունիսի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 9-ին, **Վեհափառ Հայրապետը** հանդիսավորապես առաջնորդվեց **ս. Հարության տաճար՝ Քրիստոսի լույս գերեզմանի** վրա մատուցելու **ս. պատարագ**:

Պատարագի ընթացքում սուրբ սեղանին ապաստարկում էին **տ. Տիրայր, տ. Վաչե** արքեպանները, **տ. Փառեն, տ. Վիգեն, տ. Վահան, տ. Սևան** վարդապետները և սարկավագաց ամբողջ խումբը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում էր ՀԵՄ-ի երկսեռ երգեցիկ խումբը՝ խմբավար **Սահակ Գալաճյանի** ղեկավարությամբ:

Ս. պատարագի երգեցողության որոշ մեներգները կատարվեցին **տ. Պսակ, տ. Կոմիտաս** և **տ. Թորգոմ** արքեպիսկոպոսների կողմից:

Ս. պատարագի ճաշու գիրքը ընթերցեց ամենապատիվ **տ. Շնորհք արքեպան պատրիարքը**:

«Հայր մեր»-ից առաջ **Հայոց Հայրապետը** խոսեց հոգեշունչ քարոզ՝ «Լուսովի քով Քրիստոս, ամենեքեան լուսաորեցաք» աղոթքի բնաբանով:

Իր քարոզի սկզբին Հայոց Հայրապետն ասաց, որ «Այսօր իր կյանքի ամենահոգիչ պահերից մեկն է ապրում, և ավելի քան երբեք զգում է ճշմարտությունը իր քարոզի բնաբանին Քրիստոսի թափոր այս գերեզմանի առաջ»:

Հայոց Հայրապետը շեշտեց, որ, գալով սուրբ քաղաք «յուփառ և յերկրպագությամբ», «զոհություն կմատուցանենք Ամենակալին Աստուծո, որ կրկին



ՔԱՐՈՋՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԺԱՐՈՒՄ. ԵՐՈՒՍԱԴԵՄ

անգամ մխիթարություն շնորհեց Մեզի պատարագելու Քրիստոսի լույս գերեզմանի վրա, գերեզման, որի խորհուրդն ու ոգեկան ուժը զգացել են միշտ մեր Հայրապետներն ու ժողովուրդն ահա երկու հազար տարիներից ի վեր»։ «Քրիստոսի գերեզմանի լույսը», ասաց Հայոց Հայրապետը, «դարերի միջով բաշխվել ու բաշխվում է նաև այսօր, հավասար զորությամբ և ուժգնությամբ, համայն աշխարհին։ Դարեր առաջ աշխարհն իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանի լույսին ու ջերմորեն ընդունեց Աստվածորդու Հարության բարի լուրը, նրա հավիտենական կենդանության ավետիսը։ Քրիստոսի օրերից իսկ Ավետարանի այդ լույսը հասավ նաև Հայաստան աշխարհ և Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզությամբ։ Այդ լույսը է՛լ ավելի տարածվեց և թափանցեց հալ ժողովրդի սրտի մեջ և Գրիգոր Լուսավորչի առաքելական քարոզությամբ, հայոց Տրդատ թագավորի օրով։ Մենք ս. Գրիգոր Լուսավորչի գավակներն ենք, նրա ժողովուրդը, որ նույն ջերմությամբ բաց է անում իր հոգին նաև այսօր Ավետարանի այդ լույսին, որպեսզի չտկարանա այն մեր սրտերի մեջ, չտկարանա աշխարհի և մարդկության առաջ»։

«Քրիստոնեական այդ լույսի մեջ», շեշտեց Վեհափառ Հայրապետը, «ծաղկեց նաև հալ մշակույթը, որպեսզի այդ մշակույթով շարունակենք մեր հոգևոր առաքելությունը մեր ժողովրդի ծոցում և մարդկության մեջ»։

Այնուհետև Հայոց Հայրապետը մեծ խափառվածությամբ և հոգեկան մխիթարությամբ արտահայտվեց վերջին ավելի քան տասը տարիների ընթացքում Երուսաղեմի և Հարության տաճարի հայկական բաժնի նորոգված և վերաշինված խորանների և այլ շինությունների մասին, որոնք իրենց վրա կրում են հալ եկեղեցու դասական ճարտարապետության, մանրանկարչության և բանդակագործության ցայտուն դրոշմը։ Այս առթիվ Հայոց Հայրապետը ջերմորեն շնորհավորեց տ. Եղիշե սրբազան պատրիարքին, որի վերին հսկողությամբ եղած նորոգությունները կատարվել են մեծ բարեխղճությամբ և արվեստով։

Հայոց Հայրապետն իր բարձր ուշադրությանն ու գնահատությանն արժանացրեց աշխատանքի բաժինը տ. Ծաֆե արքեպիսկոպոսի, տ. Կյուրեղ ծ. վարդապետի և շինարար ճարտարապետներ պրոֆ. Էդվարդ Ութուշյանի և Տիրան Ոսկերիչյանի, որոնք տաղանդով ու բարձր ճաշակով նախագծել ու կենսագործել են շինարարությունը և Հարության տաճարի հայկական մասի։

Հայոց Հայրապետն իր սույն հոգեշունչ քարոզն ավարտեց՝ մաղթելով միություն և համագործակցություն մեր նվիրապետական բոլոր Աթոռներին, խաղաղություն՝ աշխարհին ու մանավանդ Միջին Արևելքին, բարեկամություն և խաղաղ գոյակցություն՝ բոլոր ազգերին։

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՅՈՒՆՆԵՐ ՎԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

Նույն օրը, ժամը 16-ին, սրբոց Հակոբյանց վանքի վանական սեղանատանը ճաշկերույթ տրվեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Նրա շքախմբի անդամների և բոլոր հյուրերի։

Ճաշկերույթի ընթացքում, խոսք առնելով, տ. Եղիշե սրբազան պատրիարքը շեշտեց, որ հունիսի 22—29 օրերը ս. Աթոռի համար եղան անսահման երջանկության, ազգային հպարտության անմոռանալի օրեր, ոչ թե «հայկական մի շաբաթ», այլ «հայկական մի դար», որովհետև Հայոց Հայ-

րապետի ներկայությունը բերեց «դար մը մտածում», «դար մը ապրում», «դար մը զգացում»:

Այնուհետև սրբազան պատրիարքը եղբայրական ջերմ սիրով ողջունեց ներկայությունը Կ. Պոլսի ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքի՝ շեշտելով, որ Հայոց Հայրապետի շնորհաբեր սույն այցելության առիթով վերացան Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքական Աթոռների միջև ժամանակավրեպ թյուրիմացությունները, և ստեղծվեց ռզեկան մի կամուրջ: «Իր արցունքին մեջ,—ասաց սրբազան պատրիարք հայրը,—կտոր մը ժպիտ թող ունենա մեր ժողովուրդը ի տես մեր այսօրվա եղբայրական միասնության: Հայոց Հայրապետի ս. Երուսաղեմ այցելության մեծագույն բարիքներեն մեկը եղավ միասնության վերահաստատումը մեր երկու Աթոռներուն միջև»:

Պատրիարք սրբազան հայրը նույն ջերմությամբ ողջունեց նաև ս. Երուսաղեմ ժամանած հայ եկեղեցու սրբազան թեմակալ սուաջնորդների, հոգևորականության և թանկագին հյուրերի ներկայությունը:

Միաբանական սեղանին խոսք առավ ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը:

Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

«Հակառակ այն իրողության, որ մենք շատոնց ի վեր մեծ փափաք ունեինք Երուսաղեմ այցելելու, սակայն երբ ստացանք Երուսաղեմի ամեն. Պատրիարքի եղբայրական հրավերի հեռագիրը՝ վարանումը մեզ պաշարեց: Երթա՞լ, թե չերթալ: Քիչեր այլ և զորավոր պատճառներ ունեին չերթալու, որքան՝ մենք: Սակայն մեկդի հրեցինք վարանումի այդ պատճառները, ընթացք տալու համար այն մյուս մտածումներուն, որոնք կմղեին զմեզ ընդունիլ Երուսաղեմի ամեն. Պատրիարքի հրավերը: Ու սա պահուս մենք երջանիկ ենք այդ հրավերը ընդունած ըլլալնուս համար:

Այս ընդունելության մեջ բնականաբար իրենց կարևոր քաժինը ունեցան զգացական ու անձնական պատճառներ, որոնց անդրադարձանք մենք մեր ժամանման առաջին օրը մեր ուխտը և աղոթքը կատարելու ատեն սրբոց Հակոբյանց Մայր տաճարին մեջ: Երբ կյանքիդ 60—62 տարիներում ավելի քան քառորդը անցուցած ես միջավայրի մը մեջ, այդ միջավայրը պիտի պահե իր քաշողականությունը և հրապույրը քեզի համար: Երբ կյանքիդ ավելի քան կեսը պաշտոնապես ու գործնականապես կապված ես հաստատության մը, որուն տարեկան օրացույցին մեջ անխափան երևցած է անունդ 1927—1960 տարիներու ընթացքին, չես կրնար մոռնալ այդ հաստատությունը: Արդարև ես զիս միշտ անդամ նկատած եմ սրբոց Հակոբյանց միաբանության: Սրտիս կապերը երբեք չեն խզված անոր հետ, որովհետև այն քիչը որ կրցած եմ ըլլալ նախ կպարտիմ Աստուծո ես ապա՝ սրբոց Հակոբյանց վանքին:

Սակայն այս անձնական ու զգացական պատճառներեն ավելի լուրջ ու զորավոր էին այն մյուս խորհուրդները, որոնք թելադրեցին մեզի սիրով ընդառաջելու եղբայրական այս հրավերին: Մենք պարտական զգացինք այս օրերուն այստեղ ներկա գտնվիլ, իբրև Հայց. եկեղեցվո մկրտապետական Աթոռներեն մեկին զահակալը անգամ մը ես հաստատելու գործնականապես, Հայց. առաքելական եկեղեցիի միասնականությունը ընդ հովանյալ Ամենայն Հայոց Հայրապետության:



ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ Տ. ԾՆՈՐՀԱ ՊԱՏՐԻԱՐԺԸ

Այլևս այնքան մը հասունացած պետք է ըլլանք յուրացնելու և կենսագործելու համար սա հիմնական գաղափարը թե Հայաստանյայց առաքելական ու տառապյալ եկեղեցիի միասնականությունը բարձրագույն սկզբունքն է, որուն համար պետք է զոհենք, բացի ճշմարտութենէն, ամեն նկատում: Մենք ուզեցինք ուրեմն այս առիթը օգտագործել ամենէն առաջ շեշտելու և դրսևորելու համար Հայց. եկեղեցիի միասնականությունը, առ նվազն անոր Էջմիածնի անմիջական իրավասության ներքև գտնվող մայր և մեծագույն հատվածին: Այս գերագույն նպատակը իրագործելու համար մենք ողջագործեցանք Երուսաղեմի ամեն. Պատրիարքին հետ մեր առաջին հանդիպումին, ու հիշատակեցինք իր անունը՝ անցյալ կիրակի, Սաղիմական Հոգեգալստյան տոնին, երբ ս. պատարագ կմատուցանեինք սրբոց Հակոբյանց Մայր տաճարին մէջ: Ու ցրելու համար մտքերու մէջ համեցող հավանական ամեն թյուրիմացություն այս մասին, մեր առաջին գործը պիտի ըլլա մեր Աթոռը վերադարձին, հրահանգել որ վերսկսվի հիշատակությունը նաև Երուսաղեմի պատրիարքի անվան, ի ժամ ս. պատարագի, մեր թուր եկեղեցիներուն մէջ, թե իսկ բոլորովին տարբեր եղած ըլլա մեր տեսակետը կանոնական այս հարցի մասին: Սույն տնօրէնությամբ մեր նպատակն է լոկ գործնականապէս հայտարարած ըլլալ, որ վերջ գտած է երկու Աթոռներու միջև գոյացած ցրտությունը և տիրապետած է հաշտության, համերաշխության ու գործակցության մթնոլորտը:

Բացի հիմնական ու կեդրոնական այս մտածումէն մենք ունեցանք նաև ուրիշ կարևոր շարժառիթներ այսօր այստեղ գտնվելու:

Մենք ուզեցինք խառնել նաև մեր խնդրակցությունը այն հասարակաց ուրախության որ գիտեինք թե պիտի ստեղծվեր Ալեքս ու Մարի Մանուկյան ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի նորակերտ շէնքին բացման առիթով: Մենք ուզեցինք անձամբ շնորհավորել և մեր գնահատանքն արտահայտել տեղ եւ տիկ. Ալեքս Մանուկյաններուն, իրենց այս մեծագործության պատկոմին առիթով: Տեղ և տիկ. Ալեքս Մանուկյաններ առաջին օրէն լավ հասկցան կարևորությունը և կենսականությունը նաև այն կրթական ու մարդասիրական գործին, զոր մենք կկատարենք Թուրքիոյ մէջ, և իրենց բարոյական ու նյութական օժանդակությունը անպակաս ըրին ամեն անգամ որ մենք պետք ունեցանք անոնց: Մեր բարոյական պարտքը մասամբ մը հատուցած եղանք անձամբ ներկա ըլլալով իրենց հոյակապ ձեռակերտին բացման փառավոր հանդիսության:

Մենք ուզեցինք նաև անձամբ տեսնել մեր դրկած «Տատուրյան սաները», և մեր գնահատանքը և օրհնությունը տալ պ. Տատուր Տատուրյանին իր այս սքանչելի ձեռնարկին համար, որ կկատարվի սրբոց Հակոբյանց հարկին տակ ընդ հովանավ Երուսաղեմի առաքելական Աթոռոյ ամենապատիվ Պատրիարքին: Մենք պ. Տատուր Տատուրյանին հետ ներկա եղանք այս բույնի ձագուկներուն՝ և անկէ հասունացած Ժառ. վարժարանի սաներու սիրո սեղաններուն, և արտահայտեցինք մեր գնահատանքը և զոհումակությունը կատարված շնորհակալ աշխատանքին համար, թե պր. Տատուրյանին և թե սույն հաստատության անձնակազմին: Արդարև հորմէ հետե փակվեցան դռները արաբական երկիրներու, իրոնցմէ առհասարակ կուգային Ժառ. վրժ.-ի աշակերտները, լայնորեն բացվեցան դռները Թուրքիոյ հայության, ուրկէ սկսալ Երուսաղեմ ստանալ իր նոր ժառանգավորացուները: 1969 թվականէն առդին մենք շուրջ 200 ուսանողներ դրկած ենք Երուսաղեմ. պիտի շարունակենք դրկել պարագաներու պայմաններու թուլատրած չափով: Ասկա


ոչ միայն Երուսաղեմի օժանդակության հարց մըն է, այլ նաև իմաստով մը ինքնօգնություն մը, քանի որ մեր ս. Խաչ դպրեվանքը մեր երկրի Կրթական տնօրենության որոշումով դադրած է այնևս կրոնական վարժարան լինելէ: Ուստի մենք ևս Երուսաղեմէն պիտի ակնկալենք մեր կուսակրոն հոգեւորականներու պահանջքը, որով Երուսաղեմի ժառ. վարժարանը կվերածվի նաև մեր հոգևոր դպրանոցին:

Մյուս կողմէն մենք ուզեցինք սիրով ընդառաջել Երուսաղեմի ամեն. Պատրիարքի հրավերին, իբրև ներկայացուցիչը Թուրքիո հայության, որ ինչպես ծանոթ է, անցյալին մեջ կարևորագույն դերը կատարած է Երուսաղեմի Աթոռին և անոր սրբատեղյաց պաշտպանության, պահպանության և պաշտոնության մեջ: Պոլսո պատրիարքները և ամիրանները իրենց դիմում-պաշտոնության մեջ: Պոլսո պատրիարքները իրենց նշանակալի նվիրատվությամբ, միշտ անթիվ-անհամար ուխտավորներ իրենց նշանակալի նվիրատվությամբ, միշտ ուղիքի և կանգուն պահած են պանծալի այս հաստատությունը: Ու Պոլսո մեր Աթոռը և ժողովուրդը թեև կապրի ներկայիս իր նվազման շրջանը, բայց երբեք չէ դադրած մասնավոր կերպով հետաքրքրվել Երուսաղեմի առաքելական Աթոռով և ս. տեղերով:

Հետևաբար նույնքան կարևոր այս պարագան շարժման մեջ դրավ զմեզ սիրով և հատուկ հետաքրքրությամբ Երուսաղեմ գալու: Գիտե՞լիք թե երկար ատենէ ի վեր նորոգության մեջ էին ս. Հարության տաճարի մեր ազգապատկան մասերը և մատուռները: Մենք մասնավոր հետաքրքրություն և հոգածություն ունեցած ենք ս. տեղյաց նկատմամբ և հետևաբար քաջ առ քաջ հետևած ենք հեռվէն՝ աշտտել կատարվող նորոգության կարևոր աշխատանքներուն, որոնց հիմքերը, պարագաներու քերմամբ, մեր լուսարարապետության օրերուն դրված էին: Այս նորոգության մեծագույն մասամբ ավարտումը և նորակառույց ս. Սեղաններուն օծումը Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ կարևոր հանգրվան մըն էր ոչ միայն հայ Երուսաղեմի տարեգրության մեջ, այլ նաև հայ եկեղեցիի պատմության մեջ: Ս. տեղերը կարծիքներն ավելի կարևորություն ունին շատ տեսակետներէ, ասոնց հիմնականը եթէ այդ տեղերուն հուշավայրերն ըլլալն է մեր Տիրոջ փրկագործության մեծ խորհուրդին, մյուսն է ցուցանիշ հանդիսանալը Հայոց եկեղեցիին գրաված կարևոր դիրքին քրիստոնեական հին եկեղեցիներու ամբողջության մեջ:

Այս անկյունակետն ևս դիտված՝ պարտավոր էինք մենք ալ ներկա գտնվիլ ազգապատկան ս. տեղերու վերանորոգության և օծման նախկատիքին իբրև մեկ օղակը Հայոց եկեղեցիի նվիրապետական կառույցին: Ականատես ըլլալէ հետո կատարված աշխատանքներու արդյունքին, կըրնանք վկայել որ այս ընդհանուր նորոգչական գործին մեջն մեր եկեղեցին ամենէն շահավորը և ամենէն գեղարվեստաւորը դուրս եկած է, նախկին խուցերու և խորաններու՝ ինչպես նաև մանր մատուռներու լաբյուրինթոսէն վերակազմած ըլլալով գեղեցկագույն վերնատան եկեղեցին ամբողջ Տաճարին մեջ: Ու Հայոց. առաքելական եկեղեցիին ունեցած պատմական դիրքը ավելի քան երբեք ամրապնդված է քրիստոնեական մեծագույն այս սրբավայրին մեջ: Մենք սիրով կշնորհավորենք ս. Աթոռին Գահակալը, միաբանությունը ու հատկապես նորոգչական այս աշխատանքին անմիջական վերակացուները և գործադրիչները, ձեռք բերված այս նշանակալի արդյունքին համար:

Հավարտ մեր խոսքին՝ թող ներվի մեզի կարճատև մտածում մը: Ներկա լինելով ու մասնակցելով այս փառահեղ հանդիսության, մենք ապրեցանք



ԱԼԵԿՍԱՆԴՐՈՍ ԵՄԵՐՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԺԱՐԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐՈՒՄՆԻ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ
ՆՈՐԱԿԵՐՑ ԾԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

հոգեկան հրճվանքի հազվագյուտ պահեր: Բայց միաժամանակ մենք զմեզ դրած եղանք, հավաքաբար, պատասխանատվության մը ներքև:

Երուսաղեմի Ժառ. Վարժ.-ը մեր այն հոգևոր դպրանոցն է, որ օժտված է առավելագույն կարելիություններով եկեղեցականներ պատրաստելու: Ամեն ինչ որ անհրաժեշտ է դպրեվանքի մը համար ունի ան. կրոնական ու եկեղեցական շրջանակ, մշակութային ճոխ մթերք, մեծ մատենադարան, ամենօրյա աղոթք ու պաշտամունք, անցյալ և ավանդություն, այլովքն հանդերձ: Այս բոլորը պսակվեցան այս օրերս ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի փառավոր և ընդարձակ շենքով, օժտված և օժտելի՝ արդիական գրեթե բոլոր պայմաններով: Հարցը, որ կենթադրեմ թե ամենքիս մտքերում մեջ կծագի այն է, թե ինչպես ընել, որ Ժառ. վարժարանը առավելագույն և լավագույն չափով ծառայե իր իսկական նպատակին: Տարակույսն վեր է, թե ամեն կողմե շատ կարիք կա լավ կազմավորված հոգևորականներու և մտքի մշակներու: Թերևս մինչև հիմա կիրարկված միջոցներով կարելի չըլլա լրիվ հասնել ակնկալված նպատակին: Որևէ վարժարանի մը աշակերտությունը առհասարակ կկազմավորվի ուսուցիչներով և օրինակով: Դպրոց ըսվածը իր վերջին վերլուծումին մեջ կվերածվի ուսուցիչի և օրինակի, և այդպես է իրականությունը հատկապես կրոն. վարժարաններու համար: Հետևաբար ոչ մեկ դժվարության և գոհողության առջև կանգ պետք է առնել օժտելու համար նոր ժառանգավորացը և ընծայարանը կարողագույն մտքի ույժերով: Կենթադրենք որ առաքելյան Աթոռը ներկայիս ի վիճակի չէ առանձինն ի գլուխ հանելու այս գործը. հետևաբար կծագի անհրաժեշտությունը ամենքիս համագործակցության. ու ասիկա իրավունքը և արդար պահանջքն է Երուսաղեմի Աթոռին, քանի որ ժառանգավորաց վարժարանը միայն ս. Հակոբյանց վանքին համար միաբաններ չէ որ կհասցնե այլ՝ ամբողջ Հայց. եկեղեցիին հոգևոր պաշտոնյաներ, ինչպես կհաստատեն ներկա իրականությունը, որը գրեթե սփյուռքի, ամբողջ տարածքին վրա, մեր բոլոր թեմերում մեջ՝ կպաշտոնավարեն Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանեն շրջանավարտ հոգևորականներ:

Մենք, Թուրքիո հայությունը, «արծաթ եւ ոսկի ոչ ունիմք». բայց պիտի շարունակենք տալ ինչ որ ունինք, պիտի շարունակենք հայթայթել Երուսաղեմի Աթոռին համար կարևորագույն հում նյութը—աշակերտությունը: Ծառ բնականորեն Մայր Աթոռը անպակաս պիտի ընե իր բարոյական հովանավորությունը և օժանդակությունը, ինչպես ըրած է ցարդ: Սակայն, ըստ մեզի, կարևորագույնը պիտի լինի կազմությունը արտասահմանեմ բարձրագույն մակարդակի կեդր. հանձնախումբի մը, որ ստանձնե այս սրբազան գործի նյութական հոգը, անոր առավելագույն բաժինը ինչպես եղավ արդարև ս. տեղյաց նորոգության պարագային: Սակայն բացահայտ է, թե գլխավոր գործը պիտի կատարվի այստեղ, ս. Աթոռին մեջ, իբրև գործադիր ույժ և իբրև կենսագործող ձեռք: Հոգևորականներ պատրաստելու այսպես ասած սույն գործարանի վարիչները, գործիչներ և արտադրիչները գլխավորաբար ս. Հակոբյանց միաբանները պիտի ըլլան: Մենք վստահ ենք որ ս. Հակոբյանց միաբանությունը, առաջնորդությամբ իր ամեն. Պատրիարքին, և ամբողջ իր վարչական մեքենականությամբ ինքզինքը պիտի ենթարկե սրբազան պրկումի և օրինակելի կարգապահության, իրագործելու համար, առավելագույն և լավագույն չափով, այս վարժարանի գերագույն նպատակը:

Մենք անգամ մը ևս կխնդակցինք ու կշնորհավորենք Երուսաղեմի ամեն. Պատրիարքը և միաբանությունը, ձեռք ձգված այս հոյակապ հաջողու-

թյանց համար: Մենք անգամ մըն ալ կհայտնենք մեր գոհունակությունը մեզի եղած եղբայրական այս հրավերին՝ ինչպես նաև մեր անձին և մեր հետևորդներուն նկատմամբ ցույց տրված հյուրամեծարության համար: Ու կաղոթենք, որ նվիրապետական մեր Աթոռներու այս եղյակ եղբայրական հանդիպումը վերածվի երջանիկ օր մը քառյակ հանդիպումի, ու այս անգամ իր ամբողջականությամբ և իր լրությանը մեջ իրագործվի Հայց. եկեղեցիի միասնականությունը, ի փառս Աստուծո, ի պայծառություն մեր եկեղեցիին և ի հոգևոր մխիթարություն մեր ժողովուրդին»:

Միաբանական սույն ճաշին խոսք առավ նաև Հայոց Հայրապետը՝ շեշտելով, որ Իր այցելությունը սրբոց Հակոբյանց վանք մտնելուն է իր ավարտին: «Այս օրը ևս», ասաց Հայոց Հայրապետը, «ամսոռանալի հիշատակներով և տպավորություններով լեցուն մի օր եղավ Քրիստոսի լույս գերեզներով և տպավորություններով լեցուն մի օր եղավ Քրիստոսի լույս գերեզներով: Մեզ համար հոգեկան մասնավոր ուրախություն ու մխիթարություն է», ավելացրեց Հայոց Հայրապետը, «սիրո այս սեղանի շուրջ Մեր աջ և ձախ կողմերում ունենալ Երուսաղեմի և Կ. Պոլսի ամենապատիվ Մեր սրբազան եղբայրներին»:

«Մենք երջանիկ կաթողիկոս ենք,—ասաց Հայոց Հայրապետը, «թեև Մեր գահակալության օրերին, ժամանակավորապես խանգարվեց մեր եկեղեցու ներքին միասնությունը: Բայց Մենք ուրախ ենք և մխիթարված, որ այսօր մեծ չափով վերականգնվեց այն, Մեր երկու սրբազան պատրիարք եղբայրների ողջագործումով: Այս իրողությունը Հայոց Հայրապետի համար մեծագույն նվերն է, որը հոգեկան հրճվանք է պատճառում Մեզ: Մենք տկար ենք: Մեր ուժը մեր ներքին միասնության, մեր միության մեջ է: Միությանը կշահենք, իսկ անմիաբանությանը կկորցնենք բոլորս»:

Այս առթիվ Հայոց Հայրապետը, ակնարկելով մանավանդ Անթիլիասի Աթոռի կողմից ստեղծված եկեղեցական տազնապին, բարի ցանկություն հայտնեց, որ, հաճում հաջ եկեղեցու և ժողովրդի գերագույն շահերի, ժամանակն է, որ կիլիկյան Աթոռը մտնի հաջ եկեղեցու նվիրապետական կառույցի մեջ և իր օրինավոր տեղը գրավի, որպեսզի Հայաստանյայց եկեղեցին, ինչպես անցյալում նաև հետ այսու մեկ ու անբաժան՝ իր հոգևոր ազգային և հայրենասիրական առաքելությունը շարունակի հաջ ժողովրդի ծոցում:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետն Իր օրհնությունն ու գնահատանքը տվեց ա. Աթոռի ողջ միաբանությանը, ուսանողությանը, պաշտոնեականությանը և աշխատավորությանը:

Միաբանական սույն ճաշկերության ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան ժամը 20-ին հայրապետական շքամբի անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը Հ.Ե.Մ.-ի ակումբում դասախոսություն կարդաց՝ «Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և Երուսաղեմի հայոց պատրիարքական սուրբ Աթոռը մեր օրերին» թեմայով:

Հարգելի բանախոսը խանդավառ տեղեկություններ հաղորդեց նաև Հայաստանում մեր ժողովրդի արձանագրած փալլուն հաջողությունների մասին մշակույթի, գիտության, արվեստի նվաճումների բնագավառներում:

Դասախոսությունը լավեց մեծ հետաքրքրությամբ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունիսի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Իսրայելի հանրապետության նախագահ Էֆրայիմ Գաբերին, որը ջերմ խոսքերով ողջունեց Նրա և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի այցելությունը և Իր բարեմաղթությունները ուղղեց հայ եկեղեցուն և հավատացյալ ժողովրդին:

Հայոց Հայրապետն այս այցելության առթիվ ողջունելով հանրապետության պարոն նախագահին, ասաց.

«Մենք գոհություն կու տանք Աստուծո ամենակալին, որ հրավերովը Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքին, այցի եկանք սուրբ քաղաք Երուսաղեմ և այժմ կգնվինք Ձեզ մոտ, բերելու Ձերդ Գերազանցության Մեր և հայ եկեղեցվո ողջույնը և ամենաբարի մաղթանքները՝ ուղղյալ Ձեզի և ձեր ժողովուրդին:

Մենք Երուսաղեմ եկանք, մեր եկեղեցվո պատմական կեդրոն սուրբ Էջմիածնեն, Հայաստանեն, իբրև գերագույն պետը հայ եկեղեցվո, նախագահելու և Հարության տաճարի հալկական խորաններու օծման և նոր հոգևոր վարժարանի բացման հանդիսությամբ, որոնք կատարվեցան բացառիկ շուքով և Մենք հոգեպես ջերմորեն մխիթարվեցանք:

Մեր սույն այցելության առթիվ գտանք շատ ուշադիր ու հարգալից վերաբերումը ձեր երկրի կրոնից նախարարության և քաղաքային իշխանության, որի համար կկամենանք Մեր ջերմ շնորհակալությունը հայտնել Ձերդ Գերազանցության:

Երեկ, կիրակի օր, և. Հարության տաճարի մեջ սուրբ պատարագի միջոցին, Մենք աղոթեցինք որ Աստված այս սուրբ քաղաքը, ձեր երկիրը և ամբողջ այս շրջանը Մերձավոր Արևելքի, պահե-պահպանե տևական խաղաղության ու ապահովության մեջ, շրջան մը ուր կապրին նաև ավելի քան կես միլիոն հայ հավատացյալ զավակները մեր եկեղեցվո:

Կխորհինք, թե մեր օրերուն, մարդկային աշխարհը, ժողովուրդները բոլոր՝ մեկ միասնություն կկազմեն, մեկ ճակատագրով, մեկ ապագայով:

Խաղաղ գոյակցությունը, համերաշխ գործակցությունը և արդար լուծումը բոլոր ազգամիջյան հարցերուն այն գերագույն սկզբունքները պետք է նկատել, որոնցով կարելի պիտի ըլլա ապահովել բարօրությունը և երջանկությունը բոլոր ժողովուրդներուն:

Մեզի համար մխիթարական պիտի ըլլար Մեր վստահությունը հայտնել, թե Իսրայելի պետությունը ևս իր բոլոր միջոցները ի գործ պիտի դնե այս ոգիով և այս նպատակով:

Ձերդ Գերազանցություն, թույլ տվեց Ձեզի մաղթել լիակատար քաջառողջություն և երկնային ներշնչումներ, Ձեր խաղաղարար առաքելության ճանապարհի վրա:

Թող Աստված օրհնե ձեր երկիրը և ձեր տաղանդաշատ ժողովուրդը. ամենա՝

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ

ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Նույն օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրաց մատենադարան՝ և. Թորոս մատուան մեջ, որը

կառուցվել է Հեթում Ա մեծագործ թագավորի կողմից գահաժառանգ Թորոս իշխանի եղբորական մահվան հիշատակին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին **տ. Սերովքե, տ. Կոմիտաս** սրբազանները, **Արթուն Հատիսյանը** և **Գրիգոր Խանջյանը**:

Զեռագրաց մատենադարանի տեսուչ, բազմավաստակ գիտնական **տ. Նորայր արքեպ. Պողարյանը** ջերմությամբ ընդունեց Հայոց Հայրապետին և պատմական տեղեկություններ տվեց մատուան կառուցման մասին: Սույն մատուան ներքին ամբողջ պատերը երեսպատված են Կուտինայում (Քյոթահիա) պատրաստված երկնագույն ընտիր խճանկարներով: Այս մատուան մեջ է, որ շուրջ քսան գրադարակներում աչքի լույսի պես պահպանվում են հնադարյան մեր մշակույթի անկրկնելի գանձերը՝ ավելի քան 3800 ձեռագրեր: Տ. Նորայր սրբազանը տարիների տքնաջան աշխատանքով պատրաստել և հրատարակել է 2365 ձեռագրերի ցուցակը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը դիտեց մատուան մեջ ի պահ դրված հնագույն ձեռագրեր, այդ թվում՝ 1269 թվականի Երզնկայի նշանավոր Աստվածաշունչը, որը սեփականությունն է եղել Սարգիս արքեպ. Երզնկացու, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի Ավետարանը՝ նկարազարդված 1260 թվականին Թորոս Ռոսլինի կողմից, ապա Կեռան իշխանուհու Ավետարանը՝ նկարազարդված 1265 թվականին դարձյալ Թորոս Ռոսլինի կողմից Հոռմկլայում:

Ինչպես հայտնի է, միջնադարյան կիլիկյան շրջանի հայ նշանավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինից մեզ հասել են յոթ նկարազարդ ձեռագրեր, որոնցից հինգը սեփականությունն են Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրատան:

Վեհափառ Հայրապետը իր այցելության առթիվ **ս. Հակոբյանց վանքի** ձեռագրաց մատենադարանի ոսկեմատյանում գրեց հետևյալը. «**Մորը գոհունակությամբ այցի եկանք ս. Թորոս և Մեր ջերմ գնահատանքն ու օրհնությունը բերինք** բազմավաստակ գիտնական միաբան գերաշնորհ տեր **Նորայր արքեպիսկոպոսին**, մաղթանքով սրտագին որ քաջառողջ երկար տարիներ տակավին ապրի, իր բոլոր գիտական մատենագրական ծրագրերը ի կատար ածելու համար»:

ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԳՆՈՒԽՆԵՐԸ ԹԵՅԱՍԵՂԱՆՈՎ ՊԱՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Նույն օրը, հետմիջօրեի, ժամը 15.30-ին, Բեթլեհեմի, Նաբլուսի, Ռամալայի, Քեբրոնի, Բեթանիայի և արաբական այլ քաղաքների քաղաքագլուխները «Ամբաստոր» հյուրանոցում Հայոց Հայրապետի պատվին կազմակերպեցին ճոխ թեյասեղան, որին ներկա եղան ավելի քան հարյուր հրավիրյալներ, այդ թվում՝ արաբ իրավաբաններ, հորդանանյան նախկին պետական պաշտոնյաներ, արաբ քաղաքական-հասարակական հայտնի գործիչներ, շեյխեր՝ գլխավորությամբ մուֆթի Գուստ շեյխ Սաադ Էլ Դին Էլ Ալաբիի:

Հայոց Հայրապետի ժամանումը, հանուն արաբ քաղաքագլուխների, ջերմ խոսքերով ողջունեց Նաբլուսի նախկին քաղաքագլուխ **Համդի Քանանը**՝ շեշտելով, որ հավաքված բոլոր ներկաները մեծ սիրով և երախտագիտությամբ են ողջունում Հայոց Հայրապետի ներկայությունը, Հայրապետ, որը, որպես արաբ ժողովրդի մեծ բարեկամ, պաշտպանում է նրա արդար դատը, ինչպես պաշտպանում է Սուվետական Միությունը: Մեծահարգ նախ-

կին քաղաքագլուխը ցանկություն հայտնեց և բարենախօսեց, որ Հայոց Հայրապետը կրկին անգամ ուխտի գա սուրբ երկիր, առավել երջանիկ պայմանների մեջ:

Հայոց Հայրապետը, խոսք առնելով այս առթիվ, ասաց, որ Ինքը ջերմ սիրով ողջունում է ներկայությունը այստեղ հավաքված արաբ ժողովրդի ներկայացուցիչների, հասարակական հայտնի գործիչների և առաջին իսկ թույլից զգում է արաբ ժողովրդի սրտի բուխանդակ ջերմությունը:

Հայոց Հայրապետն այնուհետև ոգեկոչեց 1915 թվականի Ապրիլյան եղեռնի տխուր օրերը, երբ արաբ ժողովուրդը Միջին Արևելքի երկրներում եղբայրորեն ու սրտաբաց ընդունեց նահատակված հայ ժողովրդի գաղթական զավակներին, իր աղն ու հացը բաժանեց նրանց հետ և բուժեց նրանց սրտի վերքերը:

Հայոց Հայրապետը նշեց, որ ամենից առաջ արաբական երկրներում է, որ հայ ժողովրդի տարագիր զավակները գտան ապաստան, հոգատար եղբայրական վերաբերմունք, ասպնջականություն և ազատություն, կառուցեցին իրենց աղոթքի տները և հիմնեցին հայկական դպրոցներ: Արաբ ժողովրդի այս եղբայրական վերաբերմունքը, շեշտեց Հայոց Հայրապետը, շարունակվում է մինչև այսօր, երբ շուրջ կես միլիոն հայություն է ապրում Միջին Արևելքի արաբական երկրներում որպես լիիրավ, օրինապահ և աշխատասեր քաղաքացիներն այդ երկրների:

Բովանդակ հայությունը, հավաստիացրեց Հայոց Հայրապետը, ինչպես սփյուռքի ողջ տարածքի վրա, այնպես էլ Սովետական Հայաստանում, երբեք չի մոռանա արաբ ժողովրդի այս ազնվահոգի վերաբերմունքը:

Սուրբ երկիր Մեր երկրորդ այցելությամբ, ասաց Հայոց Հայրապետը, մեծապես մխիթարվեցինք սրբազան արարողությունների և հանդիսությունների կատարումով: Մեկնում ենք այս սուրբ երկրից՝ տանելով Մեզ հետ անմոռանալի տպավորություններ նաև այս հանդիպումից: Մեր աղոթքների մեջ այստեղ միշտ հայցեցինք Աստծուց խաղաղություն աշխարհին, համագործակցություն ժողովուրդների և ազգությունների միջև, որովհետև աշխարհը դեռ չի գտել իր խաղաղությունը: Բայց Մեր ջերմ աղոթքը եղավ, ավելացրեց Հայոց Հայրապետը, որ այսուհետև ոչ մի տեղ չկրկնվեն պատերազմները, և ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ տիրեն արդարության, հավասարության և մարդկային իրավանց պաշտպանության ըսկըզբունքները:

Ողջունի սույն խոսքերից հետո Հայոց Հայրապետը և Նրա շքախմբի բոլոր անդամները հյուրասիրվեցին ճոխ թեյասեղանի շուրջ:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԹԻ ԲԵՐԴՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Երուսաղեմի քաղաքագլուխ **Տեղի Կողեկը** և նահանգապետ **Ռաֆայել Լևին**, Դավթի պատմական բերդում Հայոց Հայրապետի պատվին կազմակերպեցին բացօթյա ողջերթի ընդունելություն Երուսաղեմից Նրա մեկնելու առիթով:

Ընդունելությանը ներկա էին կրոնից մինիստր **Իցհակ Ռաֆայելը** և ավելի քան հինգ հարյուր հայ, արաբ, հրեա հրավիրյալներ, քույր եկեղեցիների հոգևոր պետեր, դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ, արաբական քաղաքների քաղաքագլուխներ, այդ թվում՝ Զեբրոնի քաղաքագլուխ շեյխ **Մուհամմեդ Ալի Ջաաբարին**:

Ընդունելությանը ներկա էին նաև Կարախոտև և սամարացի հրեական համայնքների կրոնապետներ:

Հայոց Հայրապետի ժամանումն Իր շքախմբի անդամներով ջերմորեն ողջունվեց բոլոր ներկաների կողմից: Երուսաղեմի հրեա երիտասարդների նվագախումբը կատարում էր հայկական, արաբական և հրեական ժողովրդական երգեր:

Հայոց Հայրապետը և քաղաքագլուխ Տեդի Կոլեկը ճառեր փոխանակեցին: Հայոց Հայրապետն Իր խոսքի մեջ շեշտեց, որ Ինքը խորապես զգացված է սուրբ երկրի քաղաքական իշխանությունների և արաբ ու հրեա ժողովուրդների կողմից ցույց տրված սքանչելի հյուրասիրությունից և ուշադրությունից:

Ընդունելության ավարտին, հրաժեշտ առնելով, Հայոց Հայրապետը Երուսաղեմի քաղաքագլխին, նահանգապետին և կրոնից մինիստրին նվիրեց արծաթյա ախեսներ՝ որպես՝ նվերներ:

Այս առթիվ տեղական թերթերը նշեցին, որ Հայոց Հայրապետը, որպես հայ եկեղեցու գերագույն պետ, որը Սուլեյմանյան Հայաստանից է գալիս, «խոր տպավորություն թողեց բոլոր նրանց վրա, ովքեր հանդիպեցին Նրա՞ն՝ Նրա իննօրյա բազմազբաղ օրերին»:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 20-ին, տ. Եղիշե սրբազան պատրիարքը Վեհափառ Հայրապետի, թեմական առաջնորդների, շքախմբի անդամների և հայ ուխտավորների պատվին պատրիարքարանի դահլիճում տվեց ողջերթի մեծ ընդունելություն, որին ներկա էին նաև Երուսաղեմի հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց տիկիներով՝ շուրջ երկու հարյուր հոգի:

Այս ուրախ առիթով ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը Հայոց Հայրապետի միջոցով Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանին նվիրեց հայ մանրանկարչության արքա Թորոս Ռոսլինի 1268 թվականի նկարազարդ գունավոր Ավետարանը: Նույն առիթով, նույնքան մեծ սիրով և ուրախությամբ, սրբազան պատրիարքը մի այլ ընտիր ձեռագիր նվիրեց Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի ձեռագրաց մատենադարանի համար: Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի այս մեծարժեք, արտաբուխ, բացառիկ նվերները որոտընդոստ ծափահարություններով ընդունվեցին բոլոր ներկաների կողմից:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին և տ. Եղիշե սրբազան պատրիարքին ողջյալ երախտագիտական և շնորհակալական ջերմ մի ուղերձ կարդաց, հանուն սփյուռքահայ ուխտավորների և հյուրերի, ֆրանսահայ ծանոթ հասարակական գործիչ պրն. Գևորգ Պագրճյանը:

Ողջերթի սույն ընդունելությունն անցավ ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

Վերջում Հայոց Հայրապետը բոլոր ներկաներին տվեց Իր օրհնությունն ու պատգամը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻՆ

Հուլիսի 1, երեքշաբթի:

Այսօր Երուսաղեմում Հայոց Հայրապետի այցելության վերջին ժամերն

են: Երագի նման անցան այցելության ինն օրերը, անցան արագ, բայց բովանդակալից, հուզումնառատ, բայց և հոգեշեն:

Բաժանման վերջին սրտառու ժամն է:

«Հա՛յր, հասեալ է ժամ»: Մեկնում է Հայոց Հայրապետն Իր շքախմբի անդամներով:

Հայոց Հայրապետը պատրիարքարանի դահլիճից եկեղեցական թափորով առաջնորդվում է ս. Գլխադիր և ապա Ավագ խորան:

«Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր»:

Վերջին րուպեններն են: Պահը հուզիչ է, նույնիսկ խռովիչ: Ուրախության և հպարտության լուսե արցունքներ կան շատերի աչքերում բաժանման այս առիթով:

«Ոչ թողում զձեզ որքս, գամ առ ձեզ»:

Ղողանջում են Մայր տաճարի զանգերը: Բոլորը՝ միաբան, ուսանող, ուխտավոր, ժողովուրդ, աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:


Հայոց Հայրապետին նանապարհում են ամենապատիվ տ. Ծնորհք սրբազան պատրիարքը, եպիսկոպոսաց դասը, ս. Աթոռի ողջ միաբանությունը, Ժառանգավորաց, ս. Թարգմանչաց, Տատուրյան վարժարանների աշակերտությունը և Երուսաղեմի հայությունը:

«Վերջին ժամն է, օրհնե՛, Հայր»:

Հայոց Հայրապետը ինքնաշարժերի մեծ շքերթով մեկնում է դեպի Ամման:

Հայոց Հայրապետին ողեկցում են տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սիոն, տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Ծաֆե, տ. Վաչե սրբազանները, պրոֆ. Ավետիս Սանճյանը, Գրիգոր Խանջյանը, Արթուր Հատիսյանը, տ.Անանիս աբղ. Արաբաջյանը և ուրիշներ:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ԱՄՄԱՆՈՒՄ

Իսրայելի և Հորդանանի սահմանի կամուրջի վրա Հայոց Հայրապետին դիմափորեցին և բարի մանապարհ մաղթեցին կառավարական բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Հորդանանի հողի վրա, Նորին Վեհափառություն Հուսեին Բ թագավորի անձնական ինքնաշարժով, Հայոց Հայրապետը հանդիսավորապես մուտք գործեց մայրաքաղաք և առաջնորդվեց «Ինտերկոնտինենտալ» հյուրանոց:

ԱՅՑ ՀՈՐԴԱՆԱՆԻ ԾԵՐԱԿՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԵՀԵՆՋԵԹ ԹԱԼՀՈՒՆԻՒՆ

Հուլիսի 2-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Սիոն, տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Ծաֆե, տ. Վաչե սրբազանների և Իր շքախմբի անդամների ուղեկցությամբ, Ամմանում այցելություն տվեց Ծերակույտի նախագահ Պեհենջեթ Թալհունիին, որը սիրալիք հարգանքով Հայոց Հայրապետին դիմափորեց և բարի գաղուստ մաղթեց:

Հայոց Հայրապետն Իր պատասխան խոսքի մեջ ողջունեց Ծերակույտի պարոն նախագահին, շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և սրտագին բարեմաղթություններ արեց Հորդանանի Նորին Վեհափառություն Հուսեին Բ թագավորի և Հորդանանի բարձրաստիճան ղեկավար աշխատողների հայրենակներ գործերի հաջողության համար:

Հայոց Հայրապետն Իր խորագգաց երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեց Ծերակույտի մեծարգո նախագահին այն եղբայրական առաջնականության համար, որ 1920 թվականից հետո Հորդանանի իշխանությունները, նրա հալասեր արքաները և արաբ ժողովուրդը ցույց տվեցին հայ

ժողովրդի գաղթական զավակների հանդեպ, որոնք տուն ու տեղ եղան այս օրհնյալ հողի վրա, ապրեցին խաղաղության, ազատության ու բարօրության մեջ, կառուցեցին իրենց տանքերը, շինեցին իրենց դպրոցներն ու ակումբները և ապրեցին որպես լիիրավ քաղաքացիներն այս երկրի, որպես կարգապահ ու շինարար տարր:

Հայոց Հայրապետը իր ողջունի խոսքն ավարտեց՝ հայցելով Աստուծո հովանին հորդանանյան հայրենիքի, նրա իմաստուն և քաջակորով թագավորի ու երկրի բոլոր պատասխանատու ղեկավարների և ժողովրդի վրա, որպեսզի բոլորը, մեկ հոգի և մեկ սիրտ, ծառայեն հորդանանյան փառապանծ հայրենիքին:

ԱՅՑ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍԵՒՆ Բ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Հուլիսի 2-ին, չորեքշաբթի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետն Ամմանում, Բեամեն պալատում, **տ. Եղիշե սրբազան պատրիարքի** և հայ բարձրաստիճան հոգևորականների ողեկությամբ, այցելեց Հորդանանի Նորին Վեհափառություն **Հուսեին Բ թագավորին:**

Հայոց Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը հարգալից մեծարանքով և ջերմությամբ ընդունվեցին թագավորի կողմից:

Սրտագին մթնոլորտում Հայոց Հայրապետը և Հորդանանի թագավորը բարիգալստյան և ողջունի խոսքեր փոխանակեցին: Հայոց Հայրապետը, այս առթիվ խոսք առնելով, իր շնորհակալությունը հայտնեց ջերմ դիմավորման և հյուրասիրության համար ու իր երախտագիտությունը հայտնեց Հորդանանում ապրող հայ ժողովրդի հանդեպ ցույց տրված ասպնջականության և արքայական ուշադրության համար: Հայոց Հայրապետը միաժամանակ բարեմաղթություններ արեց Վեհափառ թագավորի արևշատության, քաջաողջության, արքայական ընտանիքի բարօրության և Հորդանանի բարեխնամ կառավարության հայրենաշեն գործերի հաջողության ու արաբ ժողովրդի խաղաղության և ապահովության համար, ժողովուրդ, որի ծոցում հանգիստ և ապահով ապրում է Հորդանանի հայությունն իր կրոնական հաստատություններով արդարության և ազատության պայմաններում:

Այս առթիվ Հայոց Հայրապետը **ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշան նվիրեց** Նորին Վեհափառություն **Հուսեին Բ թագավորին:**

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՌՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, ժամը 13-ին, Ամմանի հայոց հոգևոր հովվությունը և տեղական խորհուրդը, ի պատիվ Հայոց Հայրապետի, «Տեռաս» ռեստորանում կազմակերպեց ողջերթի ընդունելություն:

Երեկոյան ժամը 21-ին Ամմանի Հուսեին թագավորի անունը կրող մարզավանի դահլիճում Հորդանանի կրոնից մինիստր շեյխ դոկտ. **Աբդ Էլ Ազիզ Խալաթը**, ողջերթի ճաշկերույթ տվեց՝ ի պատիվ Հայոց Հայրապետի: Ընդունելությանը հրավիրված էր շուրջ վաթսուն հոգի, այդ թվում՝ կրոնական համայնքների հոգևոր պետեր, դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձինք:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵԾՑ Է ՏԱԼԻՍ ԱՄՄԱՆԻՆ


Հուլիսի 3-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Ամմանից և ինքնաթիռով մեկնեց Փարիզ:

Հայոց Հայրապետին դեպի Փարիզ ճանապարհեցին տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Շահեն, տ. Վաչե սրբազանները, տ. Անուշավան և տ. Փառեն վարդապետները, համայնքի Տեղական խորհրդի անդամները:

Հանուն Հորդանանի Հունեին Բ թագավորի, Հայոց Հայրապետին ճանապարհեցին Հորդանանի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի պետ Մուհդասամ Բիլբեսին, Թոֆիկ Խաթան փաշան, բանակի հրամանատարներ, Ամմանի ոստիկանապետը, ինչպես նաև մայրաքաղաքի քույր եկեղեցիների և հարանվանությունների հոգևոր պետեր:

Հայոց Հայրապետին ճանապարհեց նաև Հորդանանում Սովետական Միության դեսպան Ա. Լ. Վորոնինը:

Հայոց Հայրապետին ողեկցում էին տ. Սերովբեն, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, Արթուր Հատիտյանը, Գրիգոր Խանջյանը և տ. Անանիա արք. Արաբաջյանը:





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ

Ժամը 19-ին Փարիզ ժամանեց **Վեհափառ Հայրապետը**: Բուրժեի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրաչը եպս. Մարտիրոսյանը**, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ **տ. Գյուտ եպս. Նազաշյանը**, Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպս. Պողապալյանը**, Ալֆորվիլի հայոց հոգևոր հովիվ **տ. Զարեն վրդ. Թովալյանը**, Փարիզի կրոնական ընկերակցության անունից՝ **Ալեքսանդր Օհանյանը**, փարիզահայ մտավորական **Կարպիս Զրբաշյանը** և ուրիշներ:

Վեհափառ Հայրապետն իջևանեց «Պլացա Ալթենե» հյուրանոցում:

Ժամը 21-ին տեղ և տիկին **Համազասպ և Ալիս Մոմճյաններն** իրենց հյուրընկալ հարկի տակ Հայոց Հայրապետին ընտանեկան մտերմիկ սեղանի շուրջ պատվեցին ճաշով, որին ներկա էին **տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Տիրաչը, տ. Գյուտ, տ. Ներսես սրբազանները, Արթուր Հատիսյանը, Գրիգոր Խանջյանը, տ. Անանիա Բեդեյան, ինչպես նաև Մայր Աթոռի բարերար տեղ և տիկին Կարպիս Զրբաշյանները**:

Այս առթիվ **Կարպիս Զրբաշյանը** և Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանակիրներ ֆրանսահայ **Գևորգ Պագրճյանի, Արծյուն Զրբաշյանի, Նապոլեոն Պուլլուքյանի, Կարպիս Ճնկտրյանի** և իր կողմից գնված ժՁ դարի մի ընտիր ձեռագիր «Յայսմաուրբ» և երեք այլ արժեքավոր ձեռագրեր նվիրեց Հայոց Հայրապետին Երևանի Մեսրոպ Մաշտոցյան ձեռագրաց Մատենադարանի համար՝ արժանանալով Նորին Սուրբ Օծույթյան և՛ օրհնությանը, և՛ երախտագիտությանը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՏ Է ՏԱԼԻՍ ՓԱՐԻԶԻՆ


Հուլիսի 5-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետը** հրաժեշտ առավ Փարիզից և իր շքախմբով մեկնեց Մոսկվա:

Բուրժեի օղակալակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին տ. Սերովբե և տ. Գլուտ սրբազանները, տ. Զարեհ և տ. Նորվան վարդապետները, Փարիզի կրոնական ընկերակցության անդամները, բույր եկեղեցիների և մամուլի ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետին ճանապարհեց, հանուն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության, պրոտոկոլի գրասենյակի պետ Միշել Բերսոն:

Հայոց Հայրապետին դեպի Մոսկվա ճանապարհեց մահ Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանատան առաջին քարտուղար Հենրիկ Լիլյանը:





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայի Ծերեմեականի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ **տ. Պարզ Լպս. Գևորգյանը** և **տ. Գրիգորիս աբղ. Բունիաթյանը**:

Հանուն ռուսաց եկեղեցու **Տ. Պիմեն Պատրիարքի**, Հայոց Հայրապետին այստեղ դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև **տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսը**:

Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև ՍՍՀՄ Միմիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ **Ա. Կուրոյեդովի** առաջին տեղակալ **Ա. Տիտովը**:

Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հալ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը** նույնպես օդանավակայանում բարիգալուստյան ջերմ խոսքերով ողջունեց Հայոց Հայրապետի ժամանումը:

Հայոց Հայրապետն Իր շքախմբով իջևանեց Մոսկվայի «Մովետսկայա» հյուրանոցում:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հուլիսի 6, կիրակի: Այսօր հին տոմարով կաթողիկե Մայր Աթոռ **ս. Էջմիածնի** հիմնադրության տոնն է:

Մոսկվայից հայոց **ս. Հարություն** եկեղեցում հանդիսավոր **ս. պատարագ** մատուցեց հայրապետական շքախմբի անդամ, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը**:

«Հայր մեր»-ից առաջ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ **տ. Պարզ Լպս. Գևորգյանը** սրտագին խոսքերով ողջունեց Հայոց Հայրապետի ժամանումը Մոսկվա և ապա հրավիրեց Նրան տալու Իր

ողջույնը և օրհնությունը Մոսկվայի հայ հավատացյալներին, որոնք լցրել էին եկեղեցին ու նրա շրջափակը:

«Ի վերայ Աջոյն և սուրբ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կալ», պատմաբան Առաքել վրդ. Դավրիժեցու սույն գեղեցիկ խոսքն Իր քարոզի համար որպէս բնաբան առնելով, Հայոց Հայրապետը վեր հանեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային, հայրենասիրական առաքելությունը մեր ժողովրդի կյանքում դարերի միջով, ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև մեր ժամանակները և ապա, անդրադառնալով Լոնդոն, Փարիզ, Ամման և Երուսաղէմ կատարած Իր ողևորության պատմական նշանակության մասին, հաղորդեց սփյուռքահայության եղբայրական ջերմ ողջույններն ու զգացումները Մոսկվայի հայությանը՝ օրհնելով բովանդակ հայ ժողովրդին և Հայաստանյայց եկեղեցուն:

Հալաբտ ս. պատարագի եկեղեցում ներկա հայ հավատացյալների բազմությունն աջահամբույրով ստացավ Հայոց Հայրապետի օրհնությունը:

ԱՅՅ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻՆ


Հուլիսի 7-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, **Վեհափառ Հայրապետը,** արտասանմանյան Իր ողևորությունից Մոսկվա ժամանելու առիթով, այցելեց ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ **Ա. Կուրոյեդովին:**

Վեհափառ Հայրապետին ողջեցում էր **տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը:**

Հայոց Հայրապետի և Խորհրդի մեծարգո նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց:

Զրույցին ներկա էր Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը:**





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

Հուլիսի 8-ին, երեքշաբթի օրը, ժամը 20-ին, Հայոց Հայրապետն իր շքախմբի անդամների հետ Մոսկվայից վերադարձավ Մայր Աթոռ՝ շուրջ երկու և կես ամիս տևած արտասահման կատարած իր հովվապետական ուղևորությունից հետո:

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին **տ. Պարզև եպս. Գևորգյանը, տ. Անանիա արք. Արաբաջյանը** և ուսաց պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ **տ. Խրիզոստոմ եպիսկոպոսը:**

Հայոց Հայրապետին դեպի Երևան բարի ճանապարհ մաղթեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը** և ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Վ. Մակարցևը:**

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ **տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Վահան, տ. Նարեկ, տ. Գևորգ** եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներն ու հավատացյալների մի մեծ խումբ:

Հայոց Հայրապետին այստեղ մեծ ուրախությամբ դիմավորեցին նաև ամերիկահայ երիտասարդաց եկեղեցասեր կազմակերպության շուրջ 32 երկսեռ ուսանող անդամ-անդամուհիները՝ գլխավորությամբ **տ. Ներսես քհն. Ծեպեճյանի**: Ուսանողների այս խումբն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում և հայրենիքում՝ Հայոց Հայրապետի հրավերով:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Սուրեն Հովհաննիսյանը**:

Այնուհետև Հայոց Հայրապետը, օրհնելով բոլոր ներկաներին, ավտոմեքենաների շարայունով հանդիսավորապես առաջնորդվեց Մայր Աթոռ, որն այս առթիվ զարդարվել էր տոնականորեն:

Հայոց Հայրապետը զանգերի զվարթ դողանքի ներքո, եկեղեցական թափորով, մուտք գործեց Մայր տաճար, ուր լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթրուքյանը**, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, սրտագին բարի գալուստ մաղթեց Նրան:

Վեհափառ Հայրապետն իր պատասխան խոսքով ողջունեց բոլորին, անդրադարձավ արտասահման կատարած իր ուղևորության հոգևոր, եկեղեցական, ազգային-հայրենասիրական արդյունքներին և հաղորդեց սփյուռքի հայության եղբայրական ողջույնները Մայր Աթոռի միաբանությանն ու հայրենի ժողովրդին:


Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Վեհարան, ուր «Պահպանիչ»-ով ավարտեց օրվա հանդիսությունը:

Բարի գալուստ Հայոց սիրելի Հայրապետին:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ



Մայր հայրենիքում



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հուլիսի 25-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Երևանում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանն ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Նրա արտասահման կատարած վերջին հովվապետական այցելության առիթով:

Հայոց Հայրապետին ողջեցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Գեղարդի վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը:

Հայոց Հայրապետին և Մինիստրների սովետի մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում Նորին Արքությունը տիար Գրիգոր Ա. Արզումանյանին է հաղորդում սփյուռքում իր վերջին ուղևորության ժամանակ այցելած եկեղեցական համայնքների հայրենակարոտ հայության ողջույններն ու բարեմաղթությունները հայրենիքի բարօրության համար:

Ջերմ զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը պատմում է նաև արտասահման կատարած իր տասներորդ ուղևորության առթիվ Ռումինիայի, Բուլղարիայի, Լոնդոնի, Փարիզի, Ամմանի և Երուսաղեմի հայ եկեղեցիներին ու հայկական համայնքներին տված իր այցելության հոգևոր, եկեղեցական ու հայրենասիրական նշանակության, Լոնդոնում, Փարիզում օժիված հայկական նոր եկեղեցիների, Փարիզում Հայկական բարեգործական ընդհանուր միության երիտասարդաց ընկերակցության նորաբաց մշակութային կենտրոնի, ինչպես նաև Երուսաղեմի ու Հարության տաճարի հայկական մասի վերանորոգված խորանների օծման և Ալեքս-Մարի Մանուկյանների անունը կրող նորակերտ վարժարանի բացման մասին:

Զրույցի վերջում **Հայոց Հայրապետը** խանդավառ մթնոլորտում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ **Գրիգոր Ա. Արզումանյանին** է հանձնում պաշտոնապես Երուսաղեմի հայոց ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքի** թանկարժեք ու բացառիկ նվերը՝ ձեռագիր մի Ավետարան, որը նկարագարովել է **Հոռմկլայում, 1268 թվականին**, հայ մանրանկարչության մեծագույն վարպետ **Թորոս Ռոսլինի** կողմից:

Ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը** 1975 թվականի հունիսի 30-ին Երուսաղեմում Հայոց Հայրապետին է հանձնում վերոհիշյալ թանկարժեք ձեռագիրը հետևյալ հիշատակարանով.

«Նորին Սուրբ Օծություն **Տ. Տ. Վազգեն Ա** կաթողիկոսի փափաքով, սրբազան պատրիարքը Երուսաղեմի և սրբոց Հակոբյանց միաբանությունը Երևանի պետական Մաշտոցի Մատենադարանին կնվիրեն Ռոսլինի սույն ձեռագիրը, ի վայելումն ազգիս հայոց:

ԵՂԻՇԵ ԱՐԶ. ՏԵՐՏԵՐՅԱՆ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

30 հունիս 1975
Երուսաղեմ»:

Հայոց Հայրապետը վերոհիշյալ ձեռագրի վրա հետևյալ մակագրությամբ սույն թանկագին ձեռագիրը հանձնում է տիար **Գրիգոր Ա. Արզումանյանին**՝ ի պատիվ դրվելու համար Երևանի Մաշտոցյան ձեռագրաց Մատենադարանում:

«Մենք Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, այսօր, 25 հուլիս 1975 թվի, սույն ձեռագիր Ավետարանը հանձնեցինք Երևանի **ս. Մեսրոպի** անվան պետական Մատենադարանին»:

Այս ուրախ առթիվ **Հայոց Հայրապետն** իր կողմից էլ ձեռագրաց Մատենադարանին է նվիրում է դարի գործ, մեր ունեցած ձեռագրերի մեջ երկաթագիր հնագույն մի Ավետարան ևս, որը սույն տարվա սկզբին ստացել էր Մայր Աթոռում, **տ. Վահան եպս. Տերյանի** ջանքերով: Սույն ձեռագիրը կոչվել է «**Տիրամօր Անետարան**», ի հիշատակ հանգուցյալ **Տիրամայր Սիրանույշ Պալճյանի**:

Հայոց Հայրապետը, իր այցելության առիթով, հանձնում է նաև **ս. Գրիգոր Լուսավորչի** շքանշանակիր ֆրանսահայ **Կարպիս Զրբաշյանի, Գևորգ Պագրճյանի, Արծրուն Զրբաշյանի, Նապոլեոն Պուլյուքյանի** և **Կարպիս Ժընկըտըրյանի** կողմից գնված ԺԶ դարի ընտիր մի ձեռագիր «**Յայսմատուրք**» և այլ արժեքավոր երեք ձեռագրեր՝ որպես նվեր, իր միջոցով տրվելու համար Մաշտոցյան ձեռագրաց Մատենադարանին:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ **Գրիգոր Ա. Արզումանյանը**, մեծ ուրախությամբ ու գոհունակությամբ, ընդունում է Հայոց Հայրապետի ձեռքից ձեռագիր այս նվերները և պաշտոնապես հանձնում Մատենադարանի դիրեկտոր ակադ. **Լևոն Խաչիկյանին**՝ որպես թանկագին մատուց, աչքի լույսի պես պահպանվելու համար Մատենադարանում, հայ մշակույթի մեր անկրկնելի գանձերի հետ, «**ի վայելումն ազգիս հայոց**»:


Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր ակադ. **Լ. Խաչիկյանը** սրտագին շնորհակալությամբ է ընդունում **Հայոց Հայրապետի**, Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարքի և ֆրանսահայ պատ-

վական ազգայինների այս թանկագին նվերները, որոնք է՛լ ավելի են հարուստացնում Մատենադարանի հայ ձեռագրաց գանձարանը:

Հայոց Հայրապետի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի պարոն նախագահի միջև տեղի ունեցած ջերմ գրույցին և ձեռագրերի պաշտոնական հանձնման արարողությանը ներկա են լինում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գապարյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Լ. Ե. Վարդանյանը:

Ա. Հ.





ՀԱՆՈՒՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

Հուլիսի 30-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում, «Ֆինլանդիա» պալատում, հանդիսավոր իրադրության մեջ, գումարվեց Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցությանը նվիրված եզրափակիչ երրորդ նիստը, որին մասնակցում էին Եվրոպայի 33 պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի և Կանադայի կառավարությունների քարձրատիճան 35 ղեկավարներ: Հելսինկիի սույն վեհաժողովի հիմնական խնդիրն էր՝ քննարկել Եվրոպայի խաղաղության, անվտանգության ու համագործակցության, քաղաքական ու ռազմական լարվածության թուլացման հարցերը:

Համաեվրոպական սույն խորհրդակցությանը Սովետական Միության պատվիրակությանը գլխավորում էր ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը:

Հուլիսի 31-ին շարունակվում էին խորհրդակցության աշխատանքները:

Օգոստոսի 1-ին Եվրոպայի անվտանգության և համագործակցության նվիրված խորհրդակցությունն ավարտում է իր աշխատանքները:

Օրվա երկրորդ կեսին խորհրդակցությանը մասնակից 35 պետությունների քարձրագույն ղեկավարները, «Ֆինլանդիա» պալատի լիագումար նիստում, հանդիսավոր իրադրության մեջ, իրենց ստորագրություններով վավերացնում են խորհրդակցության մշակված եզրափակիչ ակտը, որպես պատմական, կարևոր մի փաստաթուղթ, որը ոչ միայն Եվրոպայի մայրցամաքի ժողովուրդների խաղաղության, անվտանգության և լարվածության թուլացման ամուր ու հուսալի հիմքերն էր դնում, այլ նաև հանդիսանում էր կարևոր մի ավանդ ընդհանուր խաղաղության ամրապնդման գործում ողջ աշխարհում:

Եզրափակիչ սույն պատմական ակտը սկսվում է «Եվրոպայի անվտանգության վերաբերող հարցեր» ղեկլարացիայով, որտեղ սահմանվել

են այն սկզբունքները, որոնցով մասնակից պետությունները առաջնորդվելու են իրենց փոխադարձ հարաբերություններում:

Սույն եզրափակիչ փաստաթուղթը ունի մեծ տնտեսության, գիտության, տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության վերաբերող բաժիններ, ինչպես նաև համագործակցություն այլ բնագավառներում (տրանսպորտ, տուրիզմ, փոխանակումներ մշակույթի, կրթության, ինֆորմացիայի):

Փաստաթուղթը բովանդակում է նաև մարդասիրական և այլ բնագավառներում համագործակցելու բաժիններ, այդ թվում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, ներառյալ մտքի, խղճի, կրոնի և համոզմունքների ազատության հարգումը:

Փաստաթղթի եզրափակիչ բաժինը վերաբերվում է խորհրդակցությունից հետո արվելիք քայլերին:

Եվրոպայի և բովանդակ աշխարհի խաղաղասեր, բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ, ժողովուրդներ, ինչպես նաև քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու բոլոր կրոնները խանդավառությամբ, երախտագիտությամբ և հսկայական ուշադրությամբ ընդունեցին Հելսինկիի խորհրդակցության գումարումն ու նրա արդյունքները որպես շրջադարձային պահ պետությունների հարաբերությունների ժամանակակից տարեգրության մեջ, որպես լավագույն և մարդկային փոխհարաբերությունների նոր օրենսգիրք:

Այո՛, մարդկությունը կարո՛ղ է և պետք է ապրի առանց պատերազմների:

Դեռ մարդկանց գիտակցության, նրանց մտքերի և զգացմունքների մեջ կենդանի են I և II համաշխարհային պատերազմների ողբերգություններն ու սարսափները:

Այո՛, մարդկությունը չի կարող երբեք մոռանալ անցյալի այդ ոճիրներն ու ցեղասպանությունները:

Պատերազմը ոճիր է Աստծու դեմ, երկնքի դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկության վսեմ ու ազնիվ իդեալների դեմ:

«Ուխտ իմ որ ընդ մեզ, ուխտ կենաց եւ խաղաղութեան»... ահա թե ինչու ոչ միայն Ի դարի համաշխարհային երկու պատերազմների արյան, փոթորիկների ու հրդեհների միջով անցած սերունդների, այլ նաև ետպատերազմյան շրջանում խաղաղության և շինարար, արդյունավետ աշխատանքներում հասակ առած Եվրոպայի նոր սերունդների համար Հելսինկիի եզրափակիչ ակտը պատմական, վճռական նշանակություն ունի: Հելսինկիի համաժողովը արտահայտեց աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների, կրոնների, դավանանքների ակնկալիքները, սպասումները, լավագույն ապագայի հույսը և հանդիսացավ կարևոր ավանդ համընդհանուր խաղաղության ամրապնդման գործում:


Ահա թե ինչու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1975 թվականի օգոստոսի 3-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում, Իր պատմական ու գեղեցկահիշուս խոսքի մեջ, հանուն Հայց. առաք. եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, միախառնությամբ ու ուրախությամբ ողջունում էր Հելսինկիի համաժողովը, ուր «Հռչակվում են փրկարար ու մարդասիրական վեհ սկզբունքներ, որոնք պետք է ուղեցույց հանդիսանան հետ այսու, միջազգային կյանքում... Խաղաղ լուծում բոլոր ազգամիջյան և միջպետական հարցերի, ոչ թե ուժի իրավունքով, այլ իրավունքի ուժով, արդար իրավունքի ուժով... Որպեսզի Եվրոպայի և աշ-

խարհի խաղաղությունն ու անվտանգությունը երբեք չխանգարվեն և ժողովուրդների միջև տիրի խաղաղ գործակցություն ու համերաշխ գոյակցություն»:

Այս մտածումների լույսի տակ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Հայոց Հայրապետի «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» Ալեուարանի բնաբանով բովանդակակից խոսքը:

Ա. Հ.





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՀԵԼՍԻՆԿԻՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԱՎԱՐՏՄԱՆ ԱՌԹԻՎ

(1975 թ. օգոստոսի 3-ին, Մայր տաճար)

Հանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբո. Ամեն:

«Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Սիրելի հաւատացաւներ, դուք անշուշտ հիշում եք այս խոսքերը, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», խոսքեր, որոնք երգվեցին երկու հազար տարիներ առաջ երկնքի հրեշտակների կողմից, այն սուրբ պահին, երբ մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս ծնվում էր Բեթղեհեմում:

Ս. Ավետարանը պատկերավոր կերպով և հուզիչ, պատմում է այդ տեսարանը, որ բացվում է այն ժամանակ ապրող մարդկանց հայացքի առաջ: Այդ աստվածային ծնունդի պահին, երկինքը բացվում է և բարձունքից լրսվում են հրեշտակների ձայները, որոնք երգում էին հաղթական. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այդ պատգամով ծնվեց մեր Տերը և Փրկիչը Հիսուս, այդ պատգամը քարոզեց Նա իր կյանքի ողջ ընթացքում:

Աստուծո բոլոր պատգամների և մեծ սկզբունքների գերագույնը հանդիսացավ միշտ սիրո և խաղաղության պատգամը ուղղյալ մարդկանց և ժողովուրդներին: Որովհետև այդ դարաշրջանում, երկու հազար տարիներ առաջ, մարդիկ և ազգություններ շատ անգամ տառապում էին այլ և այլ անարդարությունների, հալածանքների, բռնությունների և պատերազմների հետևանքով: Մարդիկ ծարավի էին իրապես հոգւոյ և կյանքի խաղաղության, ծարավի էին արդարության, ծարավի էին մարդասիրության: Հիսուս աստվածային այդ պատգամները, քաղցրությամբ և հեզությամբ բաշխեց բոլոր մարդկանց անխտիր:

Եվ, երբ Նա ինքն էլ հալածված և խաչված, բաժանվում էր երկնային կյանքից, իր վերջին կտակը եղավ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»: Այսպիսով մարդկության Փրկիչը Հիսուս, խաղաղության պատգամով ծնվեց և խաղաղության պատգամով իր աչքերը փակեց, այն երազանքով, որ այդ գաղափարները երկրի վրա իրականություն պիտի դառնան մի օր, կյանքի պիտի կոչվեն մարդկային հասարակության և ազգամիջյան կյանքի ճանապարհի վրա:

Սիրելի հավատացյալներ, Քրիստոսի սուրբ եկեղեցին հավատարիմ մնաց իր մեծ վարդապետի այս պատգամին և միշտ, հարատև կերպով, նույն աղոթքը մրմնջեց. «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մինչև այսօր էլ, մեր սուրբ եկեղեցին, Հայաստանյայց առաքելական եկեղեցին իր ամենօրյա աղոթքների մեջ երբեք չի մոռանում աղոթել խաղաղության և մարդկանց միջև հաճության համար:

Դուք երևի այսօր կարող եք Մեզ հարց տալ թե այսպիսի քարոզ դուք լսում եք հատկապես Ծննդյան տոնի առիթով, այսինքն այն օրը, հունվարի 6-ին, երբ մեր եկեղեցին փառաբանում է ծնունդը Քրիստոսի: Սակայն, այսօր սիրելի հավատացյալներ, այս նույն բնաբանը ընտրեցինք Մենք, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», որովհետև հենց մեր օրերին, սրանից երկու-երեք օրեր առաջ, միջազգային մեծ մի իրադարձություն տեղի ունեցավ, միջազգային մի վեհաժողով գումարվեց Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում, որտեղ մասնակցեցին Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի 35 պետությունների մեծ ղեկավարները:

Այդ օրերին բոլոր այս պետությունների առաջնորդները խոսք առին և արտահայտեցին իրենց կամքը խոր համոզումով և վճռականությամբ, իրականացնելու Եվրոպայի մեջ և աշխարհի վրա խաղաղության և ժողովուրդների բարեկամության և անվտանգության սկզբունքները: Մենք պիտի ասեինք, քրիստոնեական վեհ պատգամներն էին, որ այսօր հռչակվեցին նաև պետությունների բարձր այդ համաժողովի մակարդակի վրա: Երեսունհինգ պետությունների առաջնորդները հուզիչ և գեղեցիկ խոսքերով վեր առին անհրաժեշտությունը խաղաղության և անվտանգության պաշտպանման Եվրոպայի և ամբողջ աշխարհի մեջ:

Նրանց խոսքերը երևի դուք կարդացած կլինեք թերթերում, լսած կլինեք ռադիոներից, հեռուստացույցից: Մենք այդ բոլորին չենք ուզում անդրադառնալ: Մասնակցող պետությունների ներկայացուցիչները վերջում ստորագրեցին մի փաստաթուղթ, մի պատմական կարևոր փաստաթուղթ, որով արտահայտեցին իրենց հավաքական կամքը պահպանելու և աշխատելու որպեսզի Եվրոպայի և աշխարհի խաղաղությունը և անվտանգությունը երբեք չխանգարվեն և ժողովուրդների միջև տիրի խաղաղ գործակցություն և համերաշխ գոյակցություն:

Եթե մի քանի խոսքով կամենանք արտահայտել այդ վեհաժողովի արդյունքները, կարող ենք ասել, որ Հելսինկիում հռչակվեցին երեք հիմնական սկզբունքներ.

ա. Խաղաղ գոյակցություն ազգերի և պետությունների միջև.

բ. Խաղաղ գործակցություն ազգությունների և պետությունների միջև.

գ. Խաղաղ լուծում, խաղաղ ճանապարհներով լուծում այն բոլոր հարցերի, որոնք կան, կամ կարող են լինել ազգությունների և պետությունների միջև:

Խաղաղ լուծում բոլոր ազգամիջյան և միջպետական հարցերի, ոչ թե ուժի իրավունքով, այլ՝ իրավունքի ուժով, արդար իրավունքի ուժով: Ահա սիրելիներ, սքանչելի երեք մեծ սկզբունքներ, որոնք թե՛ աստվածահաճո են, թե՛ բարոյական և թե՛ մարդասիրական:

Մենք վստահ ենք, որ այս օրերին համայն մարդկությունը և հատկապես Եվրոպայի ժողովուրդները, ապրեցին ուրախության և խանդավառության պահեր:

Բոլոր մեծ և փոքր ազգությունները երջանիկ պիտի լինեն հետագային,

երթե այս սկզբունքները իսկապես կյանքի կոչվեն, և Մենք հույս ունենք, որ այդպես կլինի:

Մեր ժողովուրդն էլ, հայ ժողովուրդը, շահագրգռված է կենսականորեն աշխարհի խաղաղության պահպանման և խաղաղ գործակցության և ազգամիջյան հարցերի արդար և խաղաղ լուծման սկզբունքներով:

Մեր ազգը անցյալում, ինչպես գիտեք, շատ տառապած է և զոհված և նահատակված՝ տարբեր-տարբեր պատերազմների ընթացքում, դարեր շարունակ: Բավական է միայն հիշել առաջին համաշխարհային պատերազմի շրջանը, երբ 1915—16 թթ. հայ ժողովրդի գրեթե կեսը՝ մոտ 2 միլիոն հայ ազգաբնակչություն Արևմտյան Հայաստանի, զոհ գնաց Օսմանյան Կայսրության կողմից ի գործ դրված ցեղասպանության ծրագրին:

Երկրորդ համաշխարհային պատերազմը ևս մեծ վտանգ հանդիսացավ նաև մեր ազգի համար, այս անգամ հիտլերյան նացիստական ահավոր պատերազմի սանձազերծումով:

Փառք Աստուծո, սակայն, փառավոր հաղթանակով վերջացավ այդ պատերազմը, և Հայաստանը ևս Սովետական Միության բոլոր ժողովուրդների և հաղթող պետությունների հետ միասին. դիմեցին նոր և շինարար կյանքի:

Ահա թե ինչու մեր փոքրիկ ժողովուրդը և՛ ի Հայաստան, և՛ ի սփյուռս աշխարհի այսօր երջանիկ է և մխիթարված, որ այսպիսի բարձր մակարդակի վեհաժողովում հռչակվում են փրկարար և մարդասիրական վեհ սկզբունքները, որոնք պետք է ուղեցույց հանդիսանան հետ այսու, միջազգային կյանքում:

Մենք մխիթարված ենք նաև այն իրողությամբ, որ մեր պետությունը՝ Սովետական Միությունը, ամենաառաջավոր դիրքերից մեկը գրաված է միշտ՝ խաղաղության և ժողովուրդների բարեկամության պայքարի ճանապարհին:

Իրողություն է պատմական, որ Սովետական Միությունը ծնունդ առավ խաղաղության սկզբունքով, ժողովուրդների բարեկամության սկզբունքով:

Սովետական Միությունը իր ողջ պատմության ընթացքում այս սկզբունքները պաշտպանեց հետևողականորեն, և այսօր էլ Հելսինկիի ժողովում հանդիսացավ գլխավոր կազմակերպիչ ուժը:

Այն ճառը նշանավոր, որ արտասանեց մեր պետության ղեկավարը այնտեղ, անշուշտ որ ուժեղ և քաղցր հնչեց ո՛չ միայն մեզ բոլորիս՝ սովետական քաղաքացիներին, այլ նաև խաղաղության ծարավի ողջ մարդկության, բոլոր ժողովուրդների համար:


Մենք երախտապարտ ենք մեր պետության ղեկավարներին՝ նրանց այս խաղաղասիրական և մարդասիրական քաղաքականության համար:

Եվ կադրերն առ Աստված, որ Տերը նեցուկ կանգնի բոլոր խաղաղարար ուժերին աշխարհի վրա, որպեսզի մեր երկրագնդի բոլոր պետությունները, բոլոր ազգությունները ձեռք-ձեռքի տված այս միևնույն արևի տակ ապրեն խաղաղ և համերաշխ գործակցությամբ, ամեն մեկը իր նպաստը բերելով ընդհանուր առաջընթացին, այս ձևով բոլորը մեկ արժանի դառնալով բարօրության, երջանկության:

Թող Տերը միշտ մնա զորավիգ և մարտակից բոլոր ա՛յն ուժերին, ա՛յն պետություններին, ա՛յն ժողովուրդներին, որոնց կյանքի, աշխատանքի և պայքարի դրոշի վրա գրված կա.

«Յերկիր խաղաղությւն և ի մարդիկ հաճությւն»:

Այժմ և հավիտյան: Ամեն:



ՄԱՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՊՐՈՖ. ԷՂՎԱՐԴ ՈՒԹՈՒՋՅԱՆԻ (1906—1975)

1975 թվականի հուլիսի 28-ին Փարիզում, իր բնակարանում, 69 տարեկան հասակում, վախճանվեց անվանի և վաստակավոր ճարտարապետ ու քաղաքաշինարար, Փարիզի կերպարվեստի, ճարտարապետության, մեխանիկայի և էլեկտրականության մասնագիտական քարձրագույն դպրոցների պրոֆեսոր-դասախոս, ճարտարապետների ամերիկյան ինստիտուտի պատվավոր անդամ, Ֆրանսիայի ստորգետնյա քաղաքաշինության համակարգող ու հետազոտող խմբի հիմնադիր և գլխավոր քարտուղար, «Լը Մոնդ սուտերեն» ստորգետնյա քաղաքաշինությանը և տեխնիկային նվիրված հանդեսի հիմնադիր-տնօրեն, Պատվո լեգեոնի ազգային շքանշանի ասպետ պրոֆ. Էդվարդ Ութոյանը:

Ափյուռքահայ ճարտարապետական միությունը ևս կրեց մեծ կորուստ:

Ճարտարապետ պրոֆ. Էդվարդ Ութոյանը մեծ վաստակ ունի նաև փյուռքի մի շարք հայկական եկեղեցիների կառուցման շնորհակալ աշխատանքներում, որոնց համար արժանացել է Հայոց Հայրապետի քարձր գնահատությանը և օրհնությանը՝ ստանալով ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշան:

1975 թվականի հուլիսի 18-ին Հայոց Հայրապետը Մայր Աթոռից «Իր օրհնությունը, ջերմ գնահատանքը և անվերապահ հիացումն» էր հայտնում վաստակաշատ ճարտարապետին՝ նրա մահից տասն օր առաջ:

Այժմ հանգուցյալի հիշատակի առաջ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրու-

թյանն ենք ներկայացնում Հայոց Հայրապետի վերոհիշյալ գեղեցիկ և բովանդակալից օրհնության նամակը՝ որպես քարձրագույն վկայությունը ճարտարապետ Էդվարդ Ութոյանի տաղանդի, վաստակի ու մաշակի:

«Մեծահարգ տիար ճարտարապետ,

Խոր հուզումով կարդացինք Ձեր 5 հունիս 1975 թվակիր ձեռագիր նամակը, տեղյակ դառնալե հետո թե առողջական պատճառներով ստիպված եք անկողնո ծառայել: Ծառ, շատ կցավինք որ այսպիսով չկարողացաք ներկա գտնվիլ այն հոգեգմալ արարողությանը և հանդիսությանը, որոնք տեղի ունեցան բացառիկ շուքով՝ թե՛ Պուրսոյի և թե՛ Երուսաղեմի մեջ, ուր հոգեկան մխիթարությունը ունեցանք Մեր ձեռքով օրհնելու Ֆրենկյան գերդաստանի դամբարանը և օծելու սուրբ խորանները ս. Հարության տաճարի, բոլորը սքանչելի արգասիքները Ձեր ճարտարապետական տաղանդին և քարձր մաշակին: Թե՛ Պուրսոյի և թե՛ Երուսաղեմի մեջ Դուք հաջողած եք Ձեր կառուցումներու վրա վավերական կնիքը դնել հայ դասական ճարտարապետության և քանդակագործության հանճարի, մեր օրերուն պատշաճ ոգիով ու լեզվով, ինչ որ բացառիկ արժանիքն է Ձեր ստեղծագործ անձնավորության: Ձեր այս գործերը անկորնչելի արժեքներ են, պարգևված բազմահազարամյա հայ արվեստի գանձարանին:

Ձեզի, մեծանուն վարպետ, Մեր ջերմ գնահատանքը, Մեր անվերապահ հիացումը, Մեր շնորհակալությունն ու օրհնությունը:

Իրապես ցավեցանք որ ի վիճակի չեղաք անձամբ ներկա գտնվելու Պուրսոն և Երուսաղեմ: Սակայն գուցե սխալ չէր ըլլար ըսել՝ թե Ձեր բացակայությամբ իսկ, առավել շեշտվեցավ Ձեր իրական ներկայությունը:

Փարիզ երկու-երեք անգամներ փորձեցինք Ձեզի հետ խոսիլ հեռախոսով, սակայն չհաջողեցանք:

Սիրելի ճարտարապետ, սույն Մեր գրով Ձեզի կմաղթենք շուտափույթ և լիակատար ապաքինում և տևական քաջառողջություն: Տակավին Ձեր ուժերու ծաղկումին մեջ եք: Դուք շատ պետք է ապրիք, և պիտի ապրիք, նոր գործերով փառավորելու համար մեր ժամանակներու հայ արվեստը:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգով եւ

յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ. ամէն»:

Սիրով և օրհնությամբ՝


ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»:

Հանգուցյալի թաղման արարողությունը կատարվել է օգոստոսի 5-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, տ. Գլուտ եպս. Նազաշյանի նախագահությամբ, ի ներկայության հայ և ֆրանսիացի հոծ բազմություն:

Հանգուցյալ ճարտարապետ պրոֆ. Էդվարդ Ութուջյանի անյունն ամփոփվել է Փարիզի Թիե գերեզմանատանը, նրա ընտանեկան դամբարանում:

Հանգիստ նրա ոսկորներին:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան Ծ. վրդ. Գալքակյանը:

* * *

Հուլիսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մանիս արք. Գալստյանը և քարոզեց «Արդրոց որդոց և թողանց սրբոյն Գրիգորի Լուսաորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկաննի, Գրիգորիսի և Դանիելի» տոնի առիթով՝ «Արմատ ճշմարիտ աստուածային օրհնացն» (Շարական) բնաբանով:

* * *

Հուլիսի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պարգև Ծախբազյանը, ընկերակցությամբ տ. Անանիա արք. Արաքաջյանի, Մոսկվայում մասնակցեց ռուսաց պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ գումարված մեկօրյա խորհրդակցությանը, որին ներկա են եղել նաև Սովետական Միությունում տարբեր դավանությունների պատկանող եկեղեցիների 35 ներկայացուցիչներ, որոնք այս տարվա նոյեմբերին մասնակցելու են Նաչրոքիում եկեղեցիների համաշխարհային խորհրդի Ե համաժողովին:

Մոսկվայի սույն խորհրդակցությանը մասնակցել է նաև Ե. Հ. Խ.-ի Միջազգային գործերի հանձնաժողովի նախագահ, շվեդացի դոկտ. Օլլե Դահլենը:

Սույն խորհրդակցությունում ներկաները ծանոթացել են օրակարգի այն գլխավոր հարցերին, որոնք առաջադրվել են Ե. Հ. Խ.-ի Միջազգային գործերի հանձնաժողովի կողմից բնութային առնվելու համար Նաչրոքիի համաժողովում:

Խորհրդակցությունում ընթերցվել են նաև մի շարք գեկուցումներ և ընդունվել համապատասխան որոշումներ՝ բոլոր միջոցներով նպաստելու միջազգային լարվածության թուլացմանը և դրա հետագա կայունացմանն ու խորացմանը:

* * *

Հուլիսի 26-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

* * *

Հուլիսի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Տիրան արք. Կյուրեղյանը:

* * *

Հուլիսի 29-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց ս. Գեղարդ վանք, ուր ընդունվեց վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանի և վանական միաբանության անդամների կողմից:

Հայոց Հայրապետին ողջկցում էին Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերադյարյանը, տ. Ա.

դան լիդ. Բալիոզյանը, տ. Գարեգին և տ. Տիրան արեղաները, տ. Արտակ քահանան և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Բեհյալյանը:

Հայոց Հայրապետն առաջնորդվում է տաճար, ուր, Իր աղոթքն անելուց հետո, այցելում է վանական հաստատություններ:

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Նորին Սրբության ուղեկիցները և Դիաքանությունը:

Օգոստոսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գարեգին արք. Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզեց խաղաղության մասին (Սույն քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 85):

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ հուլիսի 28-ին Փարիզում վախճանված հայտնի ճարտարապետ և ս. Գրիգոր Լուսավորչի Ա. կարգի շքանշանակիր պրոֆ. Էդվարդ Ութուջյանի հիշատակին:

Օգոստոսի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր/ ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը մեկնում է Ղրիմ՝ Գոռգուֆի կառավարական առողջարանում հանգստանալու համար:

Նորին Սրբությանն ուղեկցում էր վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սեբադյանը:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են տ. Հուսիկ և տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանները, պաշտոնեությունը, Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները:

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Միևնախորհրդի սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Օգոստոսի 10-ին, կիրակի.—Բարեկենդան ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը:

Օգոստոսի 17-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադեոսյանը:

Հավարտ ս. պատարագի, լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանի նախագահությամբ, կատարվում է «օրհնութիւն խաղողոյ»:

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի «կատարի հոգեհանգիստ վասն համօրէն մեռելոց»:

Օգոստոսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ արք. Մուշեղյանը:

Օգոստոսի 25-ին, երկուշաբթի.—Այսօր, ժամը 17-ին, Մայր տաճար է այցելում ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Վոլտեր Զոն Ստեսելը՝ իր տիկնոջ հետ:

Դեսպանին ուղեկցում էին նաև դեսպանության առաջին քարտուղար Իոսիֆ Պրեսելը և երրորդ քարտուղար Միխայիլ Լեմոնը:

Մայրավանքի գլխավոր դարպասի առաջ մեծահարգ տեր և տիկին պրն. դեսպանին և նրան ուղեկցող անձանց դիմավորեց և, հանուն Հայոց Հայրապետի, բարի գալուստ մաղթեց Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադեոսյանը:

Մայր տաճարի դռան առաջ լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը, շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով, դիմավորեց մեծահարգ հյուրին և նրան ընկերակցող անձանց, առաջնորդեց Մայր տաճար և բացատրություններ տվեց նրանց Մայր տաճարի պատմության մասին՝ որպես հայ ժողովրդի հոգևոր, եկեղեցական ու մշակութային կյանքում Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետության պատմական ու հնագույն կենտրոնի, որտեղ էլ 301 թվականին ս. Գրիգոր Լուսավորիչ Հայոց Հայրապետի առաքելական ջանքերով Հայաս-

տանը այդ ժամանակվա աշխարհում առաջին երկիրը հանդիսացավ, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, Տրդատ Գ Արշակունի թագավորի օրոք:

Այնուհետև մեծահարգ հյուրն առաջնորդվեց Վեհաբան՝ իր ողելիցներով, որ նրան, հանուն Հայոց Հայրապետի, դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպ. Բերքերյանը:

Այստեղ, ջերմ զրույցից և հյուրասիրությունից հետո, ՍՄՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպանը և տ. Արսեն սրբազանը հուշակվերներ փոխանակեցին, որից հետո պ. դեսպանը հրաժեշտ տվեց Մայր Աթոռին և միաբանությանը լավագույն տպավորություններով:

Օգոստոսի 26-ին, երեքշաբթի օրը, ԱՄՆ-ի պրն. դեսպանն իր ողելիցներով այցելեց ս. Գեղարդ վանք, որ վանահայր տ. Վահան եպ. Տերյանը հարգալիք մեծարանքով ընդունեց բարձրապատիվ հյուրին, հանուն Հայոց Հայրապետի, և բացատրություններ տվեց միջնադարում Հայաստանի այս հոգևոր-մշակութային կենտրոնի գործունեության և եկեղեցական հաստատությունների ճարտարապետական բացառիկ առանձնահատկությունների մասին:

Պրն. դեսպանն այստեղ ևս վանահորը և միաբանությանը հրաժեշտ տվեց անմոռանալի տպավորություններով:

Օգոստոսի 29-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 15-ին, Մայր Աթոռ վերադարձավ Հայոց Հայրապետը՝ Գոռգուֆի (Դրիմ) առողջարանում շուրջ մեկ ամիս հանգստանալուց հետո՝ ողելցությամբ տ. Գևորգ եպ. Սերայդարյանի:

Միմֆերոպոլում Հայոց Հայրապետին, հանուն ռուսաց ամենապատիվ Ս. Պիմեն Սրբազան Պատրիարքի, դիմավորում և ճա-

նապարհում է շրջանի տ. Առնոյի արքեպիսկոպոսը:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը:

Հայոց Հայրապետին այստեղ բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Մայր տաճարում իր աղոթքը կատարելուց հետո, ողջ միաբանությունը Վեհաբանում աջահամբույրով կրկին բարի գալուստ է մաղթում իր սիրելի Հորը՝ արժանանալով Նրա հայրական օրհնությանը:

* *

Օգոստոսի 30-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհապատ Հայրապետին այցելեց Հայաստանում հյուրընկալվող ԱՄՆ-ի ազգային արխիվի տնօրեն դոկտ. Ռոտսը, որին ընկերակցում էր Հայկական ՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր արխիվային վարչության պետ պրոֆ. Աշոտ Հարությունյանը:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

* *

Օգոստոսի 31-ին, կիրակի.—Տօն գիտի գոտոյ սրբուհոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մասիս արք. Գալստյանը, և քարոզեց տ. Արսեն եպ. Բերքերյանը՝ «Եկաք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ եւ հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհապատ Հայրապետը:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց Հայրապետի ողջունի խօսքը Լամբերտ պալատում Քենտրբերիի արքեպիսկոպոս Դոմալդ Ֆրեդերիկ Կոզանին	3
Հաղորդագրություն	6

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մեկնում Լոնդոն	8
Վեհափառ Հայրապետը Ֆրանսիայում	17

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ, ՊԱՐԳԵՎ ԾԱՀԱԶՅԱՆ

Հայոց Հայրապետը սուրբ երկրում	28
Վեհափառ Հայրապետի ժամանումը Երուսաղեմ	37
Վեհափառ Հայրապետը կրկին Ամմանում	70
Հայոց Հայրապետը կրկին Փարիզում	73
Հայոց Հայրապետը Մոսկվայում	75
Հայոց Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ	77

Ա. Հ.

Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանին	79
Հանուն Եվրոպայի խաղաղության և անվտանգության	82
Հայոց Հայրապետի խոսքը՝ Հելսինկիում Եվրոպայի անվտանգության և համագործակցության համաժողովի ավարտման առթիվ	85
Ման ճարտարապետ պրոֆ. Էդվարդ Ութուջյանի	88
ՄԱՅՐ ԱԹՐՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր	90

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine Arménie, URSS

Հանձնված է արտատրության 29/VII 1975 թ.: Ստորագրված է տպագրության 5/IX 1975 թ.:
 Ելագրական 5,75 մամուլ + 20 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 566

Մայր Աթոռ ա. Էջմիածնի տպարան, 1975 թ.